


ԲԱԴԱ ԳԻՒՂԻ ԱԻԵՐՈՒՄԸ



(Արտատպած «Արարատ» ամսագրից)



Վ. Ա. Գ. Ա. Բ. Շ. Ա. Պ. Տ.
Տպարան Մայք Աթոռոյ Ա. Էջմիածնի
1910

1971 թ.

ԲԱԴԱ ԳԻՒՂԻ ԱԻԵՐՈՒՄԸ

(Աքտաւուսկան «Աքտաբառ» ասսազըլից)։



ՏԱՅԱՅԱ

Ա. Ա. Գ. Ա. Բ Շ Ա. Պ Ա. Տ

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

1910

ԲԱԳԱ ԳԻՒՂԻ ԱԿԵՐՈՒՄԸ

Ա. Զ. Դ.

1905 ու 1906 թուականների Հայ-Թրքական ընդհարումները յանկարծակի ծնունդ չեին, ոյլ հասարակային կազմակուծութեան և քաղաքական կեանքի արտայայտութիւնները: Թրանց լուսաբանելը ապագայ պատմաբանի դործն է որ ներկայ սերնդից կպահանջի կարելոյն չափ շատ պատմական նիւթերի մատակարարումն: Այժմ, երբ այդ չարաբաստ ընդհարումները վերջացել են և մտքերը հանդարտել՝ մեզ, ականատեօներիս և ժամանակակիցներիս վերաց պարտք կայ անկողմնապահութեամբ ամփոփել և գասաւուել նիւթերը ապագայ պատմչի գործը զիւրացնելու հոմար:

Զեռնաբկելով մի շաբթ ընդհարումների ժողովածու՝ աշխատառութեանս հեղինակը այցի առաջ է ունեցել վերսիշեալ նպատակը:

Ներկայումս տալով Բաղայի աւերման պատմութիւնը, հեղինակը հարկ է համարում ծանուցանել, որ նա իւր նիւթերը ժողովին է 1906 ու 1907-ին անմիջապէս այն՝ ոչ սակաւաթիւ, արժանահաւատ անձինքներից, որոնք ենթարկուել են ազգակին ու ականատես են եղած:

Նիւթերը արձանագրուած են համեմատական վերստուգութեամբ և կարելոյն չափ անկողմնապահութեամբ.

Հեղինակ

1909 թ. Յուլիս. Բագու.



ԳՐԱԴԱՎՈՐԻ ԳՐԱԴԱՎՈՐ ԱՎԱՐԱՐ

Տ Պ Ա

Անոքական մասնաշտեղութեան հայումաժուռակ առ 1761 ու 1770
ամսարանի հետափառապես առ 1771 ու 1772 ամսարանի դրան
շահմատ արքայութեան պահանջ մայակը ու ամսանաշտեան
աշխատ ու կ անգա անտառապես լուսարան պահանջաւու ամսան
աշխատ մայակը առ 1773 պահ այսպիսաք ամսանաշտեան ամսա
աշխատ առաքապահ վայ ու ի առ 1774 ամսանաշտեան պահ պահանջաւու
ամսան պահ այս պահանջ պահը ամսանաշտեան ամսա
աշխատ ամսան պահ պահը ամսան պահանջ ամսանաշտեան ամսա
աշխատ պահը պահը ամսան պահանջ պահը պահը պահանջ
պահը պահը

• Առաջ առ առ Առ առ

Եկա պահանջ պահը պահը պահը պահը



Բաղա զիւղի դիրքը. Բաղի ձորը. Խօսկան Քարը. Բիճաները.
Գիւղական նանապարհները. Եկեղեցին. Ժողովրդի կարողութիւնը.

Դիւղանենեսուրեան նիւղին. Արմեսներ. Լուսաւորութիւն.

Գանձակ քաղաքից գէպի արևմուտք, Գանձակի գաւառում,
աշխարհագրական $16^{\circ} 26'$ հիւսիսային լայնութեան և $41^{\circ} 13' 30''$
արեւելեան երկայնութեան կէտում զբուած է Բագա
գեւզը մի լայնանիստ, չափաւոր բարձրութեան հարթավայրի վե-
րայ, ոչ կոչւում է «Աղջարակ»: Գիւղի արևմտեան կողմում՝ ձորի
մէջ հոսում է գէպի հիւսիս, գէպի Կուր գետի աւազանը Բա-
գա փոքրիկ գետակը, որ ապա ընդունում է Զագ եւ ամի
գետ անունը:

Երկի փշոտ մակերեսյթը տուտինանաբար սարտլանջի փսխ-
ուելով՝ իջնում է գիւղից գէպի գետակը՝ նախ կազմելով մի
խոր ձոր Խաղնի ձոր—անունով, յետոյ՝ գետակի աջափնեայ
լայնաաբարած գաշտի երկարութեամբ տարածւում են գիւղա-
պատկան խաղողի և թթենիների բազմաթիւ այգիները, իսկ
գետի վրայ տասնումէկ շարէշար ջրազացներ:

Գետակի ձախ ափում՝ Գիւղջա (ցից) սրբածայր բարձր ըլու-
րի ստորառում զետեղուած է նախկին, հին դարերի Բագա
գեւզը, ուր մշտապէս ընակւում են բազացի մի քայլ գեր-
գաստաններ՝ իբրև շերտամապահներ և անտանապահներ և այդ
պատճառով հին գիւղն աւելի նման է բինայի:

Բաղա գետակի ձորը երկու կողմից էլ ժայռու է, զժուա-
քամատչելի, շատ տեղ անցարմար անցուզարձի ու անտառով
ծածկուած: Մի տեղ գետակի հոսանքը անհամար ժամանակների
ընթացքում քեզել, տաշել մաշել է մի ահագին ժայռ, կազմելով
այդ տեղ մի ջրվէժ: Կիսուած, խորացած ժայռի ուղղահայեաց
պատերն անդրագազնում են մարզու ձայնը և այգ պատճա-
ռով անդական ժողովուրդը մկրտել է նրա անունը Խօսկան
քար: Նա այգիներից վերե է:

Անտանապահութեան համար յարմարին աեղերը Բագա-
յում, նպինպէս և այլ գիւղերում, կոչւում են Բինայ: Իւր
շը շակացքում՝ Բաղա գիւղն ունի մի քանի այգպիսի ընաներ
իրանց գոմելով, տներով, և անտանապահութեան համար կա-

քեսը յարմարութիւններով։ Այսպէս օրինակ Խոսկան քարի մօտ, Սուրբ Մինասի մատուռից, ըստ բագացոց Մանդառու, ոչ հեռու կան Կապի գոմեր։ Մի այլ կողմի վերայ գրուած է Քետման գար ըինան, որ միանում է Բաղա գիւղի հետ Դոխէ ուղարկուածամա (Խննը կեռման) կոչուած ճանապարհով Դիկ ջար ըլուրի լանջով։ Ապա գալիս է Արդ—Վալայ (աղջկայ ըերգ) ըինան։ Սա մի փոքր բերդ է քարաժայուի գագաթին, աղեւսէ պատերով, աւերտե քարաշէն տներով, քայլայուած ջրամբարով, որ իր ջուրը կաւէ Խողովակներով ստանալիս է եղել Յամաք ձոր անուն տեղից Անձզարի քու գեղեց կատեսիլ անտառի մօտ Քետմանդար ըինայի մերձաւոր սահմանում։

Սոյն այս Քետմանդարն ընկած է Բաղա գիւղի արևմտեան կողմում և ունի իւր շուրջը լայնասիրտ վարելահողեր—վարդապետի հողեր—այժմ պետական, իսկ Երբեմն ոււանդաբար Խորանաշատ մենաստանին պատկանող, որ մի կողմից տարածւում է մինչև Կալքար արքունի անտառը, իսկ միւս կողմից միանում է ընդարձակ գաշտի հետ, ուր սփռուած են հինաւուրց հանգստարաններ և մատուաներ և որանց մէջ կանգնած է սաղարթալից, հաստարմատ գարաւոր կաղնի ծառ՝ իրեւ ուխտի և տօնախմբութեան տեղի Բագայի ընակիչների համար։

Գիւղից գէպի արևելք սփռուած են բագացոց այգիները, պհեզներն (պահէզ—բոստան) ու բինաները. այդ տեղից հոսում է գիւղի ազգեւրներց կազմուած մի առուակ Դիքջի ծորով մինչեւ Զառչի ըինան, 4-5 վերստի վերայ, որ միանում է գիւղի հետ իրիցի ճամփով։

Գիւղի հիւսիսային կողմում բացուած լայն գաշտը հեռուից երեցնում է Զագեամի շրջակայքը, Բագու Թիֆլիզ երկաթուղու գիծը, Կուր գետի աւազանը։ Գիւղից գէպի երկաթուղի Փալան թեօքան գաշտավայրով գուստում է լայն ճանապարհը, որ կոչւում է Մօլլա—Մանսուր, Երկու կողմից ունենալով Մումուրթտու բարձր սարը հին դիւզատեղով և հին հանգստարանով, Բազերի գլուխ սարը, Թաթառլու թրքարնակ գիւղից, Գեօգդաշ քարաժայուր և Գոմեր տձոր ըինաները։

Գիւղի շուրջը, բացի վերոյիշեալ տեղերը, տարածւում են նաև ընդարձակ լայնածաւալ վարելահողեր, խոտհարքներ, արօտատեղեր, որոնք լի ու լի հսարաւորութիւն են տալի բազացոց պարապել ամենահարուստ անառնապահութեամբ, առանց երեկք բարձրանալու ամաբային արօտատեղեր։

Նոր կամ մեծ Բաղան Լըզար կի բարձրութեան վերայ

հազմուել է մօտ երկու դար առաջ, ըստ որում ընտկիչները
բազմանալով թուղվ ու բարօրութեամբ՝ չէին կարող զետեղուել
ձորի հին, սահմանափակ գիւղում, ուստի թնականաբար պէտք է
տեղափոխուէին այժմեան յարմար տեղը, որ տարածութեամբ,
բարձրագիր հարթութեամբ, աղբիւրների տուառութեամբ և այլ
առաւելութիւններով աւելի համապատասխանող է:

Գիւղի մէջ գործածական աղբիւրները որանք են.

Ա. Ե Ր Ե աղբիւր կամ Ն ա հ Ք ա զ Ե, որ շնորհական
ու տաշտով և տալիս է երեք մատաչափ հասառութեան ջուր:
Արա մի մասը բազացի հանգուցեալ Արշակ ներառեանցն իւր
ծակով աարել կախել է գիւղական եկեղեցու մօտ հասարա-
կաց գործածութեան համար. 1894 թուականի յունուարի 6-ին
ոյն աղբիւրի վրայ կազմել է Պօղոս ներառեանցը հետեւալ
արձանագրութիւնը:

Ա Ա Յ Ո աղբիւր յորդ և մշտաբուղիս,
որ է քաղցրիկ յոյժ սառնորակ,
նու իրում եմ իմ հայ եղբարց
Բաղա գիւղիս քրանափառակ
որ ես Պօղոս Ներառեանցո
անուամբ Արշակ ներառեանցի,
նորտ և իմ ոհպհականից
այս յիշտառակը կանգնեցի.
Հանգուցելոյն ձեր մողթանըում
ընթերցողաց յիշել խնդրեմ,
արժան լինել անանց կեանքում
նոյնպէս և ձեղ ձեր անցելոց

18⁶ 94 ամիս:

Ա. Ա. Ա Հ ա ն ի աղբիւր, որ բաւականին բարակ է:

Մ ու սի աղբիւր կամ Ֆիջի աղբիւր, փայտէնաւա-
կով հոսում է երեք մատաչափ հասառութեամբ: Աա իւր համե-
զութեամբ ամենից առաջնակարգն է համարւում:

Ն ե ր ա տ ի ն աղբիւր շնորհած է նաւական, բայց ջուրը
բարականու է:

Բնական միւս բերքերից յայտնի են ներկի համար պիտա-
նացու կարմիր կաւ գիւղի հարաւային կողմում. ուղիտակ
կաւ՝ նովերայ քօլում շէկ հողերի գլխին, գիւլ (ճարպա-
նան կաւ.) որ թուրք աղպաբնակութիւնը գործ է ածում սապ-
նի փոխարէն, քարահանք՝ շինութեան համար: Ամենագլխաւորը
գիւղի հիւսիսային կողմում բազալտի քարահանքն է, որից

ստացւում են պատուական ջրադաշտաբեր: Քարահանքի տեղը
կոչվում է Դարա-թաղ (ուն թաղ):

Անցնենք այժմ՝ գիշեր հասարակաց հարստութեանը և
տնտեսական բարօրութեանը:

Մինչև 1883 թիւը գիշեղական ժամասացութիւնը կատար-
ւում էր հին փոքրիկ եկեղեցում, որի փոխարէն յիշեալ թուա-
կանին հասարակութիւնը յոյն վարպետի ձեռքով, 8000 ռուբլի
ծախքով, շինեց նորը, որ շուտով քանդուեց ու հասարակու-
թիւնն ստիպուած եղաւ փայտէ կարկատանով հինը յարմա-
րեցնել ժամասացութեան: Սակայն սա էլ իսպառ կողոպտուեց
ներկայ աւերման ժամանակ: Թաթար հրոսակները կոտրատել են
խաչկալը, քանդել են բեմը, աւազանը (գանձ գտնելու համար),
տարել են զանգերը, գոները, պատուհանները, անօթեզէնները,
վարագոյրը, քշոցները, բուրգառները, մինչև անգամ դրեանքը:
Վերջներեց, իրեւ կարծես աղետալի օրերը յիշեցնելու, մնա-
ցել է միայն մի ձեռագիր աւետարան քթշրուած, Յոհաննու
աւետարանը, որի յիշարակարանից երևում է, որ Արարատեան
աշխարհի՝ Աղստեռ Նահանգի Տանաղուան դիւղի սազմոսերգու-
քահանայ Կառողարը և իւր եզրոյցը Եկեղեցարք արտագրել են
տուել Յոհաննէս քահանացի ձեռով 1120—1671) հայոց
թուին, Պարսից նահանքի թագաւորի, Յակոբ կաթողիկոսի
և Քնոյց քաջ Հռետոր Մովսէս արքեպիսկոպոսի օրով: Խ. Գասպար
քահանան բարի ցանկութեամբ կտակել է, որ նուիրած այս
աւետարանը, իրեւ յիշարակ, յաւիտեան մնայ Տանաղուան
գիւղի եկեղեցում . . . բայց արժանացիշատակ քահանան կարող
էր արդեօք մտքովն անցկացնել՝ թէ իւր սբրանուէր աւանդը
Տանաղուանից կընկնի Բագա գիւղը և 123 տարի յետոյ պատառ
պատառ կլինի թուրք հրոսակների ձեռքով:

Քաղաքի աւերուած եկեղեցին իւր ծխատէր Մեորով քա-
հանացի միջոցով կարողացաւ ձեռք բերել 1906 թուին Բագ-
ւում, նուիրաբար, մի քանի կարեսը անօթեզէններ, սպաններ,
պատկերներ և զգեստներ: Այսպէս՝ կիւրութիւն Աարգունը
մի արժաթեայ ոսկեզօծ սկիճ, Տիկին Մայելեանը նուիրեց սուրբ
Աստուածածնի մեծագիր պատկեր, Յակոբ Մանգասարեանը՝
իշաշլառ, Մկրտիչ Քալանթարեանն ու իւր եղբայրը—Սուրբ
Գրիգոր Լուսաւորչի մեծագիր պատկեր, Փերագեանցը—մի բուր-
գառ, Բագուայ հայոց եկեղեցին—երեք հատ շուրջառ, երեք
փորուրար և այլն:

Գիւղի շուրջը սփռուած են հին գիւղատեղեր, գեղեղման-
ներ, հողի տակից զուրս են գալի թոնզերներ, կաւէ ամաններ,
զանաղան ուղղութեամբ և խօրութեամբ արքած աղբիւրի

կաւէ խողովակներ, բըռւանոցի և գարցնոցի հետքեր և այլն և այլն: Այս հնութեան հետքերը ցոյց են տալի, որ գարքեր առաջ եղել է այստեղ բնակութիւն և, ով գիտէ, ի՞նչ արհաւելքների է ենթարկուել զանազան ժամանակներում:

Հին շերմաքարերի արձանագրութիւններից մինը, որ եղած ների մէջ ամենամինն է երեսում, գրուած է հայոց Աճի (1020—1571) թուին, կամ 337 տարի մեզնից առաջ: Ակրոս, որ արձանագրութիւնը եղծուած է: Աակայն քարի ճակատին երեսում է հետեւեալ նկարը: Մի կանգնած կին, բաց մազերը մի հիւսով կախուած մէջը վրայ, օղակներն ականջներում, երկրոյն շապիկը կոճկած, որա վրայից կարճ արխալուղը, ուսերին լափշիններ, բազուկներին հադրած է ապարանջան, ձախ ձեռք ծալուած կրծքի վերայ, իսկ աջը մենկած դէպի արձաթեայ սափորը: Սրանից յետոյ գալիս է Գիւլաթը մահարձանը, որ իրքե կանգուն խաչքար՝ բարձրութեամբ 2 $\frac{1}{2}$ արշին, լայնութեամբ մի արշին, կրում է հետեւեալ արձանագրութիւնը: «Անը իսաչո Գիւլաթին և իւր կողակցին, կանգնեցի Առաքը խաչո ևս Ռադագասը ար ու ար ու և Միքայէլ և կազմեցինք սուբը խաչո թվ. Աճի (1062—1613):

Արանից 32 քայլ հեռու երկորդ կանգուն խաչքարը 2 $\frac{1}{2}$ արշին շաբաթութեամբ և 1 $\frac{1}{2}$ արշին լայնութեամբ, արեմուեան ճակատին կրում է «Սուրբ խաչո քարեխոս Սրապինն քահանային և կողակցին Խամբարին. թվին հայոց Աճի (1120—1611): Այն քարի արևելեան ճակատին «Նորհօք ամենալզորին Առտուծոյ ևս Նապլուխանս և որդիքս իմ մելիք Թօնմազ և պարոն Դորիսմազ որդիք պարսն Համբնազարին որդոյ պարսն Խփակին կանգնեաց ի սուբը խաչո յիշատակ որդոց իմաց 8էր Սերապիսնին»: Դիւլաթի անունից ծագում է Գիւլաթը հանգը ըստ առաջարարական և այլն, Գիւլաթը կում էր, Գիւլաթը բինայ և այլն:

Բագայի բարգաւաճումն արտայայտում էր նաև նրա շարէշար՝ խնամքով կանգնեցրած միացարէ և երկյարկանի աներից: Բագայի տների մեծ մասը ուսւու գաղթականների տների նման, ծածկուած էր ծղօառով կամ խոտով, ուստի և զեւրավառնիւթ էր հըգեհուելու և այրուելու: Այդին և այլ շինութիւններ, այն է մարտադներ, գոմեր, շաեմարաններ, խանութներ, մասամաններ և այլն, որոնք յարձակման երեկոյին գոհուեցին հըգեհին:

Ըստ պահանջման կառավարութեան, 1905 թուի մայիսին հաղայի հասարակութիւնը կազմել էր ընակիչների նորագոյն ամենամեծաց ցուցակ, որից երեսում է, որ յիշեալ թուին բազումում եղել է 300 ծուլս, 1388 հոգի արական և 1225 իդական: Իսկ նորաձնունք մինչև նոյն թուի գեկտեմբերի վելջ 100 հոգի

բնդ ամենը 2713 երկու սեռի բնտիկիչ, սրոնց մի մասը մշտական ընակութիւն էր հասաւատել շրջակայց բինաներու մէ: ու Ա օճառ և

Այդ բազմաթիւ ժողովու սպք, շրջապատու ած լինելով և առաւել բազմաթիւ թուրք ազգարնակութեամբ, շնորհիւ իւր առկունութեան, աշխատասիրութեան և հողի ու կլիմայի բարերեց յատկութեան, կարողացէլ էր հասնել նախանձելի տնտեսական բարձրութեան: Բազայի նիւթական հարստութեան չափը մասաւ որապէս որոշվելու համար ապացոյց կարելի է բերել հետեւել հաշիւը:

Բազայի աւերումից յետոյ, Կովկասի բարձր իշխանութեան հրամանով, տեղական հաշտարար միջնորդ Խման Պետրովը 1906 թուի Ապրիլի 10-ից մինչև 25, բազմաթիւ հայ և թուրք ընակիների ներկայութեամբ և մասնակցութեամբ կողմէց Բազայի կրտսեծ վնասների, նոյնապէս և առանձնակի ծուխերի կրտսելու ցուցակը, գնահատելով իւրաքանչիւր կրտսեալ վնաս տների, շինութիւնների, մուրհակների, այդ ինների, անասունների և այլոց: Վեստի ընդհանուր գումարը, Պետրովի հաշտումի, եղել է էրկու միլլիոն երկու հազար երեք հարիւր (2,002,200) ռուբլի:

Այսպիսի գումար կարող է միայն կ էռը համարուել այն ահազին վնասների, որոնց ենթարկուեց թշուառ Յագան իւր աւերման օրերամբ: Տառեւեակ տարիներ իւր արիւն քրտինքով ձեռք բերած անտեսութիւնը կրտսաւ յաւիսեան մի դիշեր, մի քանի ժամի մէջ:

Գիւղատնեսութեան ճիւղերից զարգացած էին 1, Գիւնես գործութիւնը՝ կային ոյնտեղ սեելի քան 200 այգի, որից սուացւում էր բաց կարմիր գինին նշանաւոր քանակութեամբ, որև սպառւում էր վեդրոն մինչև 1 ռ. 50 կոպ. ինչպէս գիւղում, նոյնապէս և շրջուկաց հայ և ռուս գիւղերում 2, 0 դ. է հանութիւնը որ քաշում էին թթից մեծ քանակութեամբ, 3, ներառմագանութիւնը, որով զբաղւում էր մօտ 100 տուն, և այնքան զարգացած էր, որ գոյացնում էր իրանց պէտքերը, սակայն մշակւում էր ամենաճին, առարական ձեռլի, մերենաների լիովին բացակայութեամբ, 4, Հազար գործութիւնը, որ տալիս էր ցածեն, զարի, կրտեկ և կտուհատ, որից հայերը ձէթ էին հանում իրանց համար Սլաւեանիայ ուռո գիւղի մերենաներով, 5, Մեզուարութաւութիւնը, որով քչերն էին պարապում և ընդգամենը մօտ 50 տուն և իւրաքանչիւր հազիւ 10—30 վեցտակ միույն էին պահում:

Ամենածաղկածն անտառն ապահութիւնն էր, որովհետեւ իւրաքանչիւր տուն ունէր մինչև 100 գլուխ խոչըր անասուններ

(իուլ, գոմեց, եղ, և այլն) իսկ ոչխար 500—1500 գրութա գիւղը շրջապատող բազմաթիւ բինաներն ապացոյց են անառնաբուժութեան զարգացման:

Որհեստագիտութիւնից շատ հնուց ծաղկած է սուտայն կութիւնը, որով միահաւասար զբագուած էին կանաքը և տղամարդիկ և զործում էին կտու, ջեջիմ, թամբի ծածկոց, շապկացու, մետաքսէ ծածկոց և այլն: Այժմ գործում են միայն բրդէ շալ: Գերծակներն ունեին գիւղում մօտ 7—8 խանութ, գարենները 6—7 խանութ, կօշկակարները 10—12 խախութ, ճոն ու մուշտակակտուներ 5—6 խանութ, ունկեր իշներ 3—4 խանութ, հիւռներ 10—12 հոգի, որմնագէրներ 7—8 հոգի. քարահանքում քար կտրողներ 6—7 հոգի, ջրագացաքար կտրողներ ջարա—թաջ քարահանքում մի քանի հոգի, ըրուտներ ու զուռնաշիներ մի քանի հոգի, սազանդար բանաստեղծ Յաքութիւն Յոհաննիս ետն—Աջաղօղի մականուտնեալ, և այլ արհեստաւորներ և արհեստագիտներ:

Գիւղում կացին նաև առեստրական խանութներ, մանրավաճու 5 խանութ, հոթեղինի 8 խանութ, մուավաճու—կապալառու մի խանութ և այլն:

Խնտելիքենու գասակարգից կան երեք քահանայ, արհեստաւորաց զպրոցաւարտ և ուսուցչական գպրոցաւարտ մի քանի անձն, նոյնպէս և ոչ սակաւ գրագէտներ, ուստի առ ոտս քահանացից, ըստ օրում գիւղն երբեք չէ ունեցել ծիստկան զպրոց, այլ ուներ միայն միզասեան կառավարչական զպրոց հասարակութեան հաշւով: Ստացուում էր մի օրինակ «Նոր Քար» և որտ գագարելուց յետոյ—«Մշտկ»:

Այս էր ահա Բագայի անտեսական և կուլտուրական գրութիւնն երր թուրք—հայկական ընդհարումը վերջ դրեց նրա բարզաւաճմանը, և Բագան դժուար թէ 50—70 տարի այս օրից յետոյ կարողանայ հանել այն բարգաւաճման ասաիճանին, որի վերայ կանգնած էր նա իւր աւելման ըստին:

Իյո կարճառօտ տեղեկութիւններն անհրաժեշտ էին, որպէս զի ընթերցողը կարողանայ գագարիար կազմել թէ լիւ էր Բագանայն շարարատիկ ըստին՝ երբ նա ենթարկուեց անողոք ճակատագրի անգառնալի որոշման:

1905 յուղիչ բռւականը, նախապատրասուրիւնները. Բհօնգ Ազայ Կարաբեկոսի այցը Բաղադին. Ալլանեար բեզ Զուլդագարովը եւ նրա համարակաց դիրքը:

1905 թուրե փետրվարեան արիւնահեղ ընդհարումն թուրեքերի և հայերի միջն Յագւում հայ կեանքի մէջ յեղաշընումն առաջացրեց, և այդ թուրականը Աղդը կավիանեան հայ ազգացնակութեան համար մի յուղիչ և ցնցող տարի էր: Հասարակաց կեանքը գեւզերում և քաղաքներում աննկարագրելի շարժման մէջ էր, մասնաւանդ գեւզերում բնակչութեան երեւտասարդ մատոք արթնութեան մէջ էր: Աղդագայի և այն մօտիկ ապագայի մերայ նայում էր Խիուտ Խոժռուադէմ, սպառում էր մըրկայոց փոթորկի, որի խոստութեան աստիճանը դեռ մութն էր, խաւար էր նրա համար իբրև մշու շով ծածկուած տեսարան:

Ասսանի նա, այդ եղետասարդ մատոք, անդադար եղերման մէջ, ժողովներ էր կազմում իւրաքանչիւր գիւղում, խորհրդակցութիւններ էր կատարում, զիմագրութիւններ էր տեսնում, զիմագրութիւններ թուրքերի յարձակմանը, որ վազ թէ ուշ տեղի էր ունենալու, որով գոյութեան ու պատուոյ խընդերը պէտք է առաջ գար և լուծուէր: Նա պատրաստում էր կարծես զոհելու իւր կեանքն անգամ այդ գոյութեան և պատուոյ համար, որպէս զի ապացուցանի, թէ հայ ազգը այնպէս էլ թուրամորթ ու վախենու չէ, ինչպէս ուրիշները կարծում են. ցոյց տայ՝ որ եթէ մի ծեռքով գութանի մաճն է բռնում, գիտէ ու ընդունակ է միւս ծեռքով իրան պաշտպանել:

Սակայն աեսածներիս և գիտցածներիս նայելով ինքնապաշտպանութեան համար մտածող այդ մարդիկ մոքներով չեն անցկացնում թուրք հարեանին դարենոր սխերիմ թշնամի կարծել և ձգտել նախայացձակ լինելու:

Ես ինքու անձամբ տեսել եմ երկու անգամ այդպիսի միահամաւան և համագիւղական ժողով և խորհրդակցութիւն օր ցեղեկով՝ բացօքնայ գաշտում: Այնպէս էր զգասա և լարուած տեսածու գիւղական ժողովուրդը, որ եկեղեցու երկու երեք անգամ անկանոն (ոչ որպէս ժամանքաւէր) քաշած զանդի ձայնը լսելով՝ իսկոյն հաւաքւում, խմբւում էր գիւղի հեռաւոր և մօտաւոր անկիւններից դէպի որոշեալ ժողովատեղին... ուր խօսակցութիւնը պատուում էր միայն և միմիայն կազմ և պատրաստ լինելու ինքնապաշտպանութեան համար . . . :

Սակայն հասակաւորներից կային այնպիսիներն, որոնք շատ քանի անդիտակ՝ ահ սճութեամբ էին նայում այդ իրարանց ման վերայ, նախատում ու պահառակում էին երիտառարգ-ների այս իրարանցումն. դըանք մինչեւ անգամ արդելք էին հանդիսանում նախապատրաստա թեամն դիմոզներին, հաւատացնելով՝ որ 1825-27 թուի սուս-պարսկական պատերազմից գետը, քանի որ սուսը տիրում է այս երկրին, լսուած ու տեսնուած բան չէ, որ ատրքեր ցեղերի ժողովութիները համարձակութիւն սահնան օր ցերեկով ձեռք բարձրացնելու իրար վերայ. սակայն այդ թերահաւատաներն անգամ, նոյն իսկ հակառակ իրանց կարծիքին գիտէին և տեսնում էին, որ թուրք ազգաբնակութիւնը փոխել է իւս յարաբերութիւնը հայերի հետ, մի տեսակ խորթացել է, հեռացել է աշնայսութիւնից, և ի ընէ դինուած լինելով՝ աւելի է զինուում:

Այս հասակաւորները գիտագրելու պատրաստութեան համար նիւթական օժանդակութիւն զլանում էին, ոչ թէ ժլտութեան պատճառով, այլ որ հաւատ ունէին, թէ մի կողմից կառավարութիւնը, միւս կողմից կալուածատէր Ալահեար ըէլ Զուլգատարարով չեն թոյլ տալ, որ թուրքերը յարձակում գործեն:

Տարարադդարար Բագայի պատրաստութիւնը կիսատ էր չկար միտութիւն, չկար մի զօրեղ անձն, որ կարող լինէր գործի գլուխ կանգնելով միացնել բոլոր ուժերն ու խիստ կարգի տակ գնէր բոլոր հասարակութիւնը... Այս լաբուած գրութիւնը տեսնելով երիտասարգները, որոնցից ոմանք անձամբ տեսել էին Բագուի վեարավարեան և օդուտուեան սարսափները, հետեւով չարգախուեցոց օրինակին՝ պատրաստ լինելը անհրաժեշտ էին համարում: Բայց Զուլգատարով Ալահեար ըէլ Քաղացիներին հանդսացնում էր ասելով. «Բաղան իմ» է, Բաղան ձեռքից չեմ գցել, Բաղացիներն իմ հարազատներն են, օտար մարդ չի վստահանալ մօտենալ նըան և այլն»: Սոյն այս Ալահեար ըէլը 1905 թուի սեպտեմբերի 1 -ին, Դաղախի գաւառապետ Առնոլդի մոտ, ճաշկերոյթի կենացների ժամանակ, հաւատացել էր գաւառապետաթեան, որ իրանք ըէկերը չեն թոյլ տայ, որ Բագայի շրջակալիքում ընդհարում առաջանայ*:

Տաք գլուխ երիտասարգների խմբերը, «զաշնակցական» անունի աակ, որ շատ աեղ յառաջընթաց էին լինում գիւղական հասարակութիւնների մէջ, կողմակերպում էին նըանց, ֆրագըներ էին տալի ու զեկավար էին հանդիսանում, ընդհա-

իառակը Բադայի վերաբերութեամբ մէջ անհոգութիւն էին ցոյց տալիք: Բագան թողել էին տեղական բնակիչների կամքին և նրանք միայն մի անդամ երեացին, մի ցոյց արին և ապա անգառնալի անհետացան:

Այդ 1905 թուի օգոստոսի կիսին էր. մի խումբ տաք գլուխ երիտասարդներ, իրանց խմբապետով եկան Բագա, երեք օր մասնացին, լաւ լաւ պատիւներ սաացան, շրջապատեցին իրանց Բագայի երիտասարդներով ու պատրաստում էին անցնել Վազալի գաւառուի գաւառուի Շամշադին գաւառամասի Վուլալի գիւղը: Բայց նախքան Բագայից հեռանալը այդ երիտասարդները չամենելով հարեւան դիւզերից եկած երեք թուրքերի ներկայութիւնը, կամ գուցէ համարելով նրանց լրանո, որ զննում էին իրանց շարժումները, գիւղից գուրս հանեցին:

Հաւանական է, որ այս երեք թուրքերն արդէն մնաց հարիւր շինելով, ոկուցին պատմել թուրք հասարակութիւնների առաջ երանց տեսածները, — եկուոր երիտասարդների և անդական խմբերի պատրաստութիւնը: Խոկ եկուորները տեղական երիտասարդների հետ կազմելով 80 հոգուց պատրաստ մի խումբ օր ցերեկով, պատերազմական կարգով շարժուեցին դէպի Շամշադինու Վուլալի գիւղը, և անցնելով Բագալի կոչուած գիւղից, ուր ապրում են Զիւլգատարով եղբայրներն ու նրանց ազգականները, Ազրուլալազ թուրքաբնակ գիւղի դիմացը մի թուրքի գագաթից 2—3 անդամ համագարել տուին օգսում, և յետոյ գնացին Վուլալի, իսկ բարգացիները վերադարձան իրանց գիւղը:

Կատկած շկայ, որ այս ցոյցը գիտաւորեալ էր և արդէն առածքուեց թուրքերի մէջ, որոնք աւելի ոկուցին վերահսկել հայերի շարժմանը, գոնէ այդպէս են կարծում հայերը, ըստ որում այս գէսպից յետոյ, այլ ևս ոչ մի թուրք չէր երեսում Բագայում: Մի քանի օր անցած, երբ գիւղի եկեղեցում Յարութիւն Քալաթեանի ննջեցեալների յեշտատակին պատարգ էր մասուցւում և այդ օրը ժամարար քահանան ընմից պէտք է կարգար Վեհափառ Վաթուղիկոսի կոնդակը և Կողկառի Նէլիւլ-Խոլամի յորդորը՝ որ հայ ու թուրք հաշտ ապրեն միմեանց հետ, յանկարծ մտաւ եկեղեցի ու կանգնեց առաջին դասում, շրջապատուած իւր 10—12 թիկնապահ թուրքերով տեղական կալուածատէր Խօնարի Այփլուեցի հայախօս Բէօուգ աղայ Վարակը գովը, 52—55 տարեկան մարդ, որին պատուելու համար իսկայն առաջարկեցին աթոռ և նա բազմեց հայ եկեղեցում սուրբ պատարագի ժամանակի:

Ժամարար Մեսրոք քահանան կարգաց Վեհափառ կոն-

դակը և ապա Շեյխ-իւլ-Խոլամի յորդորք բացարձեց նրանց
միտքն ու նպատակը նախ հայերէն և ապա թուրքերէն, որ
հասկանալի լինի Կարարէդովի ուղեկիցներին: Եկեղեցուց դուրս
Կարարէդովը շնորհակալութիւն յայտնեց քահանային և ապա
լիքն էլ Խաղաղասիրական յորդոր կարգաց ժողովրդին ու քա-
հանայի և ժողովրդի հետ իւր թուրքերով հանգերծ հրաւերուեց
Յարութիւն Խալաթեանի առունը հացկելոյթի, ուր նա նստեց
հայերի հետ մի սեղանի և կերաւ անիստիք, իսկ միւս թուր-
քերի համար առանձին ոչխատ մորթեցին և ոռանձին ճաշ պատ-
րաստեցին: Այսուեղից Կարարէդովն իւր խմբով անմիջապէս
զնաց Ալահեար քէդ Զիւլգատարովի մօս: որ ընակւում է Քե-
շիշ-քեանգ թուրք գիւղում, իւր սեպհական տանը, Բաղայից
5—6 վերսա հեռու դէպի հարաւ:

Իչուուդ աղայի այցը հայերը ընդունեցին իրու մի միջոց
և մօուոյ ժանօթանալու հայերի տրամադրութեանը երիտասարդ-
ների խմբի երեալուց յետու և տեսաւ միայն բարեացակամ
վերաբերմունք: Գաւառական ոստիկանական պաշտօնեանեը,
երթասարդների խմբի յատնի ցոյցեց յետոյ շուտ շուտ խու-
զարկութիւններ սկսեցին անել Բագայում և դէնքերէին պահան-
ջում: բագացիք ազատուելու համար հաւաքեցին մինչև 25
հին ձեւի հրացան և յանձնեցին պրիստաւին, որի ընակութիւնը
Գետաբաղում է, ՅՈ վերսա հեռու Բագայից:

Բագացիք գրաից դէնք կամ այլ պատերազմական մթերք
ներս ըերեւ անկարող էին, որովհետեւ Բագան շրջապատուած է
բազմաթիւ թուրք գիւղերով: ամենամօսիկ հայաբնակ գիւղը
Զարդախուն է, որ ունի 20 վերսա, երկաթուղու Զագամի կա-
յարանը 14—15 վերսա հեռու են: Խոկ շրջապատի թուրք աղ-
գաբնակութիւնը խիստ աչալրջութեամբ վերահսկում էր՝ որ
դրուց դէնք չմտնի Բագա գիւղը:

1905 թուականի հոկտեմբերն էր: Հասարակութիւնների
մէջ բերանից բերան թուչող ոււտ կամ ուղուղ լուրերով լցուել
էր օգը և մարդկանց գագար ու հանգիստ չէր տալիք: Այս և
այն տեղ խմբուած մարզիկ խօսում էին միայն օրուայ անց-
քերի վերայ, թուրքերի պատրաստութեան վերայ, աւագակ-
ների շարժման վերայ, այլ նիւթ չկար խօսելու: Մի տեսակ
անորոշ գրաւթիւն էր ոտեղծուել բագացոց համար, էլ շգե-
տէին, թէ ինչ գալոց է պատրաստում նրանց դլսին: Աչ մի
գործ չէին կարողանում կատալեւ, ոչ մը տեղով չէին կարո-
ղանում հեռանուլ գիշեր ցերեկ անդագար մտածելուց քունն
աշքներից կորել՝ հեռացել էր: Ամեն տեսակ լուրեր, յուսալիք

թէ յուսահամա, մինը 20 շինելով հաղորդում էին իրար և անոռաց գրութիւնն աւելի բարգւում, զարդանում էր . . .

Անցաւ հոկտեմբերը, հասաւ նոյեմբերը. մարգիկ աւելի ջղայնացան. լուրերը բարգւուեցին և բնակիչները երեւում էին յուոյ և յուսահամատութեան մէջ: Ամանը հաւատացնում էին, թէ բարեխնամ կառավարութիւնն երբէք չի թոյլ տալ ընդհարում: Ամանը և գուցէ մեծամասնութիւնը, լիովին ապահնել էին Ալլահեար Ծէդ Զիւլդ ադարովին և հաւատացած էին, որ ուս անթիւ կապերով կապուած Բագայի հետ, երբէք չի թոյլ տալ, որ իւր հաւատակիցները որ և է վնաս հասցնեն հայ հաւատարիմ գիւղին. Մի այլ խումը՝ յոյոը չկարելով որոնից կամ նրանից, առ ելի յօյս եր զնում իւր վերայ, իւր ոյժի ու կազմակերպութեան վերայ . . .

Զիւլդարդովները մէծ և բազմանդամ առհմ են, զրանց պարագլուխն է Ալլահեար բէդը: Սա իւր գերզառաւանով ընակւում է Բագայից վերստաչութիւնը, գէպի հարաւ, Խընալու գիւղի Քեշեշ-քեսնդ մասում, իսկ միւս Զիւլդ ադարովները, Նոյնպէս Բագայից ոչ հեռու 4—5 վերստաչափ կազմի են մի առանձին գիւղ միմիշայն բէդերից բաղկացած և այդ պատճառով կոչւում է Բագւլիզ: Նրանը հարուստ կալուածատէրնը են, ունին հոգեր, անտառներ Զադեամ գետի հոգտում և այլն:

Ալլահեար բէդը 60—62 տարեկան է, բարձրահասակ, լեռը, առազգակալմ, հաստ և երկայն քթով, զեղեականաչ փայլուն աչքերով, սակաւախօս, ծախս ոտից մոըր ինչ կադ: Հագնում է սովորաբար չերքեզի երկայն կապաց. (չերքեզկա) վրայից սոկեպատ քամար և արծաթալպատեան խէնչալ, ուիրում է որսորդութեան դնալ բարակ չներով (թաղի) և բարձեռվ. Ճանապարհ գնալիս շրջապատում է իրան միշտ թիկնապահներով: Դրագէտ է ուսւներէն և պարակերէն: Հասկանում է հայ լեզուն: Նրա ազգեցութիւնը առաւել եօ մեծանում է նրա պաշտօնական գիրքով և այն յարաբերութեամը, որ ունի բարձրաստիճան պաշտօնեաների հետ:

Լայնատարած արօտառակեր ունենալով՝ պահում՝ զարդացնում և կատարելագործում է ծիանց լաւ տեսակներ, և սպանցով շատ անգամ փայլում է հաստրակաց կրկէսներում և նրա լաւ տեսակի ծիաները շատ անգամ տանում են առաջնակարգ թանկագին մրցանակներ:

Գանձակի նահանգում տռաջաւոր բէդերի շարքումն է և, իբրև ազգեցիկ մարդ, մէծ համարումն ունի բէդերի և հասարակ գառակարդի մօտ: Հաստրակաց գործերին և շարժմանը կարող է յանկացած ընթացքը տալ:

Ալլահեար բէդի տեղական ազգեցութիւնն այնքան մեծ է ժողովրդի վերայ, որ թուրք և հայ հաւասարապէս հնագանդւում են նրան։ Եւ նրա կալուածում ապրող թուրք գիւղացիները կամուլին կատարում էին այնպիսի պարտականութիւններ, որից ազատ պէտք է լինէին 1861 թուրք փետրվարի 19-ին ազատական ը տը ձ ք ո յ ն հրովարտակով։

Բագացիները թէեւ օդաւում են պետական հոգեցով և ոչ մի կազ չունին կալու ածատէրերի հետ, բայց չէին կացող դուրս գալ Ալլահեար բէդի համատարած ազգեցութեան առակց։ Վարե, հնձի, խոտհազրի ժամանակ հով (կոչ) էին անում բէդի կողմից և առւնը մի մարդ մի օր դնում՝ աշխատում էր Ալլահեար բէդի հոգերում։ Հարուսաներն ու արտօնեալները (քահանայք և լունա) վարձում էին իրանց փոխարէն մարդիկ և ուղարկում էին բէդի հովին մասնակցելու։ Բէդի կողմից նշանակած վերահսկեները միշտ ծանուցում էին տալի բէդին, եկողի ու չեկողի մասին։ չեկող չէր լինում, որովհետեւ բոլորն էլ համոզուած էին, թէ երը և իցէ կարեք կունենար բէդի մօտ, բայ որում բէդը ամենի կարեքը դժոհացնում էր։ մէկը դրամի պէտք ունի, մի ուրիշը լէճ, կամ ստանալիք ու չէ կարողանում ստանալ, կամ փորձանքի է հանդիպել, ուրիմն պաշտպանութիւն է որոնում իշխոնութեան առաջ բէդի միջնորդութեամբ։ մէկի ապահնքն է գողացուած, բէկը հնարաւորութիւն ունի գողօնքը գտնել տալ և յանձնել ակրոջը և նիւ Մահմետականների համար մզկիթները և նշանաւոր օջախները անձեռնմխելի ապաստարաններ են։ Զիւլգագար բէդերի տունը որպէս օջաղ ապաստարան էր հայածուածների համար, լինէին դրանք յանցագործներ, աղջիկ առևանգողներ կամ բազգից հալածուածներ։ Այս իրողութիւնը հին է, պատմական է ու յատուկ շատ բէդերին և խաներին Անդրկովկանում, որով և պաշտպանում է բէդերի հասարակաց ազգեցութիւնը։

Երբ կառուցւում էր Թիֆլիդ-Յագու երկաթուղին, երկու կայարանի շագեամ և Դալլար տարածութեան փացտէ ձողերը (շպաները) կապալով վերցըեւ էր Ալլահեար բէդը իւր անտառից մատակարարելու։ Բագացիք և միւս գիւղերի թուրքը ընտեկիչները յօժարակամ իրանց ապրանքով երկու օրով անտառից փայտ էին հասցնում երկաթուղի։

Այսպէս էր Ալլահեար բէդի անտահման ազգեցութիւնը երկու ազգաքնակութեան վերայ էլ ու այս կարգերը հայերի վերաբերութեամբ թագաւորում էին նախքան Բագայի աւելքումը։

Եթէ Բագայի հայ ժողովուրդը միշտ տըամադիր էր գործ

դնելու բէղի օգտին իւր պատշաստականութիւնը, հսազան-գութիւնը և աշխատանքը, ապա ուրեմն նա հիմ չունէք երկ-բայելու, որ իւր պաշտպանը, հովանաւորը, տէրը, իշխանն Ալ-լահնեար բէղն է, որ մնկեղծ են նրա խօսքերը թէ «Բաղան իմն է, Բաղան ձեռքից չեմ թողնել, բոգացիք հարազատներս են ևն»։ ուրեմն նա, գոնէ իւր օգտի համար, չի թոյլ տալ, որ Բաղայի կողոպուտն ու աւերումը տեղի ունենան։

Ամէն անգամ, երբ Ալլահնեաց բէղը գալիս էր Բաղան կամ անցնում էր նրա միջով, միշտ իջևանում էր իւր ամենամօտիկ ծանօթ-քարեկամ Յոհաննէս Շուշաննէս տանը և գըտ-նում էր արժանավայել հիւրասիրութիւն տան տիրոջ և հա-սարակութեան կողմից։

Պ.

Կոտորած Զագեամ կայսրանում։ Դեսպանուրին Ալլահիար բեկի մօս։ Յարձակումն Զառչի գոմերի վերայ։ Հայերի փախուսր բի-նոներից դեպի գիւղ։ Ալլահիար բեկի գալուսր Բաղացոց մօս։

Անցնենք կրկին պատմութեան թելին։

Վաւացաւ ուրբաթ շաբաթուստիկ առաւօտը, նոյեմբերի 18-ը, այսինքն, ուղիղ Գանձակի կոտորածի և կողոպուտի օրը և կէն օրեց յետոյ, Երեկոյեան գէմ բօթաբեր գոյժն քնկաւ Բա-գայի մէջ։ Մի քանի Բաղացիներ, որոնք մշակութեամբ կամ առեւրական գործերով զբաղաւած էին Երկաթուղու Զագեամ կայսրանում, շնչառպառ հազիւ կարողացել էին փախստեամբ գիւղը ձգել իրանց։ Սրանք լուր բերին, որ այդ օրը թուրքերը մի քանի պարագլուխների ազգեցութեամբ, մինչև անդամ առաջնորդութեամբ, յարձակուել են Զագեամ կայսրանում և երկաթագծի վերայ դանւող հայերի վերայ. ցըել, կողոպուտել են նրանց և ոմանց էլ մահացը։ Այս բօթաբերները հաղորդում էին, որ այդ օրը թուրք Զանքեզոր կուսակցութեան տեղական կո-միտէ, Խօսարի Այիլուր գիւղացի, պարագլուխները Գանձակից ստացել են հեռագրեր, որոնցով Գանձակից ծանուցանում էին սրանց, որ Գանձակում հայ և ոռու միացած կոտորել են սոլոր թուրքերին, ուստի հարկաւոր է սկսել Զագեամի կո-տորածը։

Զագեամի կոտորածը նկարագրում է Թիֆլիզում կարճատե հրատարակող «Արշալոյս» լրագիրն (№ 62, նոյեմբերի 23-ից 1905թ.): Յէշեալ լրագրի թղթակցի անելով այս կողմնը կողո-

պուտ սպանութիւնների կազմակերպողները էին թուրք բէզերեց, առաջաւորներից և կառավարութեան թուրք ծառայողներից մի քանիսը, որոնց անունները թւում է:

Զագեամ կայարանի գրասենեկարգեաը (կանտօր շնչիկ) հեռագերէ է իւր' երկաթուղիների Նաւթանցքի վարչութեանը, որ նոյեմբերի 19-ին վաղ առաւօտ ոկտոել է հայկական կոտորած: Առաւօտեան ժամի 11-ին, կայարանի մօտ, ճանապարհի նորոգութեան հանրակացարանում (կազարմա) կտորնոր է արուած աւագ քանչոր Մարտիրոսեանի կինը ու վիրաւորուել են նրա մանուկները: Նաւթանցքային կոյարանում թուրքերը հայեր էին որոնում, բայց ծառայողների ջամփերի շնորհիւ նրանց յաջողուեց դանել: Հին Զագեամում թուրքերը կոտորել են բոլոր հայերին և գիշերը հրզեհել են նրանց տները: Փորձել են հրդեհել և հաշտաբար գատարտնին կից բանաք, բայց ժամանակին նկատելով՝ նրա առաջն առել են և հրացանաձգութեան ժամանակ, առում են, սպանուել են, 4 թուրք: Զագեամ կայարանը պաշտպանելու համոր, նոյեմբերի 19-ին կային միայն 32 զինուոր^{*)}:

Երկաթուղու գծի վրայ պատահած դէպքերի նկարագրութիւնը թուշնելով Զագախի գաւառի ընդհարմանց իմ կազմած պատմութեանը, ես նորից վերագաւառում եմ Բաղա:

Այսպէս, նոյեմբերի 18-ի երեկոյին գիւղ հասան Զագեամից ակատուածները խիստ երարանցում յառաջ բերին գիւղի մէջ, ուր, ինչպէս վերը յիշած է, ոչ քուն ունեին ոչ հանգիստ:

Պայմանական սուլոցով գիւղամէջ ժողովեցին բազմութիւնը և խորհրդի կանգնեցին մի ելք գանելու: Բնական է, որ բազմաթիւ գլուխներ մի տեղ հաւաքուած՝ ամեն տեսակ մըտքեր և կարծիքներ են արտայայտում: Զորս կողմից թըբալնակ գիւղերով շրջապատուած միայնակ կանգնած Բաղան չէր կարող սառնութեամբ հայել իւր ամենամօտիկ սպառնալից ապագայի վերայ: Իւր վրեկութեան յոյսը դնել իւր թոյլ, անգլուխ, չկազմակերպուած ոյժի վերայ, շատ էլ վատահ չէր: Ապաւենել 20 վերստ հեռու Զարդարմուի վերայ, այդ էլ բացայայ անիրազործնելի էր, ըստ որում նա, Զարդարմուն, Բաղային հաւասար մի գիւղ, հազիւ կարսզ է իւր զլութը պաշտպանել: Կառավարութեան օգնութեան դիմել անկարելի էր, պէտք էր հասնել Գանձակ, իսկ մինչև Գանձակ բւլոր տեղերում վըլստում էին թուրք հրոսակները: Ո՞ւր զիմեն, ում պազատեն, ո՞ւմ ձեռք մեկնեն, չգիտէին:

Գլուխը կորցքած քազմութիւնը, շիւղը քանոզ խեղդւողինման, նորից կանգ առաւ գրացի Ալլահիար բէդ Զիւլդադարովի գթասրտութեան և վեհանձնութեան վրայ: Միահամուռորոշեցին գիմել նրա օգնութեանը:

Ուստի՝ իսկոյն ընտրեցին մի քանի առաջաւոր մարդեւ, այն է, Յոհաննէս Շուշանեանցին, Ղահրաման Դաթոյեանցին, Գալուստ Եսաւ թիեանցին, Աւետ Բարսեղեանցին, Սարգիս Արզումանեանցին, Պողոս Ծերատեանցին և ուրեշներին մինչև 12 հոգեւ և նրանց պարտգլուխ Քրիստ քահանայ Տէր Արքահամեանցին և, իբրև գեսպանութիւն Բագայի հասարակութեան կողմեց, պատուիրեցին որ շաբաթ օրը, Նոյեմբերի 19, առաւոտեան արշալոյսին, համարեա մթնով, թուրք գիւղերում աննկատելի, ուղերուեն գէպի Խըննալու Ալլահիար բէդի մօտ:

Բէդը սիրով ընդունեց պատգամաւորութիւնը, արժանաւորապէս պատուասիրեց, սկզբում խիստ զարմանք արտացայտեց պատմուած եղելութիւնների մասին, իբրև անոպասելի և անհաւատալի մի իրողութիւն և ապա նորից յուսազեց, որ Բագային ոչ մի սպառնալիք, ոչ մի վնաս չի լինի. որ Բագան իրանն է և բագացիք նրա հարազատները, և խոստացաւ անձամբ այցելել գիւղը նոյն պատգամաւորութեան հետ, որի համար և պահեց իւր մօտ պատգամաւորներին:

Շաբաթ առաւոտ, Նոյեմբերի 19-ին, արեւաբացին, այն ժամին, երբ հայ գեսպանութիւնը Խըննալիում ազերսում էր Ալլահեար բէդին, գիւղի արեւելեան կողմեց, ուր 4-5 վերստ հեռու Զառչի կոչուած բինաներն են և ուր մինչև 30 տուն քաղացիներ իրանց բազմաթիւ ապբանքներով մշտապէս ազրում են, լուրեց հրացանի ձայն, որ ապա կրկնուեց կանոնաւոր կերպով մինչև 70 անդամ:

Նարուած, ելէկտքացած բնակիչները իրաք խռնուած, իսկոյն դուրս թափուեցին տներից և զանազան բարձրութիւններից զննելով՝ աշխատում էին քացարութիւն զանել, բայց ի դուրս, ըստ որում ոչինչ չէր երևում. Զառչի գոմերը գտնուում են բաժակածե փոսի մէջ Զառչի և Քարաղը իւր անուն աղբերների ակունքներում, շրջապատուած փոքրիկ բլուրներով: Աւստի որոշեցին լրաբեր սուրհանդակներ ուղարկել անցքի վայրը և իրանք հոգացին ամբապնդել պահապանների ուազմիկ գիւղերը:

Նուտով վերագարձան սուրհանդակները — Ա. Ա. աքել Վ. աքագարեան նիկողոսի անցն ու Աւետ Խաչատրեանը և բացատրեցին, որ թուրք հրասակների մի մասն արգէն յարձակուել է Զառչի գոմերի վրայ, միւսները նոյնպէս ժողովւում

են յարձակուելու. բինաւորների գըութիւնը սոսկալի է. Դահարամաման և աչատուր եւ անը կանխօրէն բարձրացել է Զ. առջ եւ ալ կոչուած ըլուրի վրայ և այնտեղից գնտակներ է արձակությարձակուող թուրքերի վերայ, որ սրանց հոսանքը մի կերպ կանդանեցնի և ջառչաբնակ հայերին միջոց տայ գէպի զիւղը փախշելու: Հրացաններ են արձակում և թուրքերը, բացց տեղի հեռաւորութեան և փոս լինելու պատճառով ձայնը լսելի չենում:

Գիւղը պաշտպանող 10—12 զինւորներ իսկոյն գնացին օգնութեան և Սանդեար է ազբիւթից վերադարձն ձեռնութեան, ըստ որում Զառչի շինութիւնները արդէն բացակառկրակի մէջ էին. սարսափահար ընակիւնիքը ձիով, ոտով, երեխանցով կանանցով, ամեն բան թողած թշնամուն, փախչում էին գէպի գիւղ գոնէ իրանց կեանքն ազատելու:

Այս սոսկալի եզելութեան մասին իսկոյն հազորգեցին շըրշակոյ բինաներին, այն է Թալայ, Գոմերա և Ճոր, Քեամանդար, Սարքառ և Ճիւլարի գոմեր, որ իրանց ճարը տեսնեն: Արդարե մնջ արագութեամբ բոլոր բինաներից հաւաքուեցին գիւղ, բերելով իրանց հետ ապրանքները, անասունները, կան կարասիքը և այլն: Եւ այդ բոտէին գիւղը ներկայացնում էր մի աննկարադպելի, սարսափահար տեսարան: Տղամարդիկ, կանայք, երեխայք, ապրանք, ոչխարներ, ձիանը, շներ և այլն, իրար էին խառնուած. լաց, կոծ, աղաղակ, ձայներ, իրարոնցումը աննկարագրելի էր. ոչ ոք շգիտէր թէ ի՞նչ անի, ուր զնայ, ինչ ասի, ում ասի. խօսք չէին գտնում խօսելու, ապուշ էին կարել ամենքը:

Ինքնապաշտպանութեան գործն իսպառ մոռացուեց: Ամենքն աշխատում էին մի կերպ աեզաւորացնել բինաւորներին և գիւղի մէջ եղած ու բինաներից բերուած բազմաթիւ ապրանքները, ոչխարները և այլն:

Այս կէսօրին էր: Սրտաճմլիկ տեսարանին առաւել որիւթիւն էր տալի ընութիւնը: Թանձր, խօնաւ, աշնան մառախուղը իրար յետենից դալիս ծածկում էր արելը, գիւղը, մարդկանց և նորից հեռանում, որպէս զի տեղ տայ յետենից եկող միւս աւելի թանձր ամպերին:

Աերջինո յաճախուկի ծածկում էր բազացոց փրկութեան վերջին յուսոյ, Խամփի ար ի եալի, ճանապարհը, որը պարզ երեսում է գիւղից և որով պէտք է դար Ալլահնեար բէզը: Խոկ սա չկայ ու չկայ. չկան և պատգամաւորները. արեն էլ թերուել է գէպի իւր մուտքը: Յուսակտուր Բաղացիներն աչքները բեեռած Խամփի ար ի եալ ի վրայ՝ միմեանց

հարցեք էին տալի թէ բէդն ուշացաւ, բէզը չեկաւ, պատգամաւորներն էլ չեկան։ Վերջիններիս չվերագառնալը մեծ մտատանջութիւն էր։ Հգիտէին լինչպէս բացատրեն յապաղումը։ Սեկնութիւնները բազմաթիւ էին, ոմանք կարծում էին, թէ ներկայացուցիչները գերուած են, ոմանք թէ՝ ոպանուած են, ոմանք թէ՝ բէդն ամէն բան կյաջողցնի, կվերջացնի։ և այստարամ ու մաշող գրութիւնը շարունակուեց մինչև 4 ժամը կէսօրից յետոյ։

Իոկ թուրք հրասակները ազատօրէն և անարդել զբաղուած էին Զառչի աւարով և յառաջ չէին դալի, որով պատճառ էին տալի բազացոց խարութիկ յայսերով Ենթադրել, թէ Նրանք վախենում են այլ ևս յառաջ դալու, գոհ կմնան միայն Զառչ չեռվ և այլն։

Պատառուած ամպերի միջով վերջապէս երեացին Խամափար ի ար ի և ալի վերայ մի խումը ձիաւորներ, որոնք առանց շտապելու դանդաղաբայլ յառաջ էին դալիս։ Այս, եզրակացըն ըագացիք, եկողը Ալլահեար բէդն է սպիտակ շորերով։ տակի ձին էլ Նրանն է երեսում։ Խա խումըն իջաւ Վերի աղբ ւրի դլիսի փոսը և աներեւութացաւ, 5—6 բռպէից երեաց Վերի աղբ ւրի դլիսին և վերջապէս մօտեցաւ դիւղի եզրին։

Ալլահեար բէդը սպիտակ չերքեզկով, ոսկեպատեան խէնջալը կախած, ոսկեգոյն թուրքմանի բարձր ձին հեծած, արժանագայք գանդաղութեամբ դալիս էր խմբի առաջից։ Նրան հետեւում էին երեք թուրք թիկնապահներ ոտից մինչեւ դլութզինուած, որանց յետեւից դալիս էին Բագայի պատգամաւորները, երանց քայլերը յարմարացնելով բէդի քայլերին։

Գիւղական ճանապարհի երկու եղբում պատի պէս երկարութեամբ շարուել էին արք և կանաքը և երեխայք և հայեցքները ըսենոել էին Ալլահեար բէդի վերայ, որ ծանրաքայլ յառաջ էր գնում և լսում էր բազացոց աղաղակը «բագ, բաշընդայ գէօննում»։ Կօխարդայ Ալլահ, աշաղագա ոսն, ըուզուլումնան բայց կութար (բէդ, զլսովդ պտոյտ գանք վերեւ ևստուած, ներքեւ դու։ այս շարիքից մեզ աղատիր)։ Բէզը թեթև ժպտալով՝ ոիրտ էր տալի ժողովրդին չվախենալ, և հաւատացնում էր, որ ոչինչ չի լինի։ Պատգամաւորներն առաջին անդամ տեսնելով ըինաների խառն ի խուռն փախուստը, տեղ տեղ կանգ էին առնում, ապշում էին և լալիս ունորից հասնում էին բէդի յետեւից։ Ժողովուրդը խուռն բազմութեամբ հետեւում էր Նրանց։

Հասան գիւղամէջ։ աբգունական դպրոցի առաջ բէզը

կամեցաւ թջևանել իւր սովորական տեղում՝ Յոհաննէս Շուշանեանցի տանը, ըայց ժողովուրդն ազերսեց նրան կանգ չառնել, շարունակել գէպի Զառչի և խուժանի առաջն առնել:

Քէդը կատարեց հասարակութեան խնդիրը, մտադրուեց գնալ, քայց ցանկացաւ տեսնել դիրքերը և իմանալ նրան դիմադրելու պատրաստութեան չափը: Անկեղծօրէն ցոյց առին նրան բոլոր գիրքերը 1) Հանգստաբանի մօտ, 2) Տամբը լուտու զօրի, 3) Երուտի հող, 4) Կրիցանց զօրի, 5) Եկեղեցու մօտ և 6) Գիգչի գլուխի: Բոլոր տեղերում երկայն փոսեր էին վորուած պատուարուելու և պահապաններ էին կարգուած: Քէդը մի առ մի զննեց դիրքերը, իմացաւ ռադամական մթերքների քանակը, կռուող ոյժերի թիւը և պատուիրեց մարդ չսպանել, ըստ որում կռուպուաը ջնաննամը, կարելի է վերադարձնել, ըայց սպանութիւնը կարի երկուստեք յարաբերութիւնը և աւելի կթշնամացնի երկու կողմն էլ: Ապա գնաց Զառչի, տանելով հետք մի քանի ըագացիներ:

Ալլահեար քէդը Զառչիում Փըռը շնի ե ալ ըարձրութեան մրացից դիմեց խուժանին, յանդիմանակոն խօսքեր արտաօնեց, խրատեց որ վերադառնան իրանց աները: Խոկխուժանը փոխանակ լսելու առաց նրան, որ գնա Խօխարի Այիկու խորհրդի:

Հաւանական է, որ այդ կենդրոնական խորհուրդները դոյցութիւն սւնէին թուցքերում, և առանց այդ կանոնաւոր կազմակերպութեան՝ թուցքերը չէին կարող միանուագ, այն էլ նոյեմրերի 18-ին, յարձակուել հայերի վերայ ամեն ուրեք, այն է Պալլաբում, Զադեամում, Բաղայում, Զարդաթլուում, Գետաբուգում և այլ դիւղերում:

Դ.

Ալլահեար քէդը հարանիվում. Քաղաքի փրկաներ: Մեսորք բանանայի զաղսնի դիսպանուրինը գիներալ նահանգապետի մօ:

Զառչից Ալլահեար քէդը վերադարձաւ Բաղա:

Գիւղական զրագիր Մելիք Շերատեանց երիտօսարդի պլակադը թիւնը պէտք է կատարուէք այդ երեկոյ և հարսանեաց ամենատեսուկ պատրաստութիւնը, տռանց ազետալց գէպերին կանխադէալ լինելու, տեսել էին որդէն: Միւս կողմնց ինքը Շերատեանցը նրին և հասարակութիւնը տագնա-

պալից օրերում անկարող էին հանդէս կատարել, իսկ յետաձգել անկարելի էր, ուստի որոշուած էր կատարել անշուք կերպով:

Սելիք Ծերատեանցը մասնակցում էր Ալանեար բէդի շքախմբին և խնդրեց բէդին ներկայ լինել հարսանեաց հանդիսին և պատուելով իրան՝ իջևանել իւր տունը թէդը՝ որ օտար չէր հայի սեղանին, ընդունեց հրաւէրը:

Առանձին ոչխար մորթուեց թուրքի ձեռքով և առանձին կերակուր պատրաստուեց բէդի թիկնապահների համար, նոյնը և բէդի համար: Բէդի սենեակում ներկայ էին մի քանի բազացիներ, որոնցից ոմանք կանդնած էին պատի տակ շարքով: Բէդին բացատրեցին, որ նուռագ, զուռնաց անյարմար է հրաւէրել ներկայ ժամանակ: Պատկից յետոյ տիսուր, տըտում անխօս կանդնած էր ժողովուրդը բէդի սենեակում:

Հանդիսաւոր լուսւթեան մէջ բէդը յանկարծ դիմեց ժողովրդին: «Ի՞նչ էր կարծում, թէ այս շարժման պատճառը: Պատասխանեցին՝ որ չգիտեն և չեին սպասում: «Խուլիդ անների գործ է այդ, շարունակեց բէդը: Եկեք այդ փորձանքի առաջն առաջնք, մի բան գցենք խուժանի բերանը, գնան՝ կորչեն: իմ կարծիքով՝ միակ միջացն այդ է: Թէկը լուսում և սպասում է պատասխանի: Եռու են մնում և գիւղացիք:»

Ներկայ եզրդ Պօղոս Յաւրինեանցն առաջարկեց մի հազար ուռւրի, միայն թէ ազատուեն: Կարճ մտածմունքից յետոյ՝ բէդին ուրախ գէմքով յայտնեց: «Գէ որ այդպէս է, տուէր 15 թաղար էլ գարի:

Այս խօսքերի վերայ ուրախացած, որ բէդն արդէն գիւղն ազատել է, գիւղացիներից ոմանք ինքնարերարը խոստացան նուէրներ՝ ով ինչ կարող էր:

Ընթրիքի վերայ հայերն Ալանեար բէդի կենաց բաժակ առաջարկելով՝ յիշեցնում էին, որ նախկին բաղացիք և Զիւլագադարտիների նախնիքը նոյնպէս եղել են փոխադարձ բարեկամներ և այժմ էլ իրանք բէդից խնդրում են օգնութիւն: Ալանեար բէդն առնելով մի կտոր հաց, ցանեց վրան ազ և առաց: «Երգւում եմ այս աղ ու հացով, որ Բաղան ոչ ովի ձեռքը չեմ տայ: բազացիք իմ ազգատանիմից են, իմ աւլազո (զաւակ) են: և ինչան հաստատութեան այս երդման, ըստ սովորութեան մահմետականների՝ ձգեց ազ ու հացը գետին: սեղանի վերայ թողնելը անհաստատութեան նշան է: Ընթրիքից յետոյ իւր հանգստութեան համար բէդը զնաց Պօղոս Յաւրինեանցի առունը:

Հետևեալ որը Ալլահեար քէդը իւր յոդնամ ձին թողեց Յովնաննէս Շուշանեանցի մօտ, պատուիրելով ուշաբկել իւր տուն, ինքը հեծաւ Պօղոս Մերատեարցի Նժոյգը՝ գուրս գնաց գիւղից և զեռ չէր հասել այդինքի ուհիմանը, յանկարծ ազմուկ վայնառ սուն թարձրացաւ գիւղի վերի մասում, և շուտով պարզուեց, որ Ալլահեար քէդի Խըննալու և Խըմաշլու գիւղերի թուրքերը Դաքաղի իւր դից, որ Ալլահեար քէդի ընականութեան մօտ է, քչել տարել են նոյն քէդի մտերիմ բարեկամ Յովհաննէս Շուշանեանի 1200 գլուխ ոչխարինեցը թուրք հովիւների հետ միտուանու Սրա հետ կողոպահել են և Շուշանեանի թինայի տան իրեւ զէնները: Թէև գիւղից օգնութեւն ուղարկեցին, բայց արգէն ուշ էր:

Ոյս գէպքն արթնացրեց Ժողովրդին. Նա տեսաւ, որ Ալլահեար քէդը, որքան և անկեղծ լինէին նրա խոստումները, անկարող էր թուրք խուժանի կատաղութեւնը զապել Թողին փրկանաքով ազատուելու միտքը, մտածեցին զիմնէ կառավարութեանը զօրք խնդրելու նպատակով:

Գիւղական դատարանի շինութեան մէջ շուտափոյթ կազմեցին խառն ժողով, որոշեցին խնդրագիր ներկայացնել գեներալ-նահանդապետին և խնդիրը Գանձակ տանելու և անձամբ ներկայացնելու համար, որ հեշտ չէր, այլ հաւասար մահաբեր փորձի, ընտրեցին Մեսրոք քահանայ Ստեփանեանցին, որ այդ մէջոցին Զարդախլու գիւղումն էր, և արքունական դպրոցի ուսուցիչ Գագիկ Տէր Աստուածատրեանցին, որը սուկայն շուտով հրաժարուեց:

Խրկուշարթի, նոյնմընքի 21 յարձակում չեղաւ թուրքերի կողմից, որ վերագրեցին Ալլահեար քէդի խոստումների ճռշմարտութեանը, սակայն ոմանք պնդում էին, որ պէտք է զիմել զեներալ-նահանդապետին:

Աւտի Մեսրոք քահանան աշխարհականի հագուստով, երկու զինեալ ընկերների հետ ուղի ընկաւ ստով: Գաղտնի ուղեորները կեանքի ազահովութեան համար թողին ճանապարհը և ընկան սար ու ձօր, թփերի ու փշերի մէջ՝ խաւար, ամպամած գիշերով հասան Խառնու Խառնու անդ անդ և նկատեցին, որ մօտ 50 ձիաւոր թուրքեր արագութեամբ քշում են բազմաթիւ սչխար, աւելի քան 1500 գլուխ յետոյ իմացուեց, որ նրանք կողոպահել են գանձակեցի Սողոմոն Տաւարածեանին Վլաւիանկա ուսւ գիւղի մօտ ու յայտնի ուխտատեղի Բուլաշնը ի աւերակ վանքի մատով տարել են Շամքոր՝ Հասան քէդ Սուլթանովի տունը:

Սոյն այս հասան քէդն, ինչպէս կտեսնենք Դազմակի ընդ-

հարումների պատմութեան մէջ, սպանուել է Շամշադինու կարմիր աղբիւը կամ Քեօսալար գիւղի վերայ յարձակման ժամանակ և նրա ընկերները գիւղի վիզը թոկ ձգած ձիով քարշեն տուել մինչեւ Օքիւզի գիւղը:

Հասնելով գիշերը Յրէդէակա ռուս գիւղը, Ժայտեալ Տէր Մեսրոպն իւր ընկերներով ընկաւ ռուս գիշերապահների ձեռքը, որոնք տարան նրանց Դետարագի նոր նշանակուած ռուս պրիստաւ Նէպիլլովի մօտ, որ այդ դիշեր, նոյեմբեր 20-ին իջևանել էր տեղական ռուս քահանայի տանը: Խուս քահանան ճանաչեց Մեսրոպ քահանային, հարցրեց Բաղայի վիճակի մասին և պրիստաւը շատ ախտաց, որ իւր ընդամենը չըրս ուրամնիկի օգնութեամբ չէ կարող բակացոց համար միթութիւն ձեռք բերել: Սրա մասին յիշում է ինքը Նէպիլլոն իւր ժանուցման մէջ գիներալ-նահանգապետին առուած *):

Նոյեմբերի 22-ին, Երեքշաբթի առաւտօտեան պրիստաւն առնելով Մեսրոպ քահանային և նրա ուղեկիցներին՝ գնաց Զարդարկու, որպէս զի կարողանայ այնտեղից հեռագերել Գանձակ դորք ուղարկելու մասին: Սակայն Զարդարիւում այդ միջոցին մեծ իրարանցում էր տիրում: Զօրք չէր եկել, թուրք հրոսակները կարել էին Դալլարի և Զարդարիւ միջև եղած Դետարաբաթելն և իրանը շրջապատել էին Զարդարիւ գիւղը, որ հերոսաւար դիմագրում էր խուժանին: Պրիստաւն և Մեսրոպ քահանան նորից վերտգարձան Ֆրէդէնկայ, ուր ըլլուրի բարձրութիւնից նկատել են, որ այցւում էին Բաղայի մերձակայ Քեամագար, 0 ջաղջուկի, Գոմեր ածոր և Գիւլաբի բնաներն, այլ և այգիների աներն ու ցանկապատերը:

Մի կողմից Զարդարիւ վերայ, միւս կողմից Բագայի վերայ կատարուող յարձակումներն այդ օրն այնքան վախեցրին Ֆրէդէնկայի ռուս ընտակիցներին, որ նրանք սահմանական պրիստաւին տանել նրանց Սլաւեանկա: Պրիստաւն էլ, ամբողջ գիւղը, բացի տղամարդկանցից, միանգամմեց տնղափախեց Սլաւեանկայ: Այս հանգամանքից սահմանած Մեսրոպ քահանան իւր ընկերներով նոյն օրը գնաց գիշերելու Զարդարիւու:

Զարդարիւ կանձակ գնալն երկիւղակի գարձաւ, փոստն էլ խանգարուած էր. այն ինչ Բաղայի խնդիրը մնում էր անշարժ, ուստի այդ խնդիրը, Զարդարիւ տանուաէրի զեկուցումը գաւառապետին գիւղի պաշարուած վիճակի մասին և Մեսրոպ քահանայի մի նամակը Բաղայի վիճակի մասին յաջորդ կորիւն

վարդապետի վերայ՝ յանձնութեցին մի ռուս ստրաժնեկի, որ տանել հասցնի Գանձակ քսան և հինգ ռուբլի վարձատրութեամբ Նոյեմբերի 23-ին, չորեքշաբթի Բաղայից Զարդախլու հասան Պետրոս Խաչատրեանը և Դուկաս Պօղոսեանը, որ նախ Զարդախլուից օգնութիւն խնդրեն և երկրորդ՝ խնդրատարների վիճակից տեղեկանան: Հասկանալի է, որ Զարդախլուն, ինքը շրջապատռած լինելով թուրք խուժանով, չէր կարող օգնութեան ձեռք մեկնել Բագային: Աւ բեմն դեսպանները ձեռնունայն վերադարձան:

Ե.

Պրիատաւ Շեփիլօի զեկուցումը Գանձակի Գեներալ-Նահանգապետին: Նոյն Շեփիլօի նամակը Տիֆլիսկի Լիստօք լրագրին: Նորազոյն պատմաւրջանի հերոսներ.

Նոյեմբերի 20—23-ին դոյութեան ճգնաժամի մէջ եղող Քաղաքն ի զուր փորձ էր անում օգնութիւն հայցել միւս հայ գիւղերից-Զարդախլուից, Գետարէկիցից:

Որպէս զի լուսաբաններ թշուառ հայերի դրութիւնը Զարդախլու և Կաղախլի, նոյնպէս և մի քանի ռուս գիւղերում վերոյիշեալ ճգնաժամի բոպէին, ես կը եքեմ այստեղ իսկութեամբ երկու նշանաւոր գրութիւն, սրոնք ունին պատմական փաստաթղթի նշանակութիւն և որոց հեղինակը ոչ թուրք է և ոչ հայ, այլ ռուս: Փաստաթղթերից մէկը մի զեկուցում է, որ տուել է 1905 թուի զեկումբերի 7-ին Գանձակի Գեներալ-Նահանգապետին Գետարագի պրիուտաւ Շէպիլլօ, որ տպուած է 1906 թուի յունվարի 22-ին Մշակի № 15-ում. միւսը նոյն Շեփիլօի նամակն է Տիֆլ. Լիստօք-ի մէջ տպուած 1906 թուի մայիսի 28-ին № 110, որի թարգմանութիւնը գնում ենք Մշակի 1906 թուի մայիսի 30-ին № 115-ից արտատպէլով. Ահա այն-

Գանձակի Գեներալ-Նահանգապետին տրուած գեկուցում*.

Յայտարարութիւն.

Պատմիւ ունիմ հաղորդելու Զերգ Գերազանցութեան, որ Նոյեմբեր ամսիս 16-ին ևս ճանապարհուեցի դէպի Գետարէգ

* Մշակ. 1906 թ. № 45 Յունուարի 22.

ընդունելու ուշաստօկը: Տեղ համելով՝ նոյեմբերի 17-ին, Գետաբէդի ուշաստկի կառավարից Ալիքելը յայտնեց ինձ, որ Լարաբենդի ընակիչները Գետաբէդում հրդեհեցին անտառապահ Արքաս Գաջիելին պատկանող 60 սայլ խոտը: Ամսի 18-ին գնալով Լարաբենդ, ես կալանաւորեցի հրդեհողներին՝ Մօլում Քերբելայ Ալահիվերդի օղլուն և Կասում Սագրդ օղլուն և նոյն օրն էլ բերի Գետաբէդ ու բանտարկեցի: Խակ 18-ին երեկոյեան Զարդախլուից հազորդեցին հեռախօսուի, որ դիւզը շրջապատւած է թուրքերով և կոտորած է սպառուում: Եւ որովհետեւ ես զբաղուած էի հրդեհի գործը քննելով, ուստի խնդրեցի Ալիքելին գնալ Զարդախլու օգնութեան: Ալիքելը խոստացաւ գնալ: Երեկոյեան ժամի 9-ին երկրորդ անդամ տեղեկութիւն ստացայ, որ հարկաւոր է շուտափոյթ օգնութիւն հասցնել շարդախլուեցիներին: Խջնելով՝ ներքեւ ու մտնելով բուժքերը, ես տեսայ այնտեղ Ալիքելին: իմ հարցին թէ ինչու չէ գնացել, նա պատախանեց, որ գնալ շարժէ, որովհետեւ աւելորդ նեղութիւն է: Այն ժամանակ ես, հետո վերցնելով՝ հինգ պահակներ, անմիջապէս գնացի Զարդախլու նոյեմբերի 19-ին գիշերը, ուր ինձ հազորդեցին, որ Զարծի գիւղը աւերռուած է և որ թուրքերը գնում են գէպի Բաղաքենդ: Միւնոյն օրը ես 8 պահակներով գնացի Ֆրէզեօվկա գիւղը, որտեղ ամբողջ ուստազքարնակութիւնը ստարափահար եղած խմբուել էր եկեղեցումէջ: Ֆրէզեօվկից ես ճանապարհուեցի գէպի Բաղաքենդ, որը ըսլոր կողմից շրջապատւած էր թուրք հրուակներով և մատնուած նրանց կողսպաւտին ու ջարդին: Գիշերելով Ֆրէզեօվկա գիւղում, յաջորդ օրը ես կանանց ուղարկեցի Ալավեանկա գիւղը, իսկ ուղամարդկանց հրամայեցի պահպանել գիւղը, ուր ես ինքու էլ մնացի: Եթե ամսիս 21-ին նկատեցի, որ թուրքերը մօտենում են Ֆրէզեօվկա գիւղին, ես պահակներիս հետ միասին գնացի Սլավեանկա գիւղը՝ պէտք է աւելացնեմ, որ 20-ին, գիշերը, Բաղաքենդ գիւղի քահանայ տէր Մեսրովը Ստեփանեանցը յայտնեց, որ նոյեմբերի 19-ին Ելիարի-Ալիպլի, Տաշախլի և Դուգարի գիւղերի թուրքերը յարձակուեցին Բաղաքենդի վրա, աւերեցին և քշեցին-տարան ամբողջ նախիրը: Նոյն օրը 21-ի երեկոյեան եկաւ Սլավեանկա Ֆրէզովկայի քահանան և յայտնեց, որ թուրքերը խոստացան ուղաներին ձեռք շտալ և ճանապարհում են գէպի Գետաբէդ: Աէս ժամից յետոյ վազ է վազ եկան 25 հոգի հայեր և խնդրեցին պաշտպանել իրանց, որովհետեւ Սլավեանկան արդէն ալաշարուած է: Հայերին ես թաքցրի նկուղում: Խսկոյն և եթ երեացին ձիւորներ, բազեած 800 թուրքերից: Խսձ մօտ վազեցին գուխարօնները, նոյն-

ալէս և խնդրեցին կը առկ չը բանալ նրանց գէմ, որովհետեւ հառկառակ գէպքում գիւղը քարսւքանք կանեն: Միանայն ժամանակ դուխաքօրների տանուտէրը խնդրեց տնից դուրս չը դալ: Մինչ այդ թուրքերը թալանելով երկու խանութ, օսկարօվի և Մնացականովի, կողոպտած ամքողջ ապրանքը գարսեցին նրանց ֆուրդօնների մէջ ու տարան: Թուրքերը գնալիո նախազգուշացրին դուխաքօրներին, որ 22-ին նրանք պէտք է աւերեն հայերի խանութները Գետարէգում: 22-ին ես գնացի Գետարէգ, որտեղ հայերի բոլոր խանութները փակուած էին, իսկ ժողովուրդը հաւաքուած հայոց հկեղիցու մօտ ու արսափով սպասում էր թուրքերի յարձակման, իսկ վերջիններս մեծ խմբերով մօտ 500 հոդի կանգնած էին շուկայում: Երեկոյեան ժամի 5¹—2-ին ես Միակինի համայնքը տանուտէրի հետ միասին գտնուում էի հիւրանոցում, այդ միջոցին հրացանի ձայն լսուեց գերեզմանատան կողմից: Իսկ տանուտէրը թեսեցս բռնեց և նախազգուշացնելով, որ հայերը կը ակում են, տարաւ գէտի հայերի գերեզմանատան կողմից: Հէնց այդ ժամանակ նորից լսուեցին հրացանի ձայնիր և մենք թադնուեցինք առուի մէջտ Այդ ժամանակ մեզ մօտ վազեց պրիստուը և տարաւ ինձ գէպի այն տեղը, որտեղ կատարիվում էր ուրոսափելի հրացանագուշիթին: Պարագ եմ համարում աւելացնելու, որ բոլորովին անհկարելի էր որոշել հայկական գերեզմանատանից մեզ վրա կը ակողները հայերն էին, թէ զերքերում թաքնուած թուրքերը: Մինչ այդ Ալիեվը Գոլիեկով և Աստան Ազատութեակով պահանձնելու: Պահակները ուղարկեց շուկա իւր գըտքը ընտանիքը բերելու: Պահակները վերագտառնալով ընտանիքի հետ յացտեցին, որ սկսուեց հայերի խանութների թալանը՝ սկսած Ակորեանից: Սկսած 22-ից մինչև 24-ը տեսեց ջարդ ու թալանը: 24-ին ես Ալիեվի ու պահակների հետ միասին ճանապարհուեցի գէսի հանքերը դիւամբուը պահանձնելու: Պրիստու Ալիեվը նկատելով, որ հայերը Կազախլուից փախչում են գէսի Զալսկախլու, թողեց ինձ և, իջնելով ներքեւ թուրքերի մօտ, վաղեցրեց նրանց գէսի Զալսկախլու, հրամայելով նրանց ոչ մի հայի ողջ չը թողնել, հէնց այդ միջոցին ճանապարհին սպանեցին երկու հայերի: Այդ մի և նոյն օրը, 24-ին աւերուեց և հրդեհուեց Կազախլի գիւղը: 24-ին իջնելով Գետարէգ, ես այնտեղ գտայ իմ թարգման Առատուրին և Զինդերի գործակալ Բէրդինեանցին իմ բնակարանում: 25-ին ինձ մօտ եկան 15 հոգի զինուած թուրք և պահանջեցին երանց յանձնել այն երկու հայերին: Ես աշխատում էի համազել նրանց, որ նրանք վրացիներ են, բայց նրանք ոյժով դուրս խլեցին նրանց իմ ձեռքից և նստեցրին միւս գերեների հետ:

միասին փուրդօնում, իբրև թէ ուղարկելու ըոլորին Զարդախուլու: Պրիստաւ Ալիեվը առաջարկում էր ինձ նոյնպէս նրանց հետ միասին գնալ Զարդախլու, բայց որովհետեւ ինձ նախազգուշացքել էին, որ ուղում են սպանել ինձ, ուստի հայերին փուրդօնով ճանապարհեցի Զարդախլու ուժ պահանջների հսկողութեամբ, բայց հայիւ Փուրդօնները արել էին 200 սաժէն, եթր զալաւ տուին գնացող հայերի վրայ, սպանեցին բոլոր տղամարդկանց և մի ինո՞չ: Փախչելով ազատուեցին տասը կին, իմ թարդմանը, Զինդերի գործակալ Բերդիեանցը և մի մանուկ: Քիչ յետոյ ներս խուժեցին ինձ մօտ թուրքեցը, գուրս քարշեցին նրանց և տանելով կամուրջի մօտ՝ սպանեցին, նախապէս խլելով այդ երկու հայերից Մասուղէրի ու Ամիտդ-Վիստոնի տարձանակները, որոնց ես ուղում էի իմ այս յայտարարութեանը հետ ներկայացնել, բայց պրիստաւ Ալիեվը այդ տարբանակներից մէկը ինքը վերցրեց, իսկ միւսը տուեց տանուտէրին ասելուլ, որ նա նրանց հարկաւոր է: Թուրքերի Գետաբէդից հեռանալուց յետոյ, ես հոգին յանձնեցի 18 հայեր և էլե 7 հոգի, ընդամենը 25 հոգու: Իսկ իմ սատացած տեղեկութիւններով տներում այրուած են 50 հայեր, կանայք, երեխաներ և տղամարդիկ: Այեմբերի 27-ին հայ կանանց անփորձ ուղարկեցի Զարդախլու: բայց երկու ազջիկներ 23-ից ոկուած մինչև օրս էլ գանուում են պրիստաւ Ալիեվի մօտ և մի քանի կանայք էլ ուղարկուած են Միսկինլի գիւղը, որոնց մինչև այժմու էլ պահում են այնաեղ: Միևնոյն ժամանակ պատիւ ունեմ յայտնելու Չերդ Դերազանցութեան, որ ինձ յանձնուած ուշաստկի պահակները հաղորդեցին, որ թուրքերը նրանցից խլում են փամփուշները, իսկ նրանցից մէկը՝ թուրք Աստանը յայտնեց, որ պրիստաւ Ալիեվը ատրճանակը նրա վրայ ուղղեց, հրամայելով իր պահակին խլել նրանից հրացանը ոյն պատճառով, որ Աստանը չէ միանում յանցաւոր թուրքերին, բայց Քիչ ժամանակից յետ առաւ նորից հրացանը և յանձնեց Աստանին: Ըստ որում պատիւ ունեմ յայտնելու, որ, ինչպէս ես կատարելապէս համոզուեցի, պրիստաւ Ալիեվը իր պահակներով և Միսկինլինուկի հաստրակութեան տանուտէր Մահմէդը միասին ամենազործունեայ ։ մասնակցութիւն ունէին այդ բոլոր խայտառակութիւնների մէջ: Մինչև անգամ յեշեալ տանուտէրը համարձակուեց կանգնեցնել ինձ Ալավեանկա գիւղում, երբ իմացաւ, որ ես Կանձակ եմ դալիս, և խլեցինձնեց Բառունինդ աեսակի ատրճանակը, որ պատկանում է մի յոյնի: Աւելացնում եմ նոյնպէս, որ երբ թուրքերը իմացան, որ ես արդէն պրիստաւի պաշտօնավարութիւնո սկսել

եմ, ջարդու վիշուը արին իմ գրասենեակը և արձակեցին բոլոր կալանառուուածներին։ Եթէ այդ մասին ես հազորքեցի պրիստաւ Ալիեվին՝ վերջինս ծիծաղելով պատասխանեց, որ աւելի լաւ, աշխատանքը քիչ կը լինի և աւելացրեց, որ նա այլ առ չէ ծառայելու և զնում է իւր զիւղը ապրելու։ Բազաքենդ գիւղում հայերի դիակները մինչեւ այժմ էլ գեռ չեն հաւաքուած։ Դեկտեմբերի 7-ին 1905 թիւ Գանձակ քաղաքում։

Պրիստաւ Դ—մասի Գետարէդ աւանի՝ Շետիլո.

Ահա և միւս փաստաթուղթը²։

«Յարդելի պ. Խմբագիր։ Նառայեցի Թիֆլիսի քաղաքային ոստիկանութեան մէջ 6 տարի։ այդ ժամանակամիջոցում, ես երեխ համապատասխանում էի իմ պաշտօնիս, որովհետեւ իշխանութիւնից գողերին ձերբակալելու և գողացուած իրերը դանելու համար շատ յաճախ պարգև էի ստանում։ Ցետոց ինձ նշանակեցին Մէտեխի բանտի վերահսկչի օգնականի ժամանակաւոր պաշտօնավար, իսկ յետայ Գանձակի գաւառի Գետարէկ աւանի պրիստաւ։ Նոյեմբերի 14-ին ես գնացի Գանձակ, ներկայացած գտառապետին, և ստանալով նրանից 4-րդ գաւառամասու ընդունելու հրամանագիրը, գնացի իմ ծառայութեան տեղը։ Նոյեմբերի 17-ին հանելով Գետարէկ, պրիստաւի պաշտօնը ինձ յանձնելու հրամանագիրը ներկայացրի պրիստաւի ժամանակաւոր պաշտօնավար Մուսէի Ալիեվին։ Պրիստաւ Ալիեվը խնդրեց ինձ ըրջել գիւղերը, մինչեւ թղթերը կը պատրաստուեն։ ես այցելեցի Ֆրէզովկայ, Ալավեանկա և Չարդախլու գիւղերը։ Եթէ հասայ Զարդարու, նոյեմբերի 20-ին, ընակիչները ինձ ասացին, որ պրիստաւ Ալիեվը և նամախօսիկին ադիտացիա են անում թուրքերի մէջ, որպէս զի նրանք հոտորած սկսեն։ Նոյեմբերի 21-ին ես կրկին վերադարձայ Գետարէկ։ Գեռ Գետարէդ չը հասած, Սլավեանկա գիւղի ընտեկիչները յայտնեցին, որ թուրքերը ուզում են գիշերը յարձակուել գիւղի վրա։ Այդ ի նկատի առնելով, ես 5 պահապաններով մնացի Ալավեանկա գիւղում։ Երեկոյեան ժամը 7-ին այդ գիւղը եկան 800 զինուած թուրքեր և խօսք տուին ուուներին ձեռք չտալ, բայց կոտրեցին 2 խանութ—Յովսէվեանի և Մնացականեանի, տարան 2 փուրգօն ապրանք, նախազգուշացնելով դուխաբօներին, որ նոյեմբերի 22-ին պէտք է աւերեան Գետարէդում հայերի բոլոր խանութները։ Նոյեմբերի 22-ին

* «Քակ» № 445—4906 թ. Մայիսի 50. իսկականը տես Տաֆլիսկի Լист. № 110 28 հայ.

ևս Սլավետնկից Զարդախլու ուղարկեցի մօտ 30 հոդե հայ, իսկ ինքու գնացի Գետարէկ և խնդրեցի Ալիեվին, որ ինձ յանձնիք գաւառամասը, որի վերաբերեալ պրիստաւ Ալիեվը յայտնեց որ առ այժմս չէ կարող յանձնել գաւառամասը, որովհետեւ զբաղուած է ուրիշ գործերով: Ես հայերին տեղեկացը թուրքերի կողմից զուլաբօներին ասած լսւը. նոյն օրը, հայերը, ովքեր կարողացան, հաւաքեցին իրանց ընտանիքը և գոյքը և տեղափոխեցին մօտակայ Դաղախլու գիւղը: Պրիստաւ Ալիեվը և Նամիալուկին համոզում էին մնալ իրանց տներում, աւելացնելով, որ նոր պրիստաւը «յիմար է», նա ձեզ խառում է, նրան չը լսեք և այլն, բայց հայերը չը լսեցին պրիստաւ Ալիեվին: Երեկոյեան ժամը 7-ին Գետարէկը շրջապատուեց թուրքերով, և Մնացականեանի խանութից սկսեցին կոտրատել և թալանել բոլոր խանութները: Աւերումը շարունակուեց մինչև նոյեմբերի 24-ը: Երբ ես նկատեցի, որ պրիստաւ Ալիեվը բոլոր ժամանակ ագիտացիա էր անում թուրքերի մէջ, ես դնացի նրա մօտ և ասացի, որ գա լաւ բան չէ, շատ հայեր են սպանուել մի որևէ ծեռլ պէտք է գաղարեցնել կոտորածը: Ալիեվը պատասխանեց, որ հարկաւոր է ոչնչացնել բոլոր հայերին, իբրև վնասակար մարզկանց, որ նրանք շատ խորամանկ են և շատ յսճախ սպանում են սահանգապետներին, պրիստաւներին և պահապաններին: «Ես ինքու ամրողջ Յ տարի փախստական էի, աւելացրեց Ալիեվը, Պարսկաստանումն էլ էի, բայց ես եկաց խոստովանեցի յանցանքու զլխաւորին և ինձ բոլորը ներեցին. իսկ հայերը նոյն իսկ չեն ընդունում իշխանութիւնը»: Նոյեմբերի 25-ին, Երեկոյեան դէմ ինձ մօտ եկան 2 պահապաններ— Աստան Աղասւբէկով և Բելիկովը և դեկուցեցին, որ հիւանդանոցից, ուր գանւում են մօտ 60 հայեր, Ալիեվը տարաւ իր ընակաբանը, 2 հայ օրիորդներ: Միւս օրը, վաղ առաւօտեան, ես գնացի նրա ընակաբանը. ուր իսկապէս տեսայ 2 հայ օրիորդների յատակի վրա նրա հետ քնած: Ես հարցրի նրան, թէ ինչը է նա ըերել իր ընակաբանը այդ օրիորդներին. Ալիեվը պատասխանեց, որ նրանց համար այնտեղ շատ նեղուածք է և վտանգաւոր, իսկ այստեղից ոչ ոք չի վստահանալ նրանց տաշնել: Միւս օրը ես Ալիեվի հետ միասին դնացի գինամիտի պահեստատեղին: Մենք նկատեցինք, որ հայերը թողել են Դաղախլու գիւղը և տեղափոխուում ենք Զարդախլու գիւղը: Ալիեվը 2 պահապանների հետ ցած իջաւ և սկսեց ծեծել թուրքերին, որպէս զի նրանք վաղեն հայերի ետևեցի, բայց թուրքերը հայերին չհառան: այն ժամանակ թուրքերը սկսեցին կողոպատել հայերի գոյքը և աւերել Դաղախլու գիւղը: բոլորը

հողի հետ հաւասարացրին։ Այն ժամանակ ես իսկացն շաբանքաներով գնացի Գանձակ և զեկուցի այդ բոլորը նաև հանգապետին, իսկ պահապաններ—Բէլիկովը և Առան—Ազառքեկովը երանց կողմից գրաւոր կերպով զեկուցին դաւառապետ Աւալիխանին պրիստուու Ալինվի մասին։ Նահանգապետը առաջարկեց գաւառապետ Աւալիխանին իսկոյն ինձ հետ դնալ և քննութիւն կատարել։ Գաւառապետ Աւալիխանին ինձ հետ ուղերձ եւ գննութիւնից կատարել։ Գաւառապետ Աւալիխանին ինձ հետ ուղերձ եւ գննութիւնից յետոյ գաւառապետը առաց ինձ, որ ես անձշտապահ աստիճանաւոր եմ և նրա հետ ծառայել չեմ կարող և իրան ըստ հնազանգուելու պատճառով պաշտօնից կը հեռացնի։ Այդպիսի խիստ հրամանի պատճառով ես ստիպուած էի նրա իրերի ետևից գնալ Թիֆլիս, որը և տարայ Գանձակի Մոտ մի շաբաթից յետոյ գաւառապետը վերադարձաւ Գետառէկից։ Նա ի՞նչ առաց նահանգապետին, ինձ յայտնի չէ, միայն ինձ կանչեց գաւառապետը և նախ հարցը եց։ «քերի՞ր իմ իրեր»։ Ես պատասխանեցի «այս»։ «Ծեայ նա առաց», որ ես իմ «կոչմանը չեմ համապատասխանում»։ Նւ ես այդ օրուանից նշանակուած եմ նահանգական վարչութեան մէջ, ահա արդէն 5 ամիս է, առանց թոշակի։

Որ վարչութեանն էլ զիմում էի պաշտօն խնդրելով—ամեն տեղ իրանց մերժումը պատճառարանում էին նրանով, որ ես իմ «կոչմանը չեմ համապատասխանում»։

Կօմինտարիսները աւելորդ են։

8-րդ քաղաքամասի նախկին պրիստու Ալեքսանդր Խոսիփովիչ Շեպիլոս։

Երկու փաստաթղթերից ես պարզ երևում է, թէ ի՞նչ հանգամանքում էին կատարում հայ թուլքական ընդհարումները։ Անցնենք նորից Բաղային։

Զ.

Յարձակումն Բաղա զիւղի վերայ։ Տների հրդեհումն։ Բնակիչների սարսափանար փախուստ։

Զորեցարթի, 1905 թու ի՞նոյեմքերի 23-ին վաղ առաւ օտից թուրքերը հսդեհեցին շրջակայ ըսլոր րինաները։ Բաղացիք չկոռողացան զիւղագրել։ Թուրքերն աստիճանաբար՝ չորս կողմօց մօտենում էին գիւղին։ Հրացանաձիդիդներն իրանց դիրքերումն

էին։ Գրիգոր քահանայ տէր Արքահամեանցը, վազվազում էր զիրքից գիրք, ամրացնում էր նրանց, խրախուսում ու քաջալեռում էր պաշտպաններին և անում էր կարեւոր կարգադրութիւններ։ Կեանը եռում էր։ Գիրքում գործում էր և միւս քահանան-աէր ներսէս Տէր Յարութիւննանցը։

Յնակիչների մէջ կային այնպիսի հաւատացեալներ, որոնք ըստ հին հայկական ոոլորութեան, հասարակաց ճգնաժամին, ապաւ ինում էին միայն ու միայն Աստուծուն։ Այսպիսիները ներսէս քահանային գիրքից բերին եկեղեցի, հսկում կատարեցին, ծնկաչոք ազօթք մատուցին և շատերը հաղորդուեցին։ Մրանց համար վերջին օրն էր։

Յովհաննէս Շուշանեանցը, Ալլահեար ըէգի թողած ձին հեծած արշաւում էր զիրքերը ու, Ալլահեար ըէգի առուած պատուէրին համաձայն, խսահւ արգելում էր պաշտպաններին մարդ սպանել։

Ընդհանուր իրարանցում էր տէրում, չկար միատեսակ գործոցութիւն, կարգապահութիւնը խիստ և որոշ չէր։ չկար այնպիսի մի անձնաւորութիւն, որ իւր հմտութեամբ և հեղինակութեամբ միացնէր ջլատուած ուժերը, իրար համաձայնեցնէր տարրեր գործողութիւնները։ Ներջապէս չկար մի անձն, որ կարողանար իւր ձեռքը ժողովել պաշտպանութեան դորձը, չկար ծրագրած պաշտպանութիւն։

Թէպէտ թուրքերը շրջապատել էին գիւղը, բայց դեռ չէին վսահանում ներս խուժել։ Սակայն երեկոյեան գէմ, Զագեամի կողմէց, դեռ ևս շատ հեռուից հրացանների գընդակներ թափուեցին գիւղի վրայ։ Հեռուից իսկ համացուեց, որ հրացանները Մոսսինի կարգից են։ Շատ հեռուից երեսցին մի խումբ թուրքեր-հրացանաձիդներ, որոնց գնդակները հառնում էին գիւղ, իսկ թագացոց բերդան հրացանների գնդակները չէին հասնում նրանց։ Մոսսինի հրացաններով զինուած այդ խումբն օտար տեղերից եկած անժանոթ մարդիկ էին երեւում։ Զանը եղար կուսակցականներ։ Նրանք թուով մօտ 50 հոգի էին։ Գուցէ և նրանք վճռեցին Բագայի ճակատագերը։ Տեղացի թուրքերին նրանք սպառնալիքներ էին տալի, հայ-հոյում էին և ծեծում, որ ներս խուժեն գիւղի մէջ։

Հեռուից գիրք բռնելով՝ ջանրեզարները գնդակէ կարկուտ էին թափում հայոց գիրքերի վերայ, որոնց զոհ գնացին ամենից առաջ Պօղոս Եաւըիեացը հանդստար գուշի գիրքում, ապա Ղամբար Յարութիւններ և Գալուտա Գրիգորեանը ը ու տի հողի գիրքում։ Գիրքի գլխի զիրքում պաշտպանուում էին տէր Գրիգորի և Ղամբարան Աւետեանցի զեկավարութեամբ։

Առաջինի ոտք ծռուեց և երկար ժամանակ կազում էր, իսկ երկրորդը խէնչալի վէրք ստացաւ երեսում և ուշագնաց եղաւ, որին և համարեցին սպանուած, իսկ նա գիշերը լիախաւ: Առաջին զոհերը շշմեցրին ժողովրդին, մի խումբ մարդիկ շրջաւ պատեցին նոր սպանուածներին: Հրացանաձդութիւնն չարաչար շարունակւում էր: Նուշանեանի խորհուրդն այլ առ չգործադրուեց: Հայերն ոկնեցին մարդիկ սպանել: Հանգուցուցեալ Պօղոս Եւարիեանը մահից առաջ արգէն երեք թուրք էր սպանել:

Մութն իւր ոե քողը սփուռում էր Բագայի վերայ: մարդիկ չգիտէին, թէ ի՞նչ է խոստանում նրանց այդ գիշերը: Եւ, աւազ, Վ. Ե. Ր. Ա. Ղ. Ը. Ի. Ռ. ի կողմից թուրքերն արագութեամբ ներս խուժեցին գիւղի ծայրը և տռաջին նոււադ հրդեհեցին շինութիւնները: Սրանք մասամբ ժածկուած լինելով ոռւսաց շինութիւնների պէս խոտով կամ ծզօտով՝ դիւրութեամբ վառառում էին և տարածւում: Հարաւային քամին անդամ բաղացոց թշնամի էր: Հրեղէն լեզուները երկարացան դէպի երկինք սարսափ ու լոյս սփուելով տարաբազզ բնակիչների վերայ, որոնք այդ ժամանակ ընկնուեցին արգէն անողոք ճակատագրի առաջ:

Այդ շարագուշակ քապէից վերջացաւ արգէն Բագայի գոյցութիւնը: Կորաւ մի հարուստ գիւղ, ցրուեց նրա տնտեսութիւնը: մարդկային արիւնով ժածկուեց գիւտինը և սուգի ձայնով լցուեց մթնողորաց: Երկու կողմից էլ մարդիկ գնդակահար թաւալում էին գետին: Ննողները մոռացան զաւակներին, որպին մոռացաւ հօրը: Գլխակորոյս լիախուսաւ սկսուեց այդիների կողմը: Քանաներորդ գարում, կրկնուեց իններորդ գարի արարական արշաւան արշաւանքը:

Բոլոր նշանաւոր աներն ախնայ մատնուեցին բոցավառ կրակին: Այրուեցին մի առ մի Մեսրոպ քահանայի երկյարկանի տունը, ուր արքունական դպրոցն է իւր կահ կարասիներով: ըռնեցին այդ քահանայի 90 տարեկան հօրը՝ Մովսէսին, պահանջեցին ցոյց տալ, թէ ո՞ւր ին պահած կամ թաղած փողը, արձաթեղէնը, ալդնձեղէնը և այլ իրեղէնները, որոնց տիրանակուց յետոյ խէնչալով մոթեցին ծերունուն, գլուխը շպտեցին դուրս փողոց, իսկ անշունչ գիակը ձկեցին այրուող տան կրակի մէջ: Հրդեհեցին սպանուած Պօղոս Եւարիեանի երկյարկանի տունը, Ղահքաման Խաչատրեանի կղմինդրով ժածկած երկյարկանի տունը, Պօղոս Մերատեանցի երկյարկանի քարաշէն տունը, Մելքը Եւերատեանցի և ուրիշ շատերի տները և այլ շինութիւնները:

Անասունները անտէր մնացել էին գոմերում կամ թափա-

ուում էին վրոգում։ յաղթողները քշում տանում էին, կուզոպուռում էին աները, ովքինչ կարսդ էր՝ վեցնում էր։ Կանաք, աղջկունք մանկունք, ծեր աղամարդիկ երեք մեծ խմբի բաժանուելով փախան այգ Եների ծորը։ Խոհ ռազմիկ, ընդունակ մարդիկ գեռ ևս մնացին գիւղում, գեռ, ևս վրէժինսկի էին լինում, կոտրում էին թուրքերին, որի ձեռքին մի իր էին տեսնում և իմանում էին, որ թուրք է, գետին էին գլորում։ Խրանք հայերն էլ միմեանց հետ թուրքերին էին խօսում, չյայտնուելու նպատակով։

Թուրքերը զրացի լինելով ւաւ էին ճանաչում իւրաքանչչեր, ուստի ազգեցիները իրանց կողովուակ համար վերցրին իւրաքանչչերը միքանի աներ մահուան սպառնալիքով մատ շէին թողնում այլ թուրքերի։ Այսպէս՝ Զագեամի հասարակութեան վերաց հաստատած անհուտէրը վերցրին էր Մեռքոր քահանացի, Յովհաննէս Նուշանեանցի, Դահրաման Դոմիցի, Ալէտ Բարսեղեանցի, Պողոս Ներատեանցի աները և զրահամանուլն էր մաքթուել Խօվիէս ծերունին իրմաշլուեցի մի թուրքի ձեռքով։

Սրանով չի վերջանում գաղանութիւնը։ Այդ օրը Բաղաջում սպանուեց իւրմաշլուեցի Դահրաման իւղբուաւ եղբայրը, որի ազեան վրէժն առնելու համար՝ հետեւեալ օրը խուժանի առաջնորդները գտնել տուին աներում, մարտգներում և ուշը և լորջերում թագնուած միքանի ծերունիցի ու պատանիներ և բոլորին շարբով կանգնեցրած Պողոս Ներատեանցի ըարձրագիր կալում ու «եա, հազրաթ Սբոս», առելով թուրքին ըուլոցի գլուխներն էլ։

Որպէս վերը յիշուեց, Բաղայի սարսափահար փախստականներն երեք խմբի բաժանուելով հաւաքուեցին այդիների ծորի գլուխը Մաւթ գիշերին, եսը գիւղը լուսաւորուած էր հրզեների բոցերով, թուրքերը յարձակուեցին այդ խմբերի վերաց, որոնք այլ ևս հայրը որդուն, մայրը մանկան, որդին մօրը, քոյը եղբօքը շործնեցին։ Խռնուեցին իրար և իւրաքանչչերն աշխատում էր իւր գլուխը փրկել։ Հասարակաց ինքնապաշտպանութեան հարցը վերջացաւ, կաղթակերպումը ցըսւեց, զիրքերը դէն ձգուեցին, ամեն ոք իւր տնհատական փրկութեան մասին էր մտածում։ Երեք խմբից մինը, որ եկեղեցու մօտ էր հաւաքուել նոյն զիշերը, նոյն մը երեքի 24-ի առաւօտը Մանդուռի մօտով Մամուլսի թաղով հայտնի Գիքջայով։ Պը-դաւաց ամբոցի մօտից թափուեց Զագեամ գետի աւազանը, որ ուղղուի դէալի նամշագինութեալալի գիւղը։

Գլուխակ անձինք պատմում են, որ Բագայի աւերման դոր-
ժում՝ զեկավար և ներշնչող են հանգիսացել գրացի բէդիսից
ոմանք և դիւղացիներից մի քանի առաջաւորները:

Ինչպէս երեւում է պատմութեան ընթացքից, յեշեալներից
ոմանք մաննահցել են նաև չարդախուի վերայ յարձակման մէջ,
որովհետեւ հառարատ է, որ չարդախուեցիք կռուի մէջ գերի են
վերցնում վերոյիշեալներից Հոջի Ալուն, և գնդակահար անում:

Դամը լու տի դոր ի դիւքը պաշտպանող խմբի մէջ աշ-
խառում էր և Գուիթ Ներօսեանցը, Գոռ կռուի մի ֆամոնուկ
նա, երբ տեսնում է, որ իւր ընկերներից ոմանք սպանուել են և
ոմանք փախել, իւր փամփուշաներն էլ հատել են և իւր կեան-
քին էլ վարանգ է սպառնում, վճռում է անձնատուր լինել թուր-
քերին՝ ձեանալով մահմետականացնած: Թուրքերն ընդունում են
սիրով: Այս կրողութիւնը խիստ կասկած է ծնեցնում հայ հա-
ստրակութեան մէջ, որ հիմնուելով Ներատեանցի թրքասէր,
գողութեան ձգտող ընաւորութեան վերայ, Ենթագրում է, թէ նա
հարկադրուած Կըլինէր դաւանմանօրէն յայտնել թուրքերին գիւ-
ղի գաղտնիքը, անպատճաստ գրութիւնը ևլն: Գուցէ այզպէս
էլ եղած լինի, սակայն միքանի օրից յետոյ Դաւիթ Ներատեան-
ցը նորից վերադարձու: իւր համագեւզացիների մէջ, ցոյց տա-
լով որ իւր կեանքն ազատելու համար է առ երես ընդունել
մահմետականութիւնը և գնացին էր Զարդ ալուս: Սակայն Դաւիթ
Ներատեանցի արարունքի վերայ խիստ կերպով է նոյել Զար-
դախիլուի խմբապետը և սպանել է տուել:

Բագայի ժողովուրդն ընդունում է և մի այլ դաւաճան-
գրիդոր Քանարեանցին, որ յետոյ սպանուեց ոչ թէ հայերի
ձեռքով, այս թուրքերի, երբ նա զիւղի աւերման շորորդ օրը
իւր Պօլսս եղրօր և Յարութիւն Մկրտչեանի հետ զնացել էր
Բագա՝ զիւղի զրութիւնից տեղեկանալու Վերահաս մութն
որգելք գառնալով Զարդ ախլու վերագառնալու՝ երերն էլ
անցնում են Բագա գետի միւս կողմն ապահով տեղ, կըակ են
վառում անձրեի պատճառով և թուրքերը կրտկի լուսով մօ-
տինում սպանում են Քրիդորին, իսկ միւս երկուսին փախ-
ցնում: Թէ որ աստիճան յանցաւոր են յեշեալ երկու անձնա-
ւորութիւնները գառաճանութեան մէջ՝ դա մնում է հառա-
րակաց խղճմառնըն:

Չորեցարթի զիշերը, նոյեմբերի 23-ին ժողովրդի մէծ
մասը թէեւ միախել թաքնուել էր գետի ձորում և քարայրե-
րում; ըսցց կային մի քանի ծերեր, հիւանդներ, երեխայք, որ
պատճիմանը կամ ահից յետ էին մնացել և թաքնուել էին
զիւղի շինութիւնների խորշերում; մարադների դարմանի ամեկ,

խոռների մէջ, հողերի մէջ, մի խօսքով՝ ով ուր կարող էր կամ ում ինչպէս կյաջողուէքը թաքնուէլ։ Հետևեալ օրը հինգշաբթի, ամսի 24-ին գիւղի մէջ հպարտութեամբ իշխող թուրը խուժանը կալանաւորում էր այդպիսիներին, որոնց կամ ոսկանում էր կամ գերի վերցնում ու քշում դէպի թուժք գիւղերը։

Խուժանը հինգշաբթի օրը գիւղով միայն չբաւականացաւ, վրէժմանդրութեան հոգւով լի՝ նա իջաւ Խաղնի ձորը, և յարձակուեց թող փըր փըն ջան մեծ այցում պատապարուած 700—800 երկու սեռի և զանազան հասակի մարդկանց վերայ ու սկսեց կոտորածը։ Թուրքերն անցան գետի ձախ ափին և այնտեղ դիրք դրաւելով՝ սկսեցին գնդակահարել այրը։ Աջ ամիում, Կապ կոչուած դժուարամատչելի ժայռում ամբացած երիտասարդ Պետրոս Ներանեանցն էլ հակառակ կողմից կը արեկ թափեց խաժամուժ, արիւնաբռու ամբոխի վերայ և երար յետնից 36 թուրք սպանեց։ Վերջն՝ փամփուշան սպառելով՝ ինքն էլ ընկաւ թշնամու գնդակից։ Այդ սահմանում միայնակ չէր Պետրոս Ներանեանցը, ուրիշ հայեր էլ մի այլ կէտից հրացաններ էին արձակում թուրքերի վերայ։ Հայերն ազդ տեղ՝ զոհ տուին մինչև 12 մարդ, բայց երանք էլ բազմաթիւ զոհ առան, որոնց թիւն անկարելի եղաւ իմանալ թուրքերին յատուկ գաղանապահութեամբ։

Թշնամու գնդակներն այնքան բազմաթիւ էին, որ ժայռերին գիւղելով կտոր էին լինում և կողմընթեր անդրադամամբ գիշտում էին մարդկանց երեսին։ Սրանից վնասուեցին Վարդան Սիմոնեանի և Մելքը Յարութիւնեանի մի մի աչքը։ Այդտեղ զոհ դնաց քաջամարտիկ երիտասարդ Խաչատուր Պետրոսեան Դուկանեանցը, և վէրք ստացան Գալուստ Եաւրեանցն և ուրիշներ։

Վերև, բէգերի կարգում յեշած ոմն Զիաթխան բէզն, որ իւր խմբով այդ ձորում այդ օրը, հինգշաբթի հալածում էր փախստական հայերին, մի քանի ընկերով, դադա ճանապարհով անցնում է հայոց կողմը և թաքնուաւմ է թփերի մէջ թող փըր փըն ջան այրի գլուխին, ուր պատոպարուել էին բազմաթիւ հայեր և փորձում է այդտեղ վերցնեց գնդակներ ուղարկել այսի մէջ։ Սակայն լաւ հրացանաձիգներից մէկը մի գնդակով այրի միջից այնպէս է խփում այդ Զիաթխանի ճակատին, որ զիաթավալ վայր է ընկնում նա ու անզէն գլորւում ցած այրի դուռը։ Վերեւում նրա ընկերներն են նրա զէնքն առնում փախչում, իսկ վարում հայերն են կողոպառում վըրայից հագուստան ու լանջակապ փամփուշաները, գիտկը թագցնելով քարանձաւների մէջ։ Մի քանի օրեց յետոյ Գրիգոր քա-

հանայ տէս Արքահամեանցը գտնում է դիակը և ուսիրի վերայ
դուրս քերում քարանձաւից բայց որա մասին քիչ յետոյ:

Ե.

Փոքրիկ Անահիտը: Մանուկների կուռուածր: Ազգակիցների խմբովին
կուռուածր Առաքելի ձեռնով: Մահացած բապացիների թիւր:

Մութը հասնելուն պէս թուրք ամբոխը ցըռւեց, անհետա-
ցաւ, որով միջոց եղաւ պաշարուած հայերին գուրս գոլ այ-
րեց և Քեամանգարի գլխով գեշերային մթութեան մէջ փախչել
նաև Ֆրէղէնկայ ուստ գիւղն և այնտեղից Զարդախւու, ուր
ուրբաթ առաւօտ միանելում են երեկուայ միքուած խմրի հետ:

Դրանց հետ մախչում է և Յոհաննէս Շուշանեանն իւր
Հնդամեայ Անսիտ զատեր հետ: Սակայն մի ինչ որ Հոգեկան
ցնորքի ազգեցութեան տակ նա՝ ջոկնում է և ընկնում գե-
շերը Բագա գիւղը, մտնում է իւր տունը, ուր քնացքել է մա-
տազ աղջկանը, պատուել է գիւղը, տեսել է թուրքերի սայ-
լեց ծանրաբեռնուած աւարով, ապա մինչեւ առաւօտ հասել է
Զարդախւու և այդ տեղ ու շքի գալով, նոր մտաքերել է Անա-
հիտին, բայց արդէն ուշ էր և Բագա վերագառնալն վտան-
գաւար . . . *

Ուրբաթ առաւօտ՝ մի քանի թուրքեց Թընսալի գիւղեց
աւարի տալով Յոհաննէս Շուշանեանցի ցորենի ամբարը, գըտ-
նում են այդ տանը փոքրիկ Անսիտին և տանում են իցանց հետ:
Շուշանեանցի տանից լինելը պատահմամբ լոելով Համիդ թէդ-
ջիւդագարովը աղջկան բերում պահում է իւր մօտ և երբ
հայ խմբի հետ գալիս է Բագելից և Տէր Ներսէս Տէր Յարու-
թիւնեանցը, Համիդ թէկը ցոյց է տալի նրան փոքրիկ աղջկանը
և խնդրում է ճանաչել, թէ ով է: Քահանան խսկայն ճանաչումէ,
որ թէգերին քաջածանօթ Յոհաննէս Շուշանեանցի գուտարն է:
Մանկան լացը հանգստացնելու և երեխային պահելու համար
յանձնում են նրան խմբի մէջ եղող Յոհաննէս Շուշանեանցի
քըռչը, որ ըոլոր ժամանակ իւր հետ պատեցնում է մանկան
մինչև Շամշադին, Ղազախ, Քարվանսարայ և այնտեղից Գան-
ձակ, ուր Մկրահէ քահանայ Տէր Աստուածատուրեանցի տանը
Յ օր խնամուելուց յետոյ յանձնուում է իւր Ճնողներին: Այս
քահանայի ասելով մանկան անունն է Վարդանոյ:

Այսպէս ուրեմն 1905 թուի նոյեմբերի 23 և 24 թուին,

շորեքշաբթի դիշերը և հինգշաբթի ցերեկ ու գիշեր փախստական բագացիներից մի քանի հարիւր հոգի երկուեռ անձինք, ամեն հասակի, պատոպարուեցին Խաղնի ձորի ժայռապատ այրերում քաղցած, ծարաւ և սարսափահանոր: Սարսափին այնքան էր ազգել հայ ամբոխի վերայ, որ շատերը կարծեա հոգեպէս հիւանդլինէին: Ապացոյցի համար ես կըշերեմ հետեւեալ փառաւերը:

Բայց, Աստուած իմ, ինչպէս սառնութեամբ զրի անցնեմ լուածներո, որպիսի խօսքերով նկարագրեմ զարհուրելի տեսարանները և քսամնելի իրողութիւնները:

Չորերում և քարանձաւներում թագնուած ամբոխը շունչը պահում էր, ձայնը կուլ էր տալի, որ չմատնուի հալածող անգութ թշնամուն: Փոքրիկ ծծկերները չեն հասկանում զրութիւնը, չեն կուլ տալիս իրանց ձայնը. այդ փոքրիկ արարածներին կարծես Աստուած մահուան ճակատագրի համար էր լոյս աշխարհ ըերել այդ անիժեալ օրերում: Այս սասար կամ խրատն ընկունակ էր այդ դարհուրելի բոպէին ազգել այդ անմեզ, ահաս, անփիտակ արարածների վերայ: Հենց դրանից էլ նրանք իրանց լացով կարող էին յայտնել իրանց տեղն և ամբոխին մատնել թշնամու ձեռքը:

Աւստի մեծերի, հասկացողների և հասարակաց կեանքն ազատելու համար հարկաւոք էր միջոցներ ձեռք առնել, և միւ ջոցն էր լուսնել անհասկացողներին, մանուկներին, ծծկերներին, ըռլորովին անմեզ արարածներին՝ կեանքից զբկելով նրանց: Պաշարման անիժեալ բոպէին շատացան մանուկների թշնամիներն ոչ միայն ամբոխի մէջ, այլև ծնողների շարքում: Ամբոխն անգթարար պահանջում էր մահուամբ կտրել ծծկերների ճիչը և ծնողները կատարում էին այդ պահանջը . . .

Մենք մէջ չենք ըերում ծնողների և նրանց խողխողուած և քարերի ու ժայռերի մէջ ձգած ու կահավէժ արտծ զաւակները: Անուշները:

Այդ մոլեգնութեան բոպէիներին եղել են անձնուեր, գթուած հայ և թուլք անձինք, որպիսին է Աղամ շաբացեանցի կինը:

Առջիս Մակարեանցն անսալով իւր կնոջ՝ մանկան մօք աղեխարշ լացին, իւր 8 օրուկան Սիմոն որդուն չէ մորթում, այլ փաթաթում է շորերում տէրունական աղօթքը կարգում խաչակնքում և փակում է ժայռի ծոցում: Նետեւեալ առաւոտ քաղացի Ադամ Քարայեանցի կինը, որ փախուատի բոպէին կորցել էր իւր ամսւանուն և ձորում իւր ծծկեր մանկանը կրծքին սեղմած թափառում էր փրկութիւն գունելու, յանկարծ զուրու է գալի Սարգիս Մակարեանի ձգած մանկան վերայ, մայրական գործուով լի՛ վեցնում է և այդ ըեռը և երկու մանուկով յան-

կարծ գուշս է գալի Յաղա ու մանում իւր տունը։ Մի դժանսիրտ թուրք անոնելով, ու այդ հերոս կինը պահպանել է ոչ միայն իւր այլ և ուրիշ զաւակը, ազատում է զբան միւս թուրքերի մահուան սպառնալիքից և իւր ձեռվ գիշերը հասցնում է այդ կնոջն երկու երեխայով Ֆրէկէնկայ գիշերը։ Ապա աեղական մի ուսումն օգնութեամբ կինը յաջողութեամբ հառնում է Զարդաթլու։ Այստեղ հանգիպում են Մակարեանց ծնողները, լսում են իրանց զաւակի փրկութիւնը, և լալիս են և ուրախանում, բայց չեն վստահանում վերցնել նրան տիկին Քարայեանից։ Հասարակութիւնը վճռում է, որ մանուկը պատկանում է նրա ազատարար տիկին Քարայեանցին։ Մակարեանց ծնողներն աղերսում են թոյլ տալ պահել, մեծացնել Սիմոնին և էլի յանձնել նրան իւր ազատարարին։

Գրիգոր քահանայ Տէր Աթուհամեանցը Զիաթիստն ըէգի գիտկը որոնելու ժամանակ պատահմամբ գտել է Խաղնի ձուրում մի քանի կիսակենդան կանանց և երեխանց շարքում նաև մի ամսական երեխայ, որին վերցնելով ըերել յանձնել է նրա փախտծ ծնողներին։

Այս միայն յայտնեներն են, հապա որքան մանուկներ կուսած՝ մահացած կինին, որոնք զես ևս յայտնագործուած չեն։

Ես կը յեշատակեմ մի ցնոյդ անցք էլ, որ ունի արտակարգ ընտրութիւն։

Բազ այի նոյնմբերի 23-ի յարձակման ժամանակ մի առ սին փախել են գէպի Խաղնի ձորը հետեւեալ ազգականները։ Առաքել Սարգսեան Աւազեանց (Կլմանսանց), որտ մայր Մարիամը, Առաքելի ամսուսին Զաւահիրը, սրանց ամսունացած դուստր Վարենկա, միւս զաւակ Աննա և Մարգարիտ աղջկունք և Յարութիւն, Գարեգին և Խվան աղայքը, Առաքելի հանգուցեալ եղաօր Առուստամի աղջիկը։ Այս և Սարբեդի նիկողոսեանց, սրա կինը և մի որդին, Աւետ և Մուսիք նիկողոսեանցների կանայք և սրանց հինգ զաւակները, Առաքել նիկողոսեանց իւր մայր Ազիզը և կինը և այս նիկողոսեանցների հօրեղօր Գատովար նիկողոսեանցի կին Էլբազը, ընդամենց 24 հոգի մօտ ազգականներ։ Խաղնի ձորում թագնուած ժամանակ հեռուից հրացանների ձայներ են լսում և ենթողաբում են, որ թուրքերը գոլու են և իրանց կստարելու, իսկ պաշտպանութեան համար ունին միայն մի հրացուն, որ Առաքել նիկողոսեանցի ձեռքումն է։

Այս Առաքելն ամբողջ գէշեր հրացանը ձեռքին գետի ափում շարունակ գաղտնի պատառում էր և շուտ—շուտ խորհրդագուստ կերպով շնչուում էր իւր մօր և կնոջ ականջին։ Մի շշունջ ընկաւ այդ խմբի մէջ, որ իջրե թէ Առաքել նիկողոսեանցը

մտադրւում է բոլոր խումբն ոչնչացնելու, որպէս զի թռւրք քերի ձեռքը չընկնեն: Առաքելը կոշտ, կոպիտ, կռուարար, գող մարդ էր և խռովըն իրաւամբ այդ բոպէին վախենում էր նրանից և մանաւանդ նրա մօրից՝ Ազիզից, որ կարծես խորհրդակեց էր Առաքելին: Ո՞ւր գիմել, ո՞ւմ ապաւինել, մի կողմից թռւրքն է ապառնում, միւս կողմից կոշտ Առաքելի հրացանը: Աւետը և Մուխին վախել էին ուրիշ կողմից վերայ, Սարիբէդն էլ մի հեղ և ժաղկից վասուած աչքերով մարդ էր, որ մինչև անգամ կարծելով թէ իւր խորթ եղբայր Առաքելն իրան է ուզում սպանել, ինդրում էր իւր խորթ մօրը Ազիզին՝ որ գոնէ խնայէ իւր միակ մանուկ որդուն:

Չանցաւ մի քանի ժամ և ահա Առաքել Նիկողոսեանցը գնաւակահար է անում իւր վիեսայ Կըլմանանց Առաքելին, ապա սրա կնոջն իւր քրոջ Զավահիրին, իւր խորթ եղբայր Արքիրէդին, սրա կնոջն ու սրդուն և այլոց: Ոյդ սոսկալի տեսարանից զարհուրած՝ Աւետ Նիկողոսեանի կին Մարգարիտն իւր Գրիգոր մանկանը գրգած 5—6 տրշին բարձրութեան ժայռից իրան ձգել է լնացած գետի մէջ յաւ համարելով խեղուել՝ քան գնդակահար լինել: Առկայն նախախնամութիւնը պահպանումէ նրան և նա մագլցիլով միւս ափի ժայռը գուրս է գալի և վախչում իւր մանուկով և խառնուելով այլ խմբի հետ հառնում է Չարդախլու:

Ապա գաղանի կերպով վախչում է և աղաւում Պատպար Նիկողոսեանի կին Ելբազը: Մուխի Նիկողոսեանի 5 տարեկան աղջիկն իւր մօր սպանուելուց յետոյ սարսափահար ընկնում է մարդասպանի մօր-Ազիզի գիրին ու աղաւում է: Եւ այսպէս վերոյիշեալ 24 հոգի խմբից աղաւում են Առաքելի գնդակից միայն եօթ հոգի: Աւրեմն Առաքել Նիկողոսեանցն այդ գիշեր սպանել է տառն և եօթը հոգի իւր աղգականներից:

Ոյդ ահագին բազմութիւնն ոչնչացնելուց յետոյ Առաքելը հանգստութեամբ սկսում է կսղոպանել սպանուածներին, վերցնում է նրանց վրայի երեցող իրերը և յանձնում է իւր կնոջը, հանում է իւր վիեսայ Առաքելի վրայից հագուստն և հաղնում է ինքը, իսկ իւր հարազատ քրոջ աղջկայ գլխի շալը կապում է իւր վիզը և ապա գիտիները մի աեզ հաւաքած ինքն և իւրայինը հանգիստ կերպով մի այլ խմբի հետ դուրս են գալի Չարդախլու և ապա Բարսում, ուր մնում է բաւականին, բայց անցքի մասին ոչինչ չէ յայտնում: Իսկ հասարակաց կարծիքն ընդունում էր՝ որ 17 հոգի միատեղ սպանուել են թշնամի թռւրքերի ձեռքով:

Հատ ժամանակ յետոյ գաղանիքը բացւում է երկու ա-

գատուած հարսների-էլքազի և Մարդարիտի մեջոցով։ Դա չնակացականները վճռում են կեսանքից զրկել Առաքել Նիկողոսեանցին այդ շտեմնուած արաքը համար, բայց նա ազատում է վըտանդից փախուստ տալով թուրքերի մէջ, ուր, ասում են, արդէն սպանուած է։

Հասարակութիւնը ապշել է այս անցքի վերայ և չդիտէ, թէ որպէս բացատրէ Առաքելի եղերական արաքը, արդեօք կողսպաւաի ցանկութեամբ թէ զարհութելի անցքերից աղջուած խելագարութեամբ։

Խոպառ ոչնչացած այդ գերդաստանների շարքում հարկաւոր է զնել Գրիգոր Սարգսեանցի (Աննայեանցի) օ հոգուց բաղկացած գերդաստանի ջնջումն։ Այս միամիտ մարդուն ձայն է աալի հազիք իւզբաշին, թէ Ալլահեալ քէդը կանչում է։ Գրիգորը հաւատում է և հէնց գերդաստանով զոհ է զնում Խրմաշլուեցի Մհար Հասան օղլու սրին։ Միայն Գրիգորի կինը վիրաւոր մեռած ձեւանալով՝ աղատուում է։

Եւ այսպէս ուրբաթ օրը, Նոյեմբեր 25-ին այնէ Բագայի—աւերման երրորդ օրը գիւղում այլեւս ոչ մի հայ չկար։ Ամբողջ գիւղը զրկուած իւր հարազատ ընակիչներից, մատնուել էր հրոսակների խմբերին, որոնք տէր էին զարձել հայեցի գիզած հարսուութեանը և առանց քաշուելու, առանց երկիւղի, թէ հայեցի և թէ բարեխնամ կառավարութեան տեղական իշխանութիւննեների կողմէց, կրում տանում էին իրեն ոհողհականութիւն հարսուութեամբ։ Նոր տէրեցն ամեննեին չէին շաապում, հանգստութեամբ էին գործ աենոնում և կրում էին ինչքը ընտրութեամբ, այսինքն նախ թեթև բաները, ապա էիչ ժամանեցը (ցողեն եւն,.) և վերջն արդէն շինութեան փայտեղէն մասը, գռներ, գերաններ, տախտակներ, և այլն։ Եւ այս հանգիստ աւարը շարունակուեց երեք ամիս։

Երեք օրում, Նոյեմբերի 23, 24 և 25, այսինքն քանի օք որ շարունակուեց կուիւն և հայեցի փախուստը, Բագայում, Գումերում և Խաղնի ձորում ընդամենը, ինչպէս ցոյց են տալիս ժողոված տեղեկութիւնները, մահացել են մի հարսիւր տառն և վեց (116) երկուու և զանազան հասակի հոդեք։ Այս կուրուսը կիերաքերի բազմաթիւ գերդաստանների, այսինքն կան գերդաստաններ, որոնք զրկուել են մի կամ երկու անդամից, կան որ մարդկացին կորուստ չեն ունեցել։ Բայց երեք գերդաստան բոլոր անդամներով իսպառ ոչնչացել են։ Սրանք են վերը յիշաշատակուած Առաքել Առագեանց (Կըլմանանց՝) կոտորած իւր աներձագ Առաքել Նիկողոսեանցի ձեռքով։ Մարիբէկ

Նիկողոսեանց՝ կոտորած իւր խորթ (երկրորդ մօրից) եղբայր նոյն Առաքել Նիկողոսեանցի ձեռքով և Գրեգոր Սարդոսեան (Աննայեանց) կոտորած Կաղիր իւզբաշու նենդութեամբ և Մհար Հասան օղլու ձեռքով:

L.

Բարբացիների փախուսը դեպի Զարդախու եւ այլ գիւղեր, դիմումն Գանձակի զեներալ-նահանգապես զեներալ-իշենան Ֆիկր էերին եւ Կովկասի Փոխարքայ Կոմս Վարոնցով-Դաւկովին:

Փախուտական ժեղովրդի ամենախոչըր մասը ճանապարհ ընտրեց գէպի Զարդախու և հետեւալիս միւս հայ գիւղերով գէպի Պանձակ: Զարդախուուի հատարակութիւնն, որ նոյնական էր գրութեան մէջ էր, երկու անդամն էլ հերոսաբար կաւել էր թշնամու յարձակման և երկու անդամն էլ հերոսաբար կարուզացել էր անդրագարձնել թշնամուն մեծ կորուստ աալով նորան, կարեկցաբար ընկունեց փախուտական հալածուածներին, առժամանակ պատուալութեց նրանց իւր ընակարասներում և կարելոյն չարի ուահմանսարկուեց նրանց քաղցն ու ժարաւը:

Կարեկից ժողովրդի պարագլուխներն էին Գէորգ քահանայ Մանասեանց, Մակար քահանայ Տէրութեմանեանց, տանուակէր Պետրոս Բաբաջանեանց, Խոշտառուք Գտոսպարեան և այլք, որոնք իրանցից ոչխարներ էին մորթում և հառարակոց քացօզեայ սեղանի վերայ կերակրում համայն միախստականներին:

Վերջիններս մի ոռժամանակ մնալով Զարդախուում, սրտով այցրում էին իրանց հայրենիքի վերայ, իրանց քայլքայուած օջախի վերայ, մանաւանդ իրանց մերձաւորների վերայ, որոնք սպանուել, մնացել էին դաշտերաւմ և քարանձաւներում իրեր թռչնոց և գաղտնների կերակրուր Բաղայի աւերումից 8—10 օր յետոյ մի քանի բաղցիներ մտադրուեցին վերադառնուլ միասին գիւղը, աեւներ նրա գրութիւնը, արտասուք թափել անցեալ փառքի վերայ և, եթէ հնարաւոր լինի, թաղել իրանց հարազաների գիւղիները:

Եւ անձնական սպահովութեան համար նրանք նախապէս դիմեցին Սլաւեանկա ուուս գիւղում գանոււոդ կազակների օգնութեան, որոց գլխաւորն էր հայազգի Ալիանվերգովը: Ցիսուն կազակների հովանաւորութեան ներքոյ բադացիք վաղ առաւօտ ժողովեցին հանգուցեալների նշխարները առանել ամփափելու և այդ ժամանակ գիւղի վիղոցներում շնուր թեան մացանը:

բարձած կանգնած էին 45—50 սալեր, որոնց թուրք տէրերը կազմակերի աճեց վախել թագնուել էին: Այդ միջոցին յանկարձահառ երևաց հագայում Ալլոհեար բէդ Զիւլդադարովն սպիտակ շորերով, շնչապատուած թուրք ձիաւողներով: Սրբ ներկայութիւնից թագնուած թուրքերը սիրտ առան և գուրս եկան և կազմակերի քիչ հեռ անալուց օգտուելով սկսեցին հրացաններ արձակել հայերի վերայ: Խուռ հանդիսատես կազմակեները բացատրեցին, որ երաւունք չունին զէնքով խառնուելու, որից ստիպուած՝ հայերը զագաղի մէջ թողնելով Պօղոս Եաւը բեկանցի գիտեր և միւսների նշանները՝ փախան Զարդուիլու:

Բազացիք տեսնելով Զարդախըլու վատանգաւուր գրութիւնը մտադրուեցին հեռանալ դէպի Զագիք ու Գանձակ, բայց զիջանելով չարգախուեցցոց թախանձանքին, նորից մնացին, որպէսզի կոփեների ժամանակ օգնական լինեն: Խոկ չարգախուեցիք սոոչեցին դիմել Գանձակի գեներալ նահանգապետին և թուրքերի յարձակման դէմ զօրք խնդրեցին: Խնդրը յանձնուեց բագացիք Մեսրոպ քահանային, որ երկու հայ ուղեկիցների հետ ծպահեալ ըսկաւ ճանապարհ: Այդ միջոցին Զագիք գիշերի դիմել հառարակութիւնը թուրքերի յարձակումից վախենալով լիմբովին տեղափախուում էր Բարսում և Գառանակեր դիւղիքը:

Նրկուչառթի, Նոյեմբերի 28-ին, Մեսրոպ քահանան ներկայացաւ Գանձակի յաջորդ Կողեւն վարդապետին, որի միջնորդութեամբ և դեներալ նահանգապետ գեներալ Ֆէլչչերին: Գեներալը ապշտօն լուրով էր քահանայի բերանացի զեկուցումը Քադայ: Թարմ կորսուեան և Զարդախըլու պաշարուած զառը վիճակի մասին, անդամ գուուարութեամբ էր հաւասարում պատմուածին և զարմանում էր, որ մինչև այդ սուպէն ոչինչ չէ իմացել ոչ տեղական ոստիկանութիւնից և ոչ Ալլահեար բէդից, որ երկու օր առաջ իւր սօմն է եղել:

Գեներալ Ֆէլչչերը նոյն օրը կազմեց, որ մի զօրաբաժին մի թնգունօթով հապճեալ գնոյ երկաթուզով Գոլլար և այնտեղից Զարգախըլու: Զօրաբաժինը ճանապարհ ըկաւ հետեւալ օրը, երեքշաբթի, Նոյեմբերի 29-ին, որոնց հետ և Մեսրոպ քահանան թուրքերից ապահով կարողացաւ հանել նոյն օրը Թիֆիեզ:

Դեկտեմբերի 1-ին, հինգշաբթի օրը Մեսրոպ քահանան երկու հայ պաշնաների առաջնորդութեամբ ներկայացաւ Թիֆիեզ առաջնորդ Գարեգին արքապիսկոպոս Ատթունեանին, ուն իւր կողմից ներկայացրեց քահանային իւր ուղեկիցներով հանգեծ Վեհափառ Հայքապետ Խրիմեանին, որն այդ միջոցում Թիֆիեզումն էր: Վեհափառ Հայքապետը խիստ յուղուած ունինքեց Մեսրոպ քահանայի սըտաճմէիկ պատմութեանը Բագայի-

ռոսկում' անրի մասին, ժողովրդի գառնազէտ վիճակի մասին և արտասուեցի Մեսրոք քահանայի ցնցութեները տեսնելով՝ Վեհաշիառը հրամայեց հագուստ կարել տալ նրա համար, կարեռը ծախսերն ապահովացնել, նուիրելով և իրանից 10 ռուբլի:

Վեհափառ Հայութեալը պատուիրեց նոյնպէս, որ շուտաւ փոյթ հոդան Բագայի ժողովրդի համար ուղարկել հագուստ, անկաղըն և այլն, իսկ նպաստամասոց ժողովը յատկացրեց 5000 ռուբլի ալիւս կնելու:

Նոյն 1905 թուի Դեկտեմբերի 3-ին Մեսրոք քահանան առանձին խնդրագրավ ներկայացաւ Փօխութքայի արքունիք, ուր Փոխարքոյի տեղ ընդունեց նրա օգնական գեներալ Մալաման:

Խնդրագիրը կարդալուց յետոյ գեներալ Մալաման զանազան հարցեր առաջարկեց քահանային: Քահանան ըանաւոր կերպով խնդրեց կարգադրութիւն անել աղատելու այն 800 հոգի գերիներին, որոնք տարուել էին Խըննալի գիւղն և թէ այդ գործը կարող է դլուխ ըերել միայն Ալլահեար բէզն, եթէ Թիֆլիզից նրան հրաման գնայ: Գեներալ Մալաման խոստացաւ անյապաղ կատարել վերջին խնդիրն, իսկ դրաւոր խնդիրն ուշադրութեան առնել:

Բագեցոց նպաստ հասցնելու գործն այնքան էլ արագ չէր կատարւում, որովհետեւ այդ ժամանակամիջում երկաթուղիների գործագուլ էր և Մեսրոք քահանան իւր նպաստներով հաղիւ կարողացաւ 1906 թուի յունուտարի առաջին օրը գուրսագալ Թիֆլիզից Գանձակ յաջորդի մօ, որը լիազօր էր նպաստները բաժանելու: Վարդապետն ոկնեց բաժանել այն բագացիներին, որոնք միջոցին հասել էին Գանձակ: Նպաստ բաժանելու լուրը հրապուրեց քաղցած բագացիներից շատերին գեալի Գոնձակի Բաց նրանցից շատերը գեռ բաժանուած էին հայ գիւղերում, մանաւանդ Բանանց և Խաչկապ գիւղերում:

Մի խումբ բագացիներ կարիքից ստիպուած ճանապարհ ընկան դէպի Գանձակ և Բաջուր գիւղը հասնելով ընկերացան մի քանի սայլապանների, որոնք սայլերով խոտ էին տանում Գանձակ ծախելու: Համնելով Թուփալ Հասան լու թքքարնակ գիւղը՝ փախստական խումբը նոյնպէս և բրաջուրցի սայլապաններն ենթարկուեցին յարձակման աւազակարարոյ թոփիալ հասանլուեցոց կողմից, որի ժամանակ սպանուեց մի բրաջուրցի սայլապան, հրգեհուեցին՝ սայլով խոտերն ու գերի գնացին իննը բագացի՝ այն է երեք կին և վեց երեխայ աղջիկ ու տղայ: Բացի դրանից այդտեղ հրդեհուած սայլի խոտի վերայ կիսով շափայուեցին և ապա գնդակահար եղան ու Գանձակում թաղաւեցին բագացի Դըռիշանց այրի Զավահերն և որդի Յոհաննէսը:

Թովիալ Հասանլու դիւզի աւագակաբարոյ վարժանց և հաշերի վերայ յարձակմանց մասին իւր ժամանակ—(1905 վերջում և 1906 թուի սկզբում) շատ գրուեց Թիֆլիզի հայ լրագրուելու և դատ պահանջուեց նրանց դէմ արժանապէս պատժելու համար:

Անչեցէ թօվիալ-հասանլուեցիք գերիներին տարան Գանձակի Բաղմանլար կացուած արուարձանը: Գեներալ Նահանագապետ դեներալ Ալ'ֆատանի հրամանով, որին խնդրել էին տեղական հայերը, Գանձակ դետի կամրջի վերայ փոխանակեցին թուրք գերիների հետ: Փոքը յետոյ, նոյն այդ խաղաղապերութեան միջնորդ կամրջի վերայ փոխանակեցին բանանցեցի Սարգսի աղջկանը և բաղացի Աւէտ Բաղդուհանի Բալախան ու կուտանքն էր, որին գերել էին թուրքերն Աննենքելզ գերմանական դադութում և տարել էին Ա.ափանլու թուրք գեւզն, որ գրած է, Կուր գետի աջ ափում, Նամքոր գետի միացման տեղը: Բալախանումն իրնէ ջղային հիւանդ էր, օգնութիւն էր որոնում մըշտ զանազան ուխտատեղիներում և այնքան էլ խելահաս չէր: Վափանլուում նա արգէն ամուսնացել էր մի թուրքի վերայ: Երբ Բալախանումն ըերին միջնորդ կամրջի վերայ փոխանակելու, նա նոր թուրք ամուսնուն նախադաս համարեց հին հայ ամուսնուց, գուցէ և վախեցաւ ոպտունալիքներից ու հրաժարուեց փոխանակուելուց: Սրա մասին խօսեցին Թիֆլիզի հայ լրազների թղթակիցները: Սակայն Բալախանումը շուտով մեռաւ իւր նոր հայրենիքում:

Գեներալ Ֆլէշերի նոյեմբերի 29-ին ուղարկած զօրախումըն ազատեց Զարդախլուն թուրքերի յարձակումներից: Զարդախլուեցիք սկզբում սիրով ընդունելով բաղացիներին յետոյ բնականաբար ճանձրանալ սկսեցին նրանցից, թէև փախտականների մեծամասնութիւնն աստիճանաբար արգէն ցրուել էր շրջակայ հայ գեւզերում մինչև Գանձակ:

Այսպէս ըացի Զարդախլուից, բաղացիք կային նաև Զաղիք, Քարսում, Գառնակեր, Փիք, Խոչկապ և Բանանց գեւզերում, ուր տեղական ժողովրդականը շատ կարեկցարար էին վերաբերում և աշխատում էին ամոքել նրանց վիշտը: Այսպէս օրինակ Զագիրում նշանաւոր էին Յոհաննէս քահանայ տէր Խաչատրեան, Աքդար Գրիգորեանց, դարբին Խաչատրէի որդի Առուստամ և այլք: Ամբողջ հասարակութեամբ կերակրում էին ոչ միայն իրանց հիւրերին, այլև մօտ լինելով ուղարկում էին բաղացոց համար Զարդախլու ալիւր, հաց, լոբի, կարափէլ, և այլն: Բարսումըն պարագալուի էին Եփերէմ քահանայ Մելիք Առուստամեանց, Ա.առիլ ըէգ Մելիք Առուստամեանց, Սարգիս

Աղաջանեանց գիւղական տանուաէրը և այլք: Գառնակեսում Յովսէփ քահանայ Յոլեանց և միւսները: Փերում-Յոհաննէս քահանայ Խոջայեանց և Մովսէս քահանայ Մամիկոնեանց, գիւղական տանուաէր Յաւառարդը և միւսները: Այս գիւղում ըացի կերակրելուց, տալիս էին և հագուստ, անկողին, ոտնամաններ և այլն: Խաչկապում-Գրիգոր քահանայ Նուզրեանց, Անանիա քահանայ Եիրակունի, Յոհաննէս քահանայ տէր Սաելիանեանց, տանուաէր Պաւլի-Խպիսկոպոսեանց և այլք: Բանեանցում-Պօղոս և Անտօն քահանաները, տանուաէր Դուկասը, Վաղգէն Տէր Աւետիքեանց, Յարութիւն Միրուն-Նանեանց և այլք: Գանձակում Ճրիապէս տուել էին իրանց տները Կարապետ Յաթաշեանց, Յովսէփ Քեատիմեանցը, պարոն Նամլարը: Ընդհանուր վերահսկէ էր երեցիոս Սիմոն բէդ Յարտրեօթիկեան:

Զի կարելի մոռացութեան տալ Արթավաս գիւղի ոռւոգուխարօն երեք եղբայր Խուզակոլների նու էրը թշուառ ըաղացիների օգտին: Էացի այն, որ երեք հարեւը փութ ցորեն ծախելով 10 տոկոս զիջում արեն իւրաքանչչւը վիժում, երեք եղբայրները միասին նուիրեցին 200 փութ ցորեն և կարտոֆէլ:

Յագացի վրախոտականներն իրանց գոյութիւնը պահպանելու համար ցրուած էին զանազան հայ գիւղերում: Արտէս զի որոշ լինի նըանց քանակը, յիշատակում եմ այստեղ այն ցուցակն, որ կազմել է բաղացի Մեսրոք քահանան, երբ նանպաստներ ըստ ժամելու նպատակով շրջել է գիւղերը 1906 թուի յունու արին և վետրուարին:

Գիւղերն իւ աղաքը	գիւղան տան	արաւ- կան	իգական	բոլոր
Տարգամլու *	• • • •	47	153	130
Ջագիս *	• • • •	2	5	6
Բարսում	• • • •	15	54	64
Գառնակեր *	• • • •	1	4	2
Փիր *	• • • •	2	8	5
Խաչակապ *	• • • •	33	109	106
Բանանց	• • • •	61	207	173
Գանձակ կայտարանում *	•	27	73	67
Գանձակ (քաղաք) *	• • •	89	267	231
Ընդամենը		277	880	784
				1664

Ուրեմն Գանձակի գաւառի հայ գիւղերում պատասխանած էին 1906 թուի ձմեռը 1664 հոգի բաղացիներ, ու ուն թւում այդ ժամանակ կային կռուի մէջ վիրաւորուած 17 առական և 8 իդական, բոլորը 25 հոգի 19 գերդաստանից: Ժա-

դովրդի միւս մասն, ինչպէս տեսանք վերևում, գնացել էր այլ ուղղութեամբ, գէպի նամշաղինու գիւղերը Աազախի գաւառի և նրանց մենք զեռ ևս թողել ենք Քեշիշլեանգում և Բաղ-լիգում:

Թ.

Հոսանք դեպի Բագլիգ գիւղը եւ կողոպատի հնիրակալիքը: Աանգ Զիւլգապառվ բեգերի մօս: Հայեր միջիպաւմ. Դրիգու Բահանայի հետախուզութիւնը. Ոմանց հայերի բնոկափայրը Քեշիշեանդում:

Փախուտական Բագացիների մի ստուար մասը սարսափի տակ իրան ձգեց, ինչպէս տեսանք նախընթաց գլուխներում խազնի ձորի տնաւառները: Այդտեղ ահ ու սարսափից ձայն ծպտուն չէին հանում, որ չմատնուին գազանաքար հալածող թշնամու որին ու գնդակին: Գլուխը կորցրած չգիտէին որ կողմի վերայ զնան և ուր թագնուեն: Փողովուրզը վայր ի վերոյ բաժանուել էր պատահնուկան խմբերի: Ահտ առաջն խըմքերից մինը թեքուեց գէպի հարաւ և մթան մէջ ցրիւ գնում էր: Ճանապարհ ժայռոտ էր և անտառալատ, որից վերև լեռոն է բարձրունում, ներքե ձորն է խորանում: Հասան այստեղ, որ կոչւում է Սուլթան-Սաքիւ, Թաքեայ-դայտ թըրքաբնակ գիւղի գէմ: Այս գիւղը և նրան կից Քէշ'ըաթ գիւղը միասին կոչւում են Սուլթան:

Այս գիւղերի ընակիներից մի խումը թուրքեր վազքաջ ընդ առաւուն ճանապարհ էր ընկել գէպի Բագա՛ թալանից մասն ու բաժին հանելու իրան: Սրանք չէին սպասում, որ որսն ինքն իրան է որսորդների առաջ գուրս եկել: Բագացիք նոյնպէս չէին սպասում: Զինուած թուրքերը գիշերը շրջապատեցին փախըստական բագացիներին և սկսեցին անողորմաքար թալանել, խլում էին հայերից զէնքեր, փամփուշներ, հաղուստեղէն, ոտնամաններ, զբամ, մի խօսքով ամէն բան, ինչ որ ընկնում էր նրանց ձեռքը:

Հայ խմբի մէջն էր և Բագայի կառավարութեան գիւղական գպրօցի աւագ-ուսուցիչ՝ Գոնձակի Մկրտիչ քահանայի որդի երիտասարդ Գագիկ Տէր Աստուածատարեանը: Սա տանում էր ձեռքին իւր բարձը և սպաշտօնական զգեստը (մունզիրը): Ի զուր էր հաւատացնում Գագիկը, որ ինքը ուսուցիչ է և այդ կոչման մէջն էր որսում իւր իրեղէնների պաշտպանութիւնը: «Մի և նոյն է, Հայ եռ» բացատրեցին թուրքերը և խլեցին Գագիկից մինչև անդամ հագի կօշիկները և թողին նրան բորեկ. իսկ կոյն մինը հագաւ և կօշիկները և համազգեստը:

Անտօն Տէր Վարդաննեանը կողովուողից խնդրեց նրա հին տրեխները, հագաւ ինքը և իւր շուստերը հագցրեց ուսուցիչ Գագկին:

Այս կողովուտի ժամանակ ահարեկ ժողովրդի սարսափը այնքան խիստ էր, որ նրանցից շատերը իրանց ձգեցին ձորի, անտառի և քարերի մէջ և անհետացան մինչև հետեւալ օրը: Անձնական վրէժ ունենալով Խաչատուր Մարդարեանցի հետ՝ վերջնին ըռնեցին թուրքերը այդ տարաբազզ միջոցին և կամ մենում էին սպանել նրան: բայց մի քանի հայերի խնդրանոք և գլխաւորապէս իւր Մարդարեանցի թագուտեամբ խաւար անտառի մէջ՝ սպանութիւնը տեղի չունեցաւ: Սակայն այս միջնադէպի աղջեցութիւնից՝ Մարդարեանցի զըրանչ Թագուտհի նզեանցը յանկարծակի անդամալոյն եղաւ հէնց այդաեղ և այլ ևս չկարողացաւ շարժուել, որ և յետոյ մեռաւ ներդ գիւղում (Նամշագինու դ.) Կողովակելուց յառաջ թուրքերը թոյլ տուին հայերին շարունակելու իրանց ճանապարհը:

Հայկական խումբը սարսափի աղջեցութիւնից չէր կարողանում հանգստանալ, երբ մտածում էր, որ մինչև Շամշագինու հայկական Դուլալի տուաջն գիւղը հասնելը պէտքէ անցնէր թուրք գիւղերի մօտով և ութեմն ո՞վ գիտէ, թէ ի՞նչ փորձանքների պէտք է ենթարկուէր: Աւստի մտածեցին գիմնէլ Զիւլգադարով բէդերի օգնութեան, որոնք ընակւում էին Յ-կ վերստ հեռաւութեամբ, հէնց ճանապարհի վերայ: Վճռեցին մարդուղարկել թէգերի մօտ և կանխօրէն աղերսել նրանց հաճութիւնը: Մարդը դանուեց: Խըրի մէջն էր Աղասոնց Մարտիրոսը, որ քրուտ լինելով՝ մօտ ծանօթ էր Զիւլգադարով բէդերի հետ: Սա մի քանիների հետ յառաջ խաղաց մթութեան մէջ և հառաւ Բագլի գ գիւղը ուղղակի Ազել բէդ Զիւլգադարովի մօտ:

Բագլիդ կոչուածը մի փոքրիկ գիւղ է Զագամ գեափ վերայ, հինաւուրց կամրջի մօտ, Բագայից գէպի հարաւ, 4-5 վերստ հեռաւորութեամբ: Խըննալու գիւղի մի մասը լինելով՝ կոչւում է Բագլիկ, ըստ որում նրան հիմնել են իրանց ընմակութեան համար Զիւլգադարով բէդերը և շոջապատել են գիւղը մի հապարակաց պարսպով, որի երկու կողմի լայն պարսպագուները փակւում են գիշերները:

Նշանաւոր կալուածատէր եղաւարք Զիւլգադարով բէդերը, Մեհրալի բէդ, Համիդ բէդ և Ազել բէդ իրանց ոչ սակաւաթիւ գիւղաստաններով մշտավէս ընակւում են այդ Բագլի գուման Ալահեար բէդ Զիւլգադարով՝ թէւ յիշեալների մեծ եղբայրը, բայց նա ընակութիւն է հաստատել սակաւ ինչ հեռաւ Բէցի շիք եան դ կոչուած հայկական աւերակների վերայ:

Վերջապէս՝ նոյեմբերի 24, հինգշաբթի առաւօտեան հաւականչին բրուտա Մարտիրոսը ներկայացաւ Աղիլ բէդին, յայտնեց փախստական հայերի գրութիւնն ու գալուստը, որի համար Արդիւլ-Բէդը հաճութիւն յայտնեց և հրամայեց իւր ծառաներին տեղաւորել հայերին առժամանակ զոմում։ Հայերը լուիկ մնջիկ մօտեցան Բագլիղին, ուր թուրք գիշերապահները տեղեկութիւն չունենալով՝ բարձր հարցըն՝ թէ ոյք են մօտեցողները և պատախան չոտանալով մի հրացան թնդացըն օդի մէջ։ բայց պատուիր ստանալով Աղիլ բէդից՝ լոեցին նուի հայերի լուութիւն պահելը դիտաւորեալ էր, որպէս զի վատանգաւոր հայ լինելը չյայտնուի։

Առաւօտեան լուսաբացին Աղիլ բէդը թաշկինակը աչքին, նայեց հեռուից թշուառ հայերի վերայ և ապա ամէն տեսակ վտանգից պահով պահելով նպատակով, հրամայեց տանել հայերին մէջիգի ներոք։

Այս առաջին փախստական խումբն էր, որ այս ուղղութեամբ հառաւ Բագլից։

Հայերին մէջիդ հրաւերելու նպատակն էր, ինչպէս բացատրեցին հեւրասիրողները պահով պահել հայերին այն վրիժառութիւնից, որով համուկուած են Յադայում սպանուած թուրքերի ազգականները։

Սանօթ թուրքերը սկսեցին այցելել հայերին մէջիգում՝ բերելով Նըմանց համար հաց, պանիր, միու և այլն։ Ուտեցիք ուղարկեց և Աղիլ բէդը։ Սակայն մարդասիրական վերաբերմունքը նսեմանում էր մի այլ տեսակի այցելութեամբ։ Հինց առաւօտունից սկսեցին յաճախել զանազան ծանօթ և անծանօթ թուրքեր և մալաներ, որոնք առաջարկում էին փախստական հայերին ընդունել մահմեգականութիւն, քարոզելով ող հայութիւնն արդէն վերջացել է, այլ ևս ոչ մի հայ չէ մնալու երկրի երեսին, առաջարկում էին սափրիծ բերել։ Քարոզիչները ամբողջ օրը գնում գալիս էին և կրկնում էին նոյն քարոզը։ Չէին երկում մէջիգում միայն Զիւգագարով բէդեր։ Հայերը խորին լուութեամբ էին տանում քարոզները . . .

Անցաւ առաջին օրը, երեկոյեան գէմ հայերին դուրս բերին մէջիգից և բաժանեցին երկու մասի, մեծ մասը տարան գիշերելու Աղիլ բէդի ընակարանի ներքին յարկը, փոքր մասը նորից էլի գոմը։ Բոլորը միասին մօտ 200 հայ էին։ Երեկոյեան սաջի վերայ թխած հաց բաժանեցին ինչպէս Աղիլ բէդի կողմից, նոյնպէս և ծանօթ թուրքերի կողմից։

Աղիլ բէդի ծառաները զգուացնում էին փախստականներին պահանջելով Նըմանցից վառօդ, փամփուշտ և այլ երե-

զէններ և մահով էին սպառնում՝ եթէ մինը կամ միւսը կը յայտնէր բէդին։ Այնուամենայնիւ բռուտ Մարտիրոսը յայտնեց Աղիլ բէդին, որը խիստ յանգիմանեց ծառաներին, մանաւանդերը իմացու բէդը, որ Խաչատուր Նղեանցին մի թուրք պնդեւ լիս է եղել, որ իւր ձեռքի մտաց կարի և մտանին հանի ու տայ թուրքին։

Հետեւեալ օրը, ուրբաժ, նոյեմբերի 25 հետդհետէ եկան նոր խմբեր և դիմեցին Ֆեհրալի և Համբիդ բէդերի կարեւեցութեանը Սակայն պէտքէ նկատել, որ այս նոր խմբերը, որոնց մէջն էին և Բագայի երկու քահանայք՝ Տէր Ներոէս և Տէր Գրիգոր, նախ քան Բագլիկ հառնելը, նոյնաբէս միւս խմբերի նման, մնացել էին շիւարած Խաղնի ձորում. թէ ուր գնան և ո՞ւմ դիմեն։ Վերջին յոյները զնելով կրկին Զիւդադարսի բէդերի վերաց, որոնք էլ, առաջին խմբի նման, դեսպան ուղարկեցին բէդերի մօտ։ Ան երկիւղով վատահութիւն յայտնեցին գնալ վատանդուոր գիշերացին ճանապարհ Ղահրաման Դաթուցեանց, Յարութիւն Գանիէլեանց, և երկու ուրիշները։ Արանք որոշեցին գիմել էլի Զիւդադարսի բէդերին, գլխաւորապէս Համբիդ բէդին, որ թէկ մի անուս, կոչու ու կոպիտ մորդ էս, այնուամենայնիւ փախստական մի խումբ հայերի կարծիքով նա ազնիւ էր և վատահելի։ Գեռապաները գնացին և չվերադարձան ամբողջ ցերեկ։ Խաղնի ձորում ահ ու գոզով սպասող 700 հոգի հայ ժողովրդի տարատմ զրութիւնը անտանելի էր։ Վերջապէս, գեռապաները, բացի Գաթոյեանից, որ մնացել էր Բագլիկում, ուշ երեկոյեան վերադարձան Խաղնի ձորը՝ բերելով իրանց հետ Համբիդ բէդի տուոծ երկու թուրք ու ղեցոյցներին։

Կանացք և երեխայք տեսնելով ալդ անծանօթ զինուած և ձիաւորուած թուրք ուղեցրցներին, լաց ու կոծ քարձրացըն անտառի մէջ, կարծելով թէ սպանելու համար են եկել։ Աւզեցոցց թուրքերից մինը առաջից, միւսը ամբոխի յետելից, կոսմաց կամաց շարժուեցին գիշերուայ մթութեան մէջ գէպի Բագլիկ։ Ժողովուրդը խոնուած տարածուել էս մի վերսակ վերաց և որոշ չէր՝ թէ ով ում հետ է գնում, իւրաքանչիւրը մտածում էր լոկ իւր վերաց։ Գրացի թուրքերի ահից, բէդերի կողմից կարգադրուած էր, որ ժողովրդի հոսանքը կատարուի գիշեր ժամանակ, ուղեցոյցներն էլ իրանց կողմից խորհուրդ էին տալիս յառաջ գնալ լուռ ու մունջ և նօթ հարիւր հոգի լուիկ ու մնջիկ . . .

Եւ այդ սոսկալի լուռութեան մէջ, խմբի յետե, ճանապարհի մթութեան մէջ լուռեց մի ծծկեր մանկան լացի ձայն։ Գագէն ձգած մանուկ էր, որ իւր լացով կարող էր վտանդի են-

թարկել միախստականներին, ուստի թուրք ուղեցոյցը խորհուրդ
տուեց վերցնել այդ մանկան: Հապա ո՞վ վերցնե, ամէնքն էլ
ունէին իրանց ուսերի վերայ մի մի սեփական մեծ կամ փոքր
երեխայ: Այնուամենայնիւ մի տղամարդ, թէև ունէր ուսին
իւր սեփական երեխան, վերցրեց այդ թշուռառ մի տարեկան
արու մանկան և 2-3 ժամ տանելով ու չգտնելով նրա ծնող-
ներին, նորից դէս ձգեց տարաբաղդ մանկանը: Մի կին իւր
կիսամետայ աղջիկ մանկան ձայնը կտրելու համար՝ գետնի
վերայ պարկեցրեց մանկանը, երեսը դէպի գետին և մի քար
զրան դնելով, թողեց ու շարունակեց իւր ճանապարհը . . .

Երկու վերստացափ տարածութիւն էր մնացել, որ հաս-
նէին Բագլիկ և ահա գուրս եկան բազմութեան առաջ կ զին-
ուած ձիաւոր թուրք, բոլորավին անժանօթ, և հաւերի երամի
տեղ ընդունելով այդ խառնաշփոթ բազմութիւնը, սկսեցին
կողոպաել, Խլեցին հրացաններ, փամփուշտներ և այլ տեսակ
զէնքեր: Խօթը հարիւր մարդ հնազանդութեամբ անձնատուր
եղան այդ կ աւագակեն: Սարսափի ազգեցութիւնից հայերը
ապուշ էին կարել և կորցրել էին ինքնաճանաչութեան զգաց-
մաւնքը:

Վերջապէս նիհարած, դալիացած հայերը հետզնետէ
հասան Բագլիկ: Զիւլգաղարով Մեհրալի և Համիդ բէգեսր ըն-
դունեցին հայերին թաշկինակները իրանց աչքերին քսելով:
Տեղաւորցը դոմերում, մարագներում և այլ տեսակ շինու-
թիւններում: Խսկ ներսէս և Գրիգոր քահանաներին, Ղահրա-
ման Գաթոյեանցին, Ղահրաման Տէր Աբրահամեանցին Սարդին
Գրեգորեանին, այլ և ուսուցիչ Գագիկ Տէր Առտուածատու-
րեանցին Մեհրալի բէգը տեղաւորցը իւր եղբօր—Համիդ բէգի
ընակարանում, տեղանակից անելով նրանց:

Հետեւեալ օրը շաբաթ, Կոյեմը. 26 Մեհրալի բէգի և միւս
բէգերի հրամանով մորթուեց մի երկու կով, որով կերակրեցին
ըուոր փախստական հայերին: Համիդ բէգը յանձնարարեց ներ-
սէս քահանային ցուցակադրել ըոլով հայերին, իբրև այն նպա-
տակով, որ իմանար թէ քանի հայեր են դիմել իւր օդնութեան:
Ցուցակով գուրս եկաւ մօտ 800 հոգի:

Առանց յանձնարարութեան չմնաց և Գրիգոր քահանան:
Մեհրալի բէգը սրան և Ղազար Աթոյեանցին ձի նստացնելով,
երկու հաւատարիմ թուրքի ընկերակցութեամբ ուղարկեց նազնի
ձորը՝ սրոնելու, գանելու և բերելու կորած, յետ մնացած,
մոլորուած հայերին: Ենքն էլ գնաց նրանց յետեկից, ըայց չի-
ջաւ ձորը: Միւս կողմից էլ հրաւերեց նոյն տեղը և Ալլահեաց
բէգին՝ իւր աւագ եղբօրը:

Տէր Գրիգոր Տէր Աքրամհամեանցը իջաւ ձուլը, ձայն տուաւ այս և այն կողմի վերայ՝ անտառի մէջ, որ դուքս գան նրա մօտ թագնուած հայերը և այդ միջոցին ընդառաջ գուրո եկան մի քանի թուրքեր, որոնք եկել էին որոնելու և դանելու այդ ձուռում ոպանուած և թողած իրանց աղքակից Զիազիան բէդի մարմինը, որի մասին խօսք եղաւ Նախընթաց գլուխներից մէկում։ Որոնուած թուրքերը հայերի անց չէին վստահանում իջնել ձորի խորքերը, ուստի ըռնեցին Տէր Գրիգորին և մահուան ոպառնալիքով պահանջեցին զնալ իրանց հետ և դանել զիակը։ Հնազգանդուեց քահանանան։ Եատ օրոնելուց յետոյ յաջողուեց գանել։ Զիազիան բէդի գիակը տեսնելուն պէս՝ նրա աղքակիցները վրէժմնդութեան յասումով լցուած՝ սըերը հանած կամեցան կտոր կտոր անել քահանային քադացիների փոխարէն։ Բայց քահանայի աղերսանքով և թուրքերից մէկի մէջնորդութեամբ հազիւ յաջողուեց կետնաք շնորհել քահանային։ Թուրքերի ստիպմամբ քահանան իւր ուսերի վերայ գուրու րերաւ Զիազիանի դիակը ձորից դաշտ . . . և ապա որոնելով գտաւ ձորում Դ հոգի կիսակենդան կանայք և երեխայք և որանց թւռում գտաւ մի ամսական դէն ձգած երեխայ, որ յետոյ յանձնուեց իւր ծնողացը և որ 1907 թուի սկզբին երկու տարեկան ազայ էր գարձել։

Գրիգոր քահանան իւր գտած կանանց և երեխանց զուրս ըերեց այն վայրը, ուր սպասում էին Ալլահեար և Մէհրալի բէկերը։ Մինչև այդ տեղ համանելլ քահանան գտաւ և մի տեղ ժողովեց ձորում և շատ մանուկ հայերի դիակներ։ Ճանապարհին նա հանգիպեց շատ կանանց և աղջկանց, որոնց թագուտեան տեղից գտնելով գերի էին վարում թուրքերը։ Ալլահեար բէդի միջամտութեամբ քահանան ազատեց գերութիւնից այդ կտնանց և աղջկանց և մինչև 18 հոգի տարաւ Ալլահեար բէդի կտրդագրութեամբ Քէշիշքեանդ գիւղը, ուր այդ բէդի մշտական ընակութիւնն է։ Քահանան սահպուած մնաց Քէշիշքեանդում այլ ևս երկար ամիսներ և չէր կարողանում վերադառնաւ իւր գերգաստանի մօտ, որ ստիպուեց, առանց քահանայի, ագլիքից գնալ փախստականների հետ դեգերելու օտարութեան և մուրացկանութեան մէջ նամշադինու և Ղազախի հազիւղերում . . .

Թափառական քադացիների համար այսպիսով ստեղծուեց և մի նոր ժամանակաւոր ընակավայր՝ Քէշիշքեանդ գիւղում՝ Ալլահեար բէդի անօրէնութեան ներքոյ։ Այս պատճականն ըան չէր, այլ նպատակաւոր։ Այդ ընակավայրը ստեղծեց ինքը Ալլահեար բէդ Զիւլդադարովը մի կողմից՝ հայերին պատապարեւ-

լով թուրքերի յարձակումներից և միւս կողմից՝ իւր անձնական ապահովութեան համար, ըստ որում Զարդախու զիւղի հայերը Բագայի աւերման վրէքը առնելու համար սպառնում էին յարձակուել և աւերել Քեշեշքեանզը՝ հաոցնելով նրա բնակիչներին բազացիների ներկայ վիճակին . . .

Ժ.

Հօյերի դրութիւնը Բազիկամ, Զիւլգադրովների մտսրութիւնը հայերին բաժանելու. Չու դեպի Պուլալի, Կաղիմ Խբաղուլյան օղի եւ նրա կալսպելը հայերին. Բադացիների վիճակը Շամսդինու հայ գիւղերում. Չու դեպի վերին Աղդան գիւղը. Հայերի դրութիւնը Քարվանսարա գիւղում եւ դարձր դեպի Բադան.

Իւր տան ընակիչ հայերին Բէօուդ աղան ցոյց տուեց մի ծծկեր մանուկ, որին, ինչպէս ինքն էր պատմում, քերել էր բագայից, նրա աւերման երկրորդ օրը, ուր գնացել էր նա իւր երկու օրդու հետ Բագան տեսնելու։ Մելիք Սերատեանցի տանը, երկու սպառնուած կանանց գիակների արանքում այդ մանուկը լալիս է եղել։ Բէզի տանը այդ մանուկը կերակրուում էր կաթի պատուկով։ Մնողները յայտնի չէին, որ քէզը վերագրարձնէր մանկանը, բայց կարծիքով նրա հայրը Դահրաման Յո-

հաննիսեանցն էր, որ այդ միջոցին նամշագինումն էր և այն-
տեղից գնացել էր Քարվանսարայ գիւղը: Բէօռւդ աղայի մօ-
տից հայերի գնալուց յետոյ այդ մանուկը արդէն մեռել էր:

Հայերը մնացին Այլիւռում էլի մի քանի օր և այդ ժա-
մանակ Բէօռւդ աղայի մօտ ձի առնելու եկել էր մի զինուու-
րական ոռուս, պօլիցիական ձիաւորների ուղեկցութեամբ: Նա
տեսնելով հայերի նեղ գրութիւնը և առհասարակ դպանց ներ-
կայ միճակը՝ հարց առաջարկեց Սարդիս Արաբաջեանին, թէ
ի՞նչ են մատղիր անելու այդ հայերը: Սարգիսը պատասխա-
նեց, որ այժմ իրանքնման են վանդակի մէջի թռչունին, որ
հնար չունենալով դուրս թռչելու, գլուխը շարունակ զար-
կում է վանդակի պատերին: Մենք էլ հնար ունենայինք՝ Կը
գնացինը այստեղից, ըստ որում քացի այն որ անձամբ նեղու-
թիւն Ենք տալի բեգին, վախճնում ենք, որ մեր պատճառով
մեղ ատող թուրքերը վնաս տան մեղ պատապարողին:

Յայտնուեց, որ զինուորական հիւրը Դանձակի ժանդարմ-
ների պետն է և պատուիրեց, որ պատրաստուեն վաղը իւր
հետ, Բէօռւդ աղայի ուղեկցութեամբ զնան Զագեամ կա-
յարանը: Բայց, որպէս զի սպանուած թուրքերի աղդակեցները
հազերին տեսնելով չժշնամանան Բէօռւդ աղային, յետոյ այս
կարգադրութիւնը փոխուեց: Ժանդարմների պետը խոստա-
ցաւ օգնել և ինքը գնաց Գանձակ:

Հետևեալ օրը զերմանական Անենֆելզ գաղութից եկան
35 կաղակ մի ուրեագնիկով, ժողովեցին հայերին դէպի երկա-
թուղին: Հաւ երեխայքը ցըտից ու քարերից պաշտպանուելու
համար փաթաթում էին իրանց ոտերը հին գին ձգած շորի
կտորներով, թաղիքով ևն: Բէօռւդ աղայի ըացոկայութեամբ
հայերը անհուն շնորհակալութիւն մատուցին աղայի կնոջը,
խնգրեցին հալալ անել կերած հացը ու ընկան ճանապարհ: Ամենից
առաջ գնում էր մի կաղակ, նրա յետեկից երեքը իրար
կողքի, մնացեալները շրջան կազմելով ներս առան հայերին:
Կանոցք և երեխայք այդ ոտպէին սկսեցին հեկեկալ և լալ, վա-
խենում էին ճանապարհի վասնգից: Նարժուեցին դէպի Զա-
գեամ կայարանը 4 վերտու հեռու: Համնելով մի թուրքի օրա
3—4 անից, ուրեագնի՛ր հրամայեց կազակներին հրացանները
պատրաստեն, բայց ոչինչ վտանգ չեղաւ: Ուրեագնիկը կաղակ
ուղարկեց թուրք պրիստաւին և ճանապարհի վերայ սարաժնիկ-
ներ կանգնեցրին: Ճանապարհին կաղակները երեխանցը հաց էին
քաժանում իրանց պաշտպահից:

Կայտանի պահապան զինուորների սպան կայտանի դահ-

Անուժ աեղաւորեց Հայերին և 6 հրացանաւոր զինուոր նշանակեց նրանց վերայի Բարի սպան շայով, հացով և մտեղէն կերպակուով կերպակը և թուրք խանութներում նուէր ժողովեց ու յանձնեց Հայերին 28 ոռութի, որից 2 ո. ծախուած էր շայի շաբարի վերայի Թուրք խանութպանները հաց կամ շաբար էին նուիրում, իսկ ուսու բանւորները ոտնամաններ էին բաժանում երեխանցը: Հետեւալ օրը պատահեց այն քերբարայը, որ ուղեկցել էր Արարաջեանին դէպի Զարդարալու: Նա մարթեց մի ոչխար և կերպակը Հայերին: Հայերը Բէռուդ աղայի տանը մնացին ուղիղ 21 օր:

Այդ ժամանակ երկաթուղու յայտնի գործադուլն էր և միայն մի գնացք էր շարժում կայարանապահ զինուորներին հաց մատակարարելու: Խւ ահա հէնց այդ գնացքով 6 զինուուրի հոկողութեամբ հայերին հասցըն Աղստաֆա և այս աեղից մի այլ ոպալի հոկողութեամբ նոյն գնացքով հասցըն Թիֆլիզ երեկոյեան 9 ժամին:

Թիֆլիզի կայարանը գործադուլի պատճառով լիքն էր զինուուրներով: Առուս սպան հայերին խուղարկեց զէնքի կողմից: Հայերն էլ սպանների գութը շարժելու համար յայտնում էին բադացի լինելը: Աւզում էին հայերին գուրս քշել կայարանից, բայց աղեստանցով մնացին դիշերը և նրանց պահում էին հայ զինուորները:

Առաւոտը պատահեց մի բադացի, եկաւ և Մեռուր քահանան, որ եկւոր հայերին շայով տաքացնելուց յեաց առաջնորդեցին դէպի Աօլուակ՝ Առրջանեանի տունը, ուր հաշարանն էր և ուր արդէն կային զանազան վայրերից հաւաքուած փախստական հայեր աւելի քան 300 հոգի:

1906 թուի յունուարի 3-ին բացուեց երկաթուղին և յունուարի 15-ին այս բադացիք ցրուեցին, ոմանը Հաւաքար կըսկզնոց մօա, ոմանք նամշագին և ոմանք Գանձակ և այս տեղերից կրկին Բադա:

ԺԲ.

Հաքիմեանի եւ Բատումիանի սպանութիւնը, Ալլանեար բեզր եւ Գրիգոր Բահանան, Վերջինի նամակը, Ալլանեար բեզի նամակը, Բադայի վնասների հարուեցուցակը: Ցիուր հանդես:

Վերը յիշատակուեց, որ Բադայի վախուական հայերի մի մասի համար ստեղծուեց էլի մի բնակավայր Քէշիշքեանգ գիւղում Ալահեազ ըէց Զիւլգադարովի հովանաւորութեան տակ:

Այդանք հաւաքուեցին մինչև 60 հոգի կրկնեա հայեր։ Կրանց պարագլուխն էր Գրիգոր քահանայ Տէր Աքրտհամբանցը, որի գերդաստանը տարագրութեան էր գնացել Շամշադինու և Դազագանի հայ գեւզերը։ Քէշիշքեանդի հայերի մեջամասնութիւնը այն երկնեա հայերն էին, որոնք գեսի էին բանուած մերձաւոր թուրք գիւղերում (Երմաշլու, Խըննալու և այլն) և որոնց Գրիգոր քահանայի միջնորդութեամբ ազատել և ժողովել էր Ալանեար ըէդ Զիւլգագարովիք։

Զնայելով այդպիսի հղոր պաշտամանին, որպիսին Ալլահեար ըէդն էր, վերջինիս հոգանաւորութեան ներքոյ եզաք հայերը այնքան էլ ապահով չէին։ Նրանցից Պետրոս Հաքիմեանց և Յոհաննէս Բատտումեանց Ակըլլանց Պետրոսի և Պլոնիկանց Խմանի հեա քաղցած լինելով գնել էին ջրադացից մի քանի ըուռ ալիւր և Նրանից հաց թխելու համար ծածուկ մոտել էին ծանօթ թուրքի տուն։ Գիշեր ժամոնակի ըադլիգ եցի երկու թուրք ըսնութեամբ և Նենցութեամբ ձեքքակալում են հայերին և տանելով Զագեամ գետի տփը, սպանում են Հաքիմեանին և Բաստումեանցին, իսկ միւս երկուոր մի հրաշքով աղատուում են։ Ոյս վրիժառութիւնը տեղի է ունեցել այն պատճառով, որ այդ սպանութեանը մի աղքակից սպանուել է Բագայի աւարի ժամանակ յայտնի չէ հայի գնատակից թէ թուրքի։

Այս բանը շատ զայրացրեց Զարգախուի հայերին և աւելի ևս գրգռեց նրանց Ալլահեար ըէդի դէմ, որ յանձն էր առել պատապարել քադացի թշուառ հայերին, ըայց չէր ապահովել նրանց կեանքը։ Թուրքերի յարձակումները ու սպանութիւնները հայերը համարում էին հետեւնք աղքեցիկ մարդկանց թելադրութեան։ Ծագքերի * թղթակիցները գովելով այդ առաջաւորներից մի քանիսին և պախարակելով միւսներին՝ աւելի հաստատում էին հայերի կասկածը։

Զարգախուի պաշտաման, լաւ կազմակերպուած սազմի խումը չէր ուզում ներել Ալլահեար ըէդին, որ հրաւիքուելով Բագր (գլ. Գ.), միամտացրել էր բադացիներին, խոստացել էր իւր հովանաւորութեան տակ տանեւով՝ անվտանգ պահել, ըայց չէր կարողացել կատացել իւր խոստումը։ Նրա այս վարժանց համար և, «ատամն ընդ ատամն» ոկզունքով առաջնորդուելով՝ հայկական խումը յաջող սոսէ էր որոնում պատճեռու այդ և միւս ըէգերին։ և յէր թագցնում իւր զիտաւորութիւնը։ ուստի Ալլահեար ըէդը ամեն կերպ աշխատում էր հաշտութիւն կայացնել

* Արշարու, 1906 թ. № 2. Յունուարի 4-ը։

** Նոր—Գար 1906 թ. № 1. Յունուարի 6-ը։

չարդախլուեցոց հետ և այդ նպատակի համար ըէղը հաճութեամբ գերիներ էր փրկում, ժողովում էր նրանց իւր շուրջը, թաղել էր տալիս Բագայում ցրուած հայ ոպանուածներին և Դրիգոր քահանային, իրու կարեսը մարդու, պահում էր իւր մօտ և զետպանութեամբ ուղարկում էր չարդախլուեցոց մօտ:

Չարդախլուեցիք չէին ցանկանում, որ փրկուած հայերը մնան Քեշիշքեանգում կամ միւս ըէկերի մօտ և վայելեն նրանց մարդասիրութիւնն ու հօգանաւորութիւնը: Թող գնան հայ գիւղերը, թող չարքաշ կեանք փարեն, միայն թէ չմնան ըարերար ըէկերի մօտ: Եւ այն հայերը, որոնք շարունակում էին մնալ ըէկերի մօտ, որոնց թւում և Տէր Գրիգորն ու նրա եղբայր Վահրամանը և շատերը, կասկածելի էին համարեւում չարդախլուեցոց աշքաւմ:

Երբ Գրիգոր քահանան զեսպանութեամբ եկաւ չարդախլուեցոց մօտ, նրանից պահանջեցին, որ վերադառնույ Ալլահեար ըէղի մօտ և զուրս ըերի Քեշիշքեանգից հայերին: Արդարեւ Ալլահեար ըէղը չընդդիմացաւ, արձակեց 56 հայերից 27-ին գէպի Ղուլլալի, 23-ին դէպի Զարդախլու, իսկ մինին միայն պատանդ պահեց իւր մօտ, այդ Գրիգոր քահանան էր: Վերջինս, իրու ըէղի դեսպան, պատմեց Զարդախլում հատաքակաց խորհրդի առաջ գործերի գըութիւնը և խնդրեց ներկայացուցիչներ ուղարկել Ալլահեար ըէղի մօտ, փոխադարձ հաշտութիւն կայացնելու: Ըստրուեցին և գնացին Քեշիշքեանգ պ. Մանասեանցը և տանուտէր Պետրոս Բաբաջանեանցը, ուղեկցեց և Տէր Գրիգորը:

Այդանդ թէև առերես հաշտութիւն կայացաւ, բայց ոչ չարդախլուեցիք հանեցին իրանց որտից սիսր, և ոչ Ալլահեար ըէղը փարատուեց ուրտի ահից: Գրիգոր քահանան շափից գուրս աշխատում էր փոխադարձ հաշտութեան օդ տին, որպէս զի իւր անձն ազատի և գնայ իւր գերդաստանի մօտ: Բայց Ալլահեար ըէղը յամառութեամբ պահում էր նրան: Ուղարկեց քահանային Բագայի ուերակները, որ ցրիւ գիտիները ժողովի և քրիստոնէական ծիսով թաղի: Այդ էլ կատարեց քահանան, ըայց էլի չկարողացաւ աղատութիւն գտնել: Քանիցո քահանան աղերսանքով, մինչև անդամ արտասուրն աջքերին դիմեց ըէղի գթութեանը, խնդրեց աղատութիւն, բայց ըէղը մնաց անդրդուելի: «Մինչև անդամ լաց ու սուր էի անում, որ ազատի (ըէղը), չեղաւ», գրում է հեղինակին քահանան իւր նամակի մէջ 1907 թուի յունիսի 18-ին:

Անտանելի էր քահանայի գըութիւնը: Մէ կողմից գերդաստանի անյայտութիւնը տարագրութեան մէջ, միւս կողմից իւր կաշկանդուած կացութիւնը նէղը մօտ, նըլըլը կողմից այն

յամառ կասկածը, որ ունէին նրա վերաց Չարդախունի և այլ տեղի հայերը; Խոկ Ալահեար բէզը մեծայոյս էր, որ քահանայի միջնորդութեամբ ինքն իրան կարող է ալզարացնել Գանձակի ու Թիֆլիզի հասարակութիւնների առաջ, որոնց արդէն լրագորութիւնից յայտնի էր նրա կատարած քաղաքականութիւնը:

Այս ուղղութեամբ Ալահեար բէզը վերջին փորձը արաւ նա գերգաստանով հանդերձ առժամանակ տեղափոխուելով Թիֆլիզ՝ տարաւ իւր հետ և Գրիգոր քահանային, որ սա տեսակցի տեղական հայ և ոռւս խմբագրութիւնների հետ և անձամբ վկայի բէզի ազնւութիւնը, մարզասիրութիւնը և գթարաւութիւնը: Ստիայն քահանան չվատահացաւ այդ անել: Միայն «Նոր - Գարե» մէջ 1906 թուականի յունուարի 6-ին № 1 նա հարաւարակեց Բագայի աւերման մասին նամակը, որի մէջ գովասանք շէր ինսայել Զիւլգարով բէզ երի և առանձնապէս Ալահեար բէզի մասին:

Նա ի միջի այլօց գրում է.

«... Բէզը (Ալահեար) գնում է Զադեամ կայտան, հաւաքում է բոլոր շրջակաց ընակչութեան միջի իշխաններին և բէզերին, խնդրում է չկոռուել հայերի հետ և մանաւանդ Քաղաքի վերաց չյարծակուել. բոլորն էլ երգւում են, խոստանալով որ Բաղադրիչ վերաց չեն գնալ: Միայն խնդրում են, որ բէզը գնոյ Գանձակ հայերին և մուսուլմաններին հաշտեցնելու. Զիւլգարովը հաւատալով իւր կրօնակեցների երդամանը, գնում է Գանձակ: *** Միւս օրը, ամսի (Նոյեմբեր (5 թ.) 23 էլե շրջապատեցին (Բոդա) և մի քանի զրօշակ ձեռքներին՝ սկսեցին հրացանաձգութիւն. Այդ գիշերը (Նոյեմբեր (5 թ.) 23) հազիւ կարսկացաց 500 հոգի ազատել և փախցնել գէպի Համիդ բէզ, Մեհրալի բէզ և Աղիլ բէզ Զիւլգարովիների տուն: Այստեղ մեզ սիրով ընկունեցին. տեսնելով թշուառներիս դրութիւնը, նրանք էլ էին արտասուք թափում մեզ հետ: Ցիշեալ Զիւլգարովիները մորթեցին երկու պարարտ կով և կերակրեցին բազմաթիւ ժողովրդին:

«... Միւս կողմէց զուըս եկաւ Ալահեար բէզ Զիւլգարովը մի քանի վիրաւոր կանանց հետ՝ դրկած մի 15 օրական մանուկ, որի մայքը չկար: Բարեհոյք բէզերը սրանց դրութիւնը տեսնելով՝ լաց էին լինում կանանց հետ: Մի քանի վիրաւոր կանանց և մանկանը տարաւ Ալահեար բէզը, իսկ 200 հոգուն տարաւ Համիդ բէզը: Մի քանի օր նրանց լաւ կերակրելուց յետոյ՝ ուղարկեցին նամշաղինի վիճակի Դուլալի գիշերը ... Ալահեար բէզ Զիւլգարովը իւր տարած մանկանը յանձնեց իւր կնոջը և պատուիրեց լու պահել, մինչեւ մօրը

գանի: Յարեխիղը խանումը սկսեց կայի կոթող պահել մինչեւ 16 օր: Պէտք էր տեսնել, թէ բէդի ազջիկներն ինչպէս էին մանկանը գրկած համբուրում, մտնկանն անուանեցին Կարապետ: Վիրաւոր կանանց վէրքերն ինքը խանումն էր լուանում և իւր աղջկիները գեղ էին դնում և փաթաթում: Երեք շաբաթ պահելուց յետոյ նոր շորեր հագցրին և ուղարկեցին Չարգախ-լու գիւղը»*:

Այն, ինչ որ Դրիգոր քահանան յիշատակում է իւր նամակի այս կտորների մէջ, արգէն վերելք բացատրուած է պատմութեան ընթացքում: Տեղեկութիւնները հաւաքուած են ըռչորովին ուրիշ աղքիւթներից և ընթերցազին կմնայ համեմատել այս աղքիւթները Դրիգոր քահանակի աստածների հետ:

Այս նիւթի վերաբերութեամբ մենք ունենք և այլ բացատրութիւններ: Դրանք իւր, Ալմահետը բէդի խօսքերն են, որ ապադրուած են նրա նշանաւոր նամակի մէջ Տիֆլիսկի Լիստու ուսուերէն թերթում հրատարակուած և որի թարգմանութիւնն ահա այս է:

Պարոն Խմբագիր

Խօս Օօօրենութիւն արտասպաւած էր Տիֆլ. Լիստութիւն 1906 թու ի 18-ու մ, թէ ամսի 21-ին հայերից մի պատգամաւորութիւն է ներկայացն Փոխարքայի վիճուուրական մասի օկնական գեներալ Լյուտենանտ Մալամային և նրան ներկայացրել է Ղազախի գուառի Քարվանսարայ գիւղից, յունուարի 20-ին ստացած մի հեռագիր: Հեռագրի մէջ տոսւած է, որ Խըննալուից մի քանի թուրք գերի են հայերի մօա, իսկ կալուածատէր Ալ-Ղազախու բէդ Զիւլգագարուի մօա գերի են քահանայ տէր Արահամեանցը և աղբոնոմ ** Դանիէլեանցը, գիւղացի մոշագի Հասան Զիւլգագարուի մօա գերի են Աւետիս Աւենեանցը իւր գերգաստանով 5 հոգուց և Դրիգոր Աբրահամեանցը նոյնպէս իւր գերգաստանով: Պատգամաւորները խնդրել են միջոցներ գործ գնել ապատել դերիներին, այլ և փոխանակել գերիներին:

Խնդրուեմ եմ այս իմ նամակը տպագրէք մօտուոր համարում գործը լուսաբանելու նպատակով:

*Բարգա դիւղն աւերելուց յետոյ Զիւլգագարուի եղբայրների տանը հաւաքուեցին աւելի քան 200 բազացի փախուականներ, սրանց մէջն էին քահանայ և Տէր Աբրահամեանցը, Տէր Յարութիւնեանցը, ուսուցիչ Աստուածատու ըեանցը, Ղահրաման տէր Աբրահամեանցը, Արքիս Գրիգորեանցը և Ղահրա-

* Խոր-Դար 1906 թ. յունուարի 6, № 4.

** «Ղահրաման» եւ ոչ Ազրոնոմ (պիւղատնտիւ), Խանօթ Անդինակի: Տիւ նահի Մշակ № 13 յունուարի 22—1906 թ. հիւաղիր:

ման Դանիելեանց։ Մի քանի օրից յետոյ, երբ մենք ու զարկում էինք հայ փախստականներին Դուլալի հայ գեղղը, բահանայ տէր Յարսւթիւնեանցը գնաց փախստականների հետ, իսկ յիշ շետներից միւսները չկամեցան գնալ այնտեղ։ Աւսուցիչ Առատուածատուրեանցը, Ղաջրաման Տէր Աքրահամեանցը և Սարդիս Դրեգուեանցը յանկացան գնալ Դանձակ, որովհետեւ առաջինի ժնողնեւն այնաեզ են, իսկ միւս երկուոր ունեն այնտեղ առեւարական գործեր։ Որո՛ Հետեւ Ժամանակին անհանգիստ էր և նրանց ուղարկելու վատանգաւոր, ուստի առաջաւց նամակ ուղարկեցինք Գանձակ Նրանց ժնողներին, որ անհանգիստ չլինեն։ Դրանից յետոյ Երկամթուզու գործագուլն եղաւ, որից սակառած նրանք բաւական ժամանակ մնացին մեզ մօտ և ապա յաջող Ժոմանակ Նրանք ուղարկուեցին Դանձակ յուսալի պահպանութեան տակ։ Խոկ քահանայ տէս Աքրահամեանցը իւր գերգաստանն ուղարկելով Դուլալի, ինքը մնաց իմ տանն այն նպատակով, որ թաղի Բադայի սպանուածների մարմինները, որոնի և դանի այն հայ փախստատիաններին, որոնք թաղնուել էին անտառի խորքերում, այլև գնաց Զարդախլու, ուր ընտելում էին հայ—թքական ընդհարումների դլխաւոր սպազողները, հեղինակաւոր կերպով նրանց քարոզելու համար, որ զոնէ սպագայում նոր ընդհարումներ չյառաջացնեն, որ երկու կողմի համար էլ կորստալ եր է։

Ալլյս նպատակի համար Տէր Աքրահամեանցը երեք անգամ գնաց Զարդախլու, բայց տարարագքաբար նրա աշխատանքը կորաւ իզուր։ Նրա հոգուական խօսքը չունեցաւ կարեւոր ներգործութիւն և հարկաւոր ազգեցութիւն։ Որոնից յետոյ թուրքերի և հայերի յարացերութիւնը Դաղախի գաւառում խիստ լարուեց, ուստի նա չկարողացաւ գնալ Դուլալի և մնաց ինձ մօտ մինչև յունուարի 25-ը։ այժմ նա Թիֆլիզումն է և խօստացաւ մտնել Խմբակպատուն և մանրամասը բացատրել, թէ ես նրան ինչպէս գերի եմ պահել։ Խոկ Դահրուման (և ոչ Ազանոմ, որպէս տպագրուած էր լրագրում) Դանիելեանցը ընակեւում էր ինձ մօտ ոչ միտյնակ, այլ 7 հոգի գերգաստանով։ Ես նրանց ուղարկեցի Զարդախլու, որտեղից նրանք միքանի օրից յետոյ նորից վերադարձան ինձ մօտ, բերելով իւրանց հետ և 8 հոգի բակացի համագեւզացիներ։ Թէ ինչի նրանք վերադարձան ինձ մօտ և թէ ինչպէս էին վարուել նրանց հետ չարգախլուեցի եղբայրակիցները, թող ասեն իւրանք, թէն նրանց վերագառնալն ինձ մօտ ինքն ըստ ինքնան տպացոց է։ Դանիելեանցի հետ եկած 8 մարդկանց, նրանց խնդրելով, ես ուղարկեցի Դուլալի։ Խոկ Դանիելեանցն էւր գերգաստանով ընակւում

Է ինձ մօտ մինչև այժմ Մաշակի Հասան Զուլգաղարով անունով
մարդ չկայ ամըողջ Անդրկովկասում, ուրեմն չէին կարող լինել
Կրա մօտ գերի հայեր, ինչպէս հաղորդուած է Տիֆ. Ալտօք
№ 18 թերթում:

«Վերոյիշեալ տողերից երեսում է, որ ինձ մօտ ոչ եղել են
և ոչ էլ կան գերի հայեր և որքան ճշմարիտ են այս հայորդած-
ները և թէ եղբարք Զիւլգաղարովները ո՞ր աստիճանի վերա-
բերմունք ունէին զէպի փախոտական բագացի հայերը, ես
գիտում եմ այս նամակի մէջ յիշուած հայերի խղճմտանքին և
արժանապատութեանը և ինգրում եմ նրանց պատառխանել
այս հարցերին ապագրութեամբ: Եւ որպէս զի յիշեալ անձնա-
ւորութիւնները միջոց և կարսութիւն ունենան տալ անհրա-
ժեշտ պատասխան, խնգրում եմ անդրկովկասեան լրագրների,
մանաւանդ հայ լրագրների խմբագրութիւններից արտադպել
այն այս նամակս:

«Բոլոր տաճներից լրագրիդ ընթերցողները և Տիֆլոսկի
Ալտօք խմբագրութիւնը հեշտ կարող են համոզուել, որ ոչ
ինձ մօտ և ոչ իմ եղբայրների մօտ գերի չեն եղել ոչ քահանա-
ներ, ոչ գիւղատնտեսներ, այլ որա մէջ յիշուած անձնաւորու-
թիւնները և նրանց գերդաստանները դատել էին և ոմանք նրան-
ցից մինչև այժմ էլ գանում են ապաստարան և կարելոյն
չափ պաշտպանութիւն իմ յարկի տակ:

«Փամանակ է վերջ տալ արիւնալից կոկիւներին: Կին ամու-
սիններին, մայրերին, երեխանց քաւական է գառն արտասուք
թափել: Նրանց ասդարացի արտունջը անփոխարինելի կորուստ-
ների պատճառով աղաղակում են հասարակութեանը դնել իւր
հեղինակաւոր արգելքը կովկասի երկու ազգութիւնների արիւ-
նոտ կոկիւը այլ ևո շարունակելու: Փոխարքայի մայրաքաղաքի
հասարակաց կարծիքը պարաւոր է իւր վրայ առնել արիւն-
հեղութիւնը դադարեցնելու սկզբնաւորութիւնը: Արիւնահեղ
ընդհարումները յառաջ բերադ պատճառները բացարելու
համար դու մարւած հայերի ու մուսուլմանների լիազօրների հա-
մաժաղովը յարմաք առաքէ է զրա համար: Անհրաժեշտ է մայ-
րաքաղաքի հասարակութեան միացումը նրա կարծիքի և ցան-
կութիւնների արտայացտիչի—մամուլի հետ և իշխանաքար
յայտնել երկու ազդութիւնների լիազօրներին, թէ ժամանակ է
կանգ առնել արիւն թափելու, ջնջելու ամենաբնտիր մարգկանց,
կործանելու մի շարք սերունդներով ձեռք բերած կարողութիւնը:
Հասել է ժամանակը ձեռք զարկել ուրիշ կործերի, զեմսավային,
ընտրողական, որ նոյնպէս շատ կարելոր է, եթէ շասենք՝ թէ
ամենազլիսաւ որն է բժշկելու այն ժանր վերըերը, որ հոսցըուած

են ամըսողջ վեռևարքայութեանը քաղաքական և ցեղական խռունակութիւններով»:

«Ալլահեար բէդ Զիւլգագարով»:

Եթէ ընթերցողն ուշի ուչով հետեւել է նկազագրութեանս ընական ընթացքին, եթէ մտարերում է այն յարաքերութիւնը, որ ունեցել է Ալլահեար բէդը Բադայի աւերումից առաջ, աւերման ժամանակ և յետոյ, նա կտեսնէ, թէ ի՞նչ տարբերութիւն կայ բէդի նամուկի բովանդակութեան և խոկական փաստերի համեմատութեան մէջ: Երկասիրութեանս հեղինակը չէ ցանկանում համեմատական քննութեան ենթարկել Պ. Զիւլգագարովի նամակի բովանդակութիւնը, որովհետև նա աշխատել է լինել անկողմնապահ, աքնել է զուրո բերել միայն փաստեր և ապա կարելոյն չափ լուսաբանել աեղական բէդերի դրական և բացասական յարաքերութիւնները թուրք—հայկական ընդհարումների ժամանակ Բագայի սահմանում:

Ալլահեար բէդի վերը բերած նամակի կողքին աւելորդ չէ դնել նոյն այդ բէդի և նրա եղբօր Մեհրալի բէդի ճառը, որ պարսները Վազախի գաւառապետ Առնոլի ընակարանում, 1905 թուի սեպտեմբերի 11-ին ճաշկերութեան և կենացների ժամանակ, Վազախի աւերումից առաջ, արտառանել են, թէ «իրանցում ամեն ինչ խաղաղ է և եթէ իրանը չցանկանան, չե կարող թուրքերի կողմից ընդհարում առողջանալ»²:

Իոկ յետոյ, ընդհարումները արգէն տեղի ունեցան և զբակացութիւն . . .

Սորանով վերջացնում եմ Յադա գիւղի աւերման պատմութիւնը և նրա ժողովրդի ցրիւ գալը: Հետեւեալ տարին, այն է 1906 թուականի գարնանը հալածուած, ամէն բանից զրկուած ժողովրդի մեծ մասը սակաւ առ սակաւ սկսեց վերագառնալ աւերուած հայրենիքը՝ կրկին նորոգելու այն ժողովրդի մի փոքր մասը միայն մնաց ցանսւցիք հայ գիւղերում:

Կովկասի բարձր իշխանութեան կարգագրութեամբ հաշտարար միջնորդ Խվան Պետրովը 1906 թուին Ապրիլի 10—25-ը Բագայի աւերակներում սկսեց ցուցակագրել ըոլոր գիւղի կրած վնասի քանակութիւնը, որ ինչպէս յիշատակուած է Ա. գլխում, կազմում է երկու միլիոն երկու հազար երեք հարիւր ըութիւն: Ցուցակագրութիւնը կազմելու համար Պ. Պետրովը զանազան հայ գիւղերից հաւաքել էր մոտ 150 բաղացի հայեր և

² Սրշալոյս № 44—1905 թիւ. սեպտ. 46, Նամ. Զ. բան. Ապրեսեանցին

բաղմաթիւ թուրքեր Խթմաշլուէց, Խընստլից, Վերին և Կերպին
Այլուէց, Թաթալուէց և Կոյլասարից:

Բագայի աւերումից յետոյ այս առաջին անդամն էր, որ
երկու դրացի թարմ ոսոխները հանգիպեցին իրար սոյն այս
թուրքերի ձեռքով քարուքանց արած, աւերակ դարձրած զիւ-
զում: Ֆանօթ թուրքերը չքմնել ձեւանալով մօտենում էին հա-
յերին և արգարանում ատելով «Մարդկմալարն էօվը Ալլահ
ելաբորն» (վաս մարգկանց տունը Աստուած քանզի):

Եւրաքանչիւր երեկոյ թուրքերը վերագառնում էին իրանց
դիւղերը, իոկ հայերը մնում էին իրանց աւերակներում: Ոչինչ
չունէին ուժելուց Գանձակից ստացուած մի կտոր աւելուից հա-
յերը խմոր էին շաղախում պաղ ջրով (եռացնելու աման չկար)
և երկաթէ տանիքից մնացած թիթեղի վերայ և կամ կոտրած
կաւէ ամանի յատակում թխում:

Որովհետեւ հայերը Բագայի ջնջումից յետոյ առաջին ան-
դամն էին եկել այսուեզ, ուստի ձարերում և խորչեցում ցանու-
ցիր եղած սպանուածների և մեռածների մարմինները ժողովե-
ցին ամփոփելու: Դիակներից, փափուկ մասերը թռչունների և
գաղանների կերակուր գառնալով, միայն կմախքն էր մնացել:
Մեծ գժուարութեամբ էին ճանաչում հանգուցեալներին: Որ և
է շորի կտոր, գուլբա կամ ոտնաման նշան էր լինում ճա-
նաչելու: Ճանաչուածներին թաղում էին առանձին, իոկ չճա-
նաչուածներին թաղեցին միասին մի շիրմի մէջ: Թաղման տիսուը
հանդէսը կատարուեց 1906 թուի Ապրիլի 14-ին:

Գերեզմանատան մէջ նկատելի էին շատ գերեզմաններ բա-
ցած և կրկին ծածկած: յարձակման սպասելու օրերում ոմանք
բագացիք աշխատում էին թագցնել գետնի տակ իրեղէնները:
Սրանց թւում Սիմոն Ազրիեանցը իւր խանութիւ ապրանքը կա-
պոցներով իրակ հանգուցեալ թագել էր գերեզմանատանում,
ապա երբ ծածուկ հանել է, թուրքերը նկատել են և ձեռքիցը
խլել: Սրանից յետոյ արդէն սկսել են բորենի գառնալ և գերեզ-
մանները քանդել Միայն դիակներ գտնելով՝ նորից ծուծկել են:

Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

Մինչև այս կէտը խօսուեց Բագա գեղիք միմիայն աւեր-
ման և ընակչութեան ցրիւ գալու մասին, բայց երկբայել
չէ կարելի, որ հալածուած ժողովուրդը նորից կհաւաքուի իւր
հին գեղիք, նորից կաքնի, կճղնի, կլարի իւր ոպառուած ուժե-
րը և տարիների ընթացքում նորից կշէնացնի իւր հայրենիքն ու

ծննդավայրը։ Ատկայն հորիաւոր չէ գոհանալ, միսիթարուել միայն որանով։

Առաջին անգամը չէ, որ Բագան ենթարկելում է աւերման և աղեակ։ Եթէ Բագան գոյութիւն ունէր տառներեքերրդ գաբում, նա իւր հարեան նամքօրի հետ միանուագ պէտք է ենթարկուած լինէր աւերման թաթարների առպատակութեան ժամանակ չ։ Նըանից յետոյ էլ պէտք է աւերուէր Կովկասեան լեռնական հրոսակների ձեռքով, նոյնպէս և Աղամամադ խանի ժամանակ։

Աւանդութիւնից և անգամ ժամանակակից ականատեսների ըերանացի վկայութիւններից յայանի է, որ 1826 թուի գարնանը, Ռուս-Պարսկական պատերազմի սկզբում թշուառ Բագան էլի ենթարկուել է Երեանի Սարդար՝ Յիւսէին խանի սարբազների առպատակութեան։ Աւերուել է գիւղը, ընակիցներից շատերը սպանուել են, շատերը ցրուել են, կանաքը, աղջկունք և երեխայք գիրի են տարուել։ Բագացի Բեղատ մականուանեալ Յակոբ քահանան, Երկաթէ շղթան վիզը ձգած (գերի գնացողի նշան) մի ամբողջ տարի մուրացկանութեամբ ժողոված դումարով հազիւ կարսցացել է ազատել գիւղութիւնից իւր կնոջը և երկու դումարներին։

1826 թուի աւերումը և սպասելի էր և ընական, որսվհետեւ գիւղը մօտիկ էր պատերազմի դաշտին և տեղական թուրք տարրը ուղեցոյց և առաջնորդ էր սարբազներին։

Դրանից 80 աարի յետոյ, 1905 թուին Բագան նորից ենթարկուեց աւերման, այն էլ ոչ թէ օտարահպատակ սարբազների ձեռքով, պատերազմի միջոցին, այլ գրացի աճնաներից։ Ինչպէս 80 տարի յետոյ, Նոյնպէս և 80 տարի առաջ գիւղի հարստութիւնը կողոպտուեց, մարդիկ սպանուեցին, իգական սեռը ու մանուկները գերի գնացին։ Աղէտները Բագային խրատական չեղան։ 80 տարի առաջ և յետոյ ինքնաճանաչութիւնից զուրկ ժողովուրդը մնաց նոյնը։ Նա 26 թուին զէնքի փոխարէն հոկումն էր կատարում եկեղեցում Բեղատ տէր Յակոբի ձեռքով։ Նոյն հոկումը կատարուեց և 1905 թուականին։

Զունեցաւ այդ ժողովուրդը այնպիսի ինքնաճանաչութիւն և հասարակաց կազմակերպութիւն, որ անակնկալ վտանգի ժամանակ կարսցանար ինքն իրան պաշտպանել կամ եթէ մեռնելու էր, թող մեռնէր զէնքը ձեռքին . . . Ինքնապաշտպանութեան գործում 26 թուի Բագացիները ապաւինել էին միայն Աստուծուն, իսկ 1905 թուի Բագացիները ապաւինել էին և Աստծուն

* Իլիրակոս վարդապետ Գանձակեցի, Վանեատիկ 1865. դլ. ԵԱ. էջ 428.

և Աղանձնար բէզ Զիւ Լգադարութին . . . երկու տնդամն էլ կորըս-
տեան մատնուեցին:

Բագային զրացի Զարդարթին դեւզի հայերը 1905 թուի
յարձակումների ժամանակ պաշտում էին Աստծուն, գիտէին և
Աղանձնար բէզի տեղը, բայց նրանց ապաւէնն էր «սահման-
քաջաց՝ զէն իւրեանց» և կորստեան չմատնուեցին:

1800 թուականին չէր կարելի գուշակել Բագայի 26 թուի
աւերումն, ինչպէս վերջին թուականին անկարելի էր գուշա-
կել 1905 թուի ազէտը: Հետեւըար չէ կարելի դուշակել և ա-
պագայի արհաւերքը Սակայն մի հասարակութիւն, իրքն մի
ամրողութիւնն կազմուած մարդկութին էակներից և ոչ ան-
քան անասուններից, պարտաւոր է իւր գոյութիւնը, գոյքը և
պատիւը պահել և պաշտպանել իւր ռեփական միջոցներով և
իւր հաւաքական համարակական ոյժերով, որի համար էլ հար-
կաւոր է կրթել՝ նախապատրաստել սերունդներ՝ գործելու այդ
ուղղութեամբ:

Բայց որովհետեւ երկարագոյն միջոցներում սերունդները
կարողանում են մոռանալ մըրկալից անցեալը, ուստի սոյն աշ-
խատութիւնն իւր ըովանդակութեամբ Բաղայի ժողովրդի հա-
մար թող լինի յուշարա:

Եթէ առաջական ազգային պատճեն տակ ունեցած առաջա-
պահութան տակ ունեցած առաջապահութան առաջա-

Եթէ առաջական ազգային պատճեն տակ ունեցած առաջա-
պահութան տակ ունեցած առաջապահութան առաջա-
պահութան տակ ունեցած առաջապահութան առաջա-
պահութան տակ ունեցած առաջապահութան առաջա-

